

АМИРЯН СЕЙРАН

Кандидат психологических наук, доцент кафедры “Общей психологии” ЕГУ, заведующий НИЛ “Личность и профессиональная деятельность”, кафедра “Общей психологии” ЕГУ

МУРАДЯН Е. Б.

Кандидат биологических наук, старший научный сотрудник НИЛ “Личность и профессиональная деятельность”, кафедра “Общей психологии” ЕГУ

ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ЛИЧНОСТИ К ТРАНСФОРМИРУЮЩЕМУСЯ ОБЩЕСТВУ

Ключевые слова: *психологическая адаптация; системная социальная адаптация; копинг-поведение; технологии социальных коммуникаций; идеологизацию сознания*

Изменяющееся общество, ускорение мирового развития – характерные черты современности. Современное, постиндустриальное, информационное общество находится на пути усложнения, роста собственной многоликости и многогранности, ведущих к изменению его системной организации.

И в значительной степени данная тенденция обусловлена уровнем развития технологий социальных коммуникаций, которые наряду с духовным и материальным развитием обуславливают прогресс человеческого общества.

Одним из наиболее актуальных вопросов, связанных с глобальными изменениями в жизнедеятельности общества, является понимание влияния специфики развития общества на индивидуальное развитие человека с точки зрения его психологической адаптации к этому обществу.

Так, усложнение социальной среды за счет появления новых видов деятельности, модернизации ранее существующих, ускорения жизненного ритма, роста информационных перегрузок, - все это вкуче предъявляет особые требования к человеку, к его психическим ресурсам.

В психологии принято считать, что адаптация к внешней среде идет через развитие регуляторных возможностей психики. Согласно Мясищеву, психическое - это, прежде всего, система отношений, а обеспечение здоровой психики связано с особенностями взаимосвязи и взаимодействия личности с внешним миром (Баевой 2006). Таким образом, адаптация человека связывается, в некоторой степени, даже отождествляется с успешностью взаимодействия человека на уровне коммуникации с другими людьми. Это один из важнейших факторов осуществления так называемой реальной адаптации.

Адаптацию рассматривают как процесс активного приспособления человека к условиям социальной среды. Причем осуществляться этот процесс может различными способами (Реан 2008):

- 1) активным воздействием на социальную среду, направленными на ее преобразование;
- 2) принятием норм и ценностей, характерных для данной среды;
- 3) использованием обоих перечисленных стратегий.

Также социальную адаптацию рассматривают как результат процесса приспособления к среде, т.е. в данном случае речь идет об отождествлении адаптации с определенным равновесным состоянием личности со средой.

Адаптацию можно рассматривать как поведение личности в рамках социально-значимых норм, направленное на достижение определенного социально-ролевого положения в обществе за счет осуществления общественно-полезной деятельности.

Таким образом, процесс адаптации обеспечивает состояние адаптированности.

В качестве возможных механизмов поведения личности, позволяющих ей психологически адаптироваться к стрессовым воздействиям социальной среды

рассматривают механизм защиты и механизм копингов (Маликова, Михайлов, Соломин 2008)

. Причем в качестве адаптивных форм поведения рассматривают копинг-стратегии или стратегии совладания. Копинг-стратегии определяют как зрелое, гибкое поведение личности, направленное на гармоничное взаимодействие со средой. Подобное взаимодействие обусловлено:

во-первых, нацеленностью личности на разрешение проблем в долгосрочной временной перспективе, т.е. человек разрешает проблему так, что повторное ее возникновение в ближайшее время становится маловероятным;

во-вторых, по характеру инструментальной направленности, копинговые стратегии обеспечивают не только личностный комфорт на уровне “самоуспокоения”, но и направлены на изменение самой среды, социальных взаимодействий, т.е. человек активно пытается разобраться в проблеме с привлечением всех возможных ресурсов (как внутренних, так и внешних), пытается урегулировать межличностные коммуникации.

В-третьих, с точки зрения функциональной значимости, копинговые стратегии обеспечивают гармонизацию взаимоотношений между средой и личностью, межличностные коммуникации, благодаря чему регулируется также эмоциональное состояние человека;

В-четвертых, копинг-поведение базируется на рефлексии, активном поиске причин возникновения проблем, анализе ситуации, нахождении возможных продуктивных путей разрешения проблем.

На сегодняшний день копинг идентифицируют с приспособляемостью, проявляющейся в адекватности реагирования организма на внешние воздействия; в развитии мощной мотивации в отношении сопричастности к социуму; в способности личности поддерживать психическое равновесие.

Таким образом, о копинг-поведении можно сказать следующее:

А) охарактеризовать его как активное, гибкое, пластичное, зрелое, рациональное и реалистичное;

Б) рассмотреть его в качестве сознательной стратегии преодоления сложных ситуаций с целью адаптации.

Практически копинг-поведение следует рассматривать как обязательное условие для осуществления успешной адаптации.

В этой связи более подробно остановимся на стратегиях поведения, связанных с когнитивной, эмоциональной и поведенческой сферами.

Предлагается выделять следующие виды копингов (Маликова, Михайлов, Соломин 2008: 119):

1. в когнитивной сфере – отвлечение, переключение, принятие ситуации как неизбежной, поиск необходимой информации для объяснения этой ситуации и ее последствий, придание значения и смысла происходящего;
2. в эмоциональной сфере – отреагирование чувств: переживание протеста, злости, временное недопущение чувств, принятие ответственности, пассивное сотрудничество, самообладание и т.д.
3. в поведенческой сфере – уход в работу, проявление альтруизма, компенсация за счет удовлетворения каких-либо собственных желаний, конструктивная активность, активное сотрудничество в изменении ситуации, поиск поддержки.

Процесс активизации копинг-поведения обусловлен когнитивной оценкой личности того или иного события как нарушающего равновесие между человеком и средой, а успешность действий по совладанию зависит от копинг-ресурсов личности (физические, социальные, психологические, материальные).

В этом ракурсе, на наш взгляд, понимание *психологической* адаптации личности связано:

Во-первых, с «адаптацией по внутреннему критерию» (Реан 2008), речь идет об односторонней, неполной, но вполне возможной форме адаптации, когда на первый план выходит не столько социально-нормативная адаптированность человека, а его

самоощущение, т.е. психоэмоциональная стабильность, выражающаяся в переживании комфортности, удовлетворенности, гармонии с самим собой;

Во-вторых, с «системной социальной адаптацией», т.е. с реальной адаптацией как по внешнему, так и по внутреннему критерию, когда личность способна к самоактуализации в гармонии с реальным социумом.

С точки зрения психологической адаптации именно вопрос относительно способности личности к самоактуализации в гармонии с социумом представляется наиболее актуальным. В связи с этим необходимо затронуть проблему - насколько современное общество способствует гармоничному развитию человека, раскрытию его личностного потенциала, предоставляет возможность самореализации, самоактуализации личности в различных сферах жизнедеятельности.

В этой связи весьма интересной представляется точка зрения относительно позитивного влияния современной эпохи на человека за счет прогресса в области технологий социальных коммуникаций.

Благодаря современным коммуникациям становится возможным единение людей друг с другом, переживание ими общности с другими людьми, сопричастности к различным событиям, вовлеченности в некий единый процесс общения. (Маклюен 2003). Рассматривается возможность становления всемирной цивилизации как общества «гармоничной коммуникации и образного мышления, являющихся неперенным условием формирования высших культур» (Соколов 2002: 199).

Обоснование столь оптимистичного взгляда на развитие общества в некоторой степени связано с идеями из области антропологии относительно того, что кооперативные модели поведения обеспечивают безопасность и защиту, что дает возможность социального и духовного развития человеческих способностей.

Также подобный прогноз, в некотором смысле, обусловлен представлениями о функциональнойнагруженности коммуникативных систем, что отражено в одном из возможных подходов их дифференциации по содержанию. Так, предлагают различать такие коммуникативные системы как: (Викторов 2008: 537):

- 1) новационная – приобщающая потребителя информации к новым для него знаниям о свойствах и признаках явлений, , объектов и процессов, о технологиях и нормах осуществления коммуникативно- личностной деятельности, актов поведения и взаимодействия, о языках, знаках и средствах коммуникативной системы, обучающая его социальному опыту сообщества или человечества в целом;
- 2) ориентационная – помогающая потребителю информации ориентироваться в системной структуре природного и социального пространства, в иерархической соотнесенности его элементов, социализирующая и инкультурирующая индивида в сообществе его проживания, формирующая его экзистенциальные и ценностные ориентации, задающая критерии оценочных суждений, приоритетов выбора и т.д.;
- 3) стимуляционная – воздействующая на мотивационные основания социальной активности людей, актуализирующая знания человека об окружающей действительности и технологиях деятельности, а также стремление к получению недостающих знаний ради удовлетворения его социальных притязанийи др.;
- 4) корреляционная – уточняющая или обновляющая отдельные параметры перечисленных видов знаний, ориентаций, стимулов.

Как можно заметить, в глобальном масштабе бурное развитие технологии социальной коммуникации предоставляет человеку возможность развиваться, реализовывать себя в различных сферах жизнедеятельности, создает реальные условия для совершенствования и расширения его коммуникативного опыта, способствует приобщению человека к научным и культурным достижениям мирового сообщества.

Подобная перспектива развития общества хоть и обнадеживает, однако несколько сомнительна. На сегодняшний день остро встает проблема одностороннего развития общества за счет научно-технического прогресса, экономического роста, появления различного рода “индустрий”, тогда как наиболее значимые стороны общественного развития: уровень культуры, духовно-нравственный потенциал человека – переживают упадок, даже, в некотором смысле, деградацию. Получается, что современное общество в

результате ускоренного темпа развития, усложнения, технологизации и модернизации различных видов деятельности ставит человека в ситуацию постоянного выбора, предъявляет к нему специфические требования: постоянное самосовершенствование интеллектуальной сферы по технологическому вектору развития, особенно это положение касается людей, связанных с инновационными технологиями. В то же самое время никаких реальных запросов со стороны общества по поводу развития морально-нравственных качеств человека не возникает, что в целом может привести к деформации развития общества. Э.Фромм говорил о том, что развитие общества будет определяться не только тем, что человек имеет, сколько тем, кто он есть, что он может сделать с тем, что имеет.

Более того, можно наблюдать массовую «идеологизацию сознания» людей по бездуховному вектору развития, в результате чего формируется ценностно-смысловая сфера человека определенной направленности: обесцениваются духовно-нравственные личностные качества; утрачивается ценность самой человеческой жизни; «воспеваются» ценность человека с позиции его функциональной значимости: обладает властью, имеет деньги и т.д. Подобное насаждение общественных «ценностей» становится возможным именно в результате развития коммуникативных технологий, за счет так называемых массовых коммуникаций (например СМИ, Интернет).

При подобных тенденциях развития общества рассмотрение адаптации в качестве позитивного феномена становится несколько сомнительным. В такой ситуации: несоответствия социальных норм законам общественного развития - предполагается в качестве адаптивного поведения рассматривать некоторые формы неадаптивного поведения, нацеленные на преобразование, улучшение социальных норм (Егоров 2006).

Также в современном обществе в результате совершенствования технологий социальных коммуникаций, наблюдается подмена опыта реального, непосредственного общения - опосредованным, виртуальным, что далеко не всегда позитивно влияет на развитие человека. Наблюдается тенденция примитивизации содержания коммуникации, снижение уровня «вербального интеллекта», теряется способность адекватного, эмпатичного восприятия людей друг другом.

Подобные проблемы предъявляют особые требования к психологической адаптации человека, к его умению подбирать и использовать ансамбли копинговых стратегий поведения для установления гармоничных отношений с социальной средой.

ЛИТЕРАТУРА

- Викторов, А. Ш. (2008). Введение в социологию безопасности. Курс лекций. Москва, "Канон" РООИ "Реабилитация",.
- Егоров, А. Ю. (2006). Нейропсихология девиантного поведения. СПб.: Речь,.
- Маклюен, М. (2003). Понимание медиа: внешние расширения человека. Москва
- Маликова, Т. В., Михайлов, Л.А., Соломин, В.П., Шатовой, О.В.(2008). Психологическая защита: направления и методы. Учебное пособие. СПб.: Речь,
- Баевой, И. А. (ред) (2006). Обеспечение психологической безопасности в образовательном учреждении: практическое руководство. СПб. Речь,.
- Реан, А. А. (2008). Психология и психодиагностика личности. Теория, методы исследования, практикум.- СПб.: Прайм-ЕВРОЗНАК,
- Соколов, А.В. (2002). Общая теория социальной коммуникации. Москва

ԱՎԱԳԻՄՅԱՆ ՌՈՂԻԿ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ

ԱՎԱԳԻՄՅԱՆ ՀԱՅԿ

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԴԵՎԻԱՑԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հոդվածում ներկայացված են դեռահասների շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները փոխակերպվող հասարակության մեջ, հետազոտությունների արդյունքները, որոնք կատարվել են Վանաձորի մանկատան թիվ 2, 3 հատուկ դպրոցների և Ստեփանավանի թիվ 1 հատուկ դպրոցի սաների հետ ու Վանաձորի թիվ 1, 6, 11 միջնակարգ դպրոցների աշակերտների հետ: Հետազոտության արդյունքները և դրանց սոցիալ-հոգեբանական վերլուծությունը թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացությանը. դեռահաս վարքի տեր դեռահասների ընդհանուր սոցիալ-հոգեբանական բնութագրում առանձնացվում են ցուցանիշներ, որոնցով պայմանավորվում են նրանց վարքագծային շեղումները: Այդ պատճառներից են դեռահասի ցածր սոցիալական կարգավիճակը հասարակության մեջ, ծնողների և մանկավարժների կողմից ուշադրության և հոգածության պակասը, ինքնադրսևորվելու հնարավորության սահմանափակվածությունը, ներքին տագնապայնությունը և անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ և այլն: Դեռահաս երևույթները յուրատիպ են յուրաքանչյուր հասարակության համար և կախված են պատմամշակութային ավանդույթներից, տնտեսական-քաղաքական հարաբերություններից և մի շարք այլ սոցիալ-հոգեբանական գործոններից:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ դեռահասների դեռահաս վարք, դելինկվենտ վարք, փոխակերպվող հասարակություն, սոցիալ-հոգեբանական պատճառներ, ագրեսիա, ադապտացիա, դեզադապտացիա, սոցիալականացում:

Հայաստանի Հանրապետությունում սոցիոմշակութային փոփոխությունները, տնտեսական ճգնաժամի և 1988 թ. երկրաշարժի ու պատերազմի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների պայմաններում կյանքը մեր հասարակության անդամների, ինչպես նաև դեռահասների մոտ առաջ է բերել բազմաթիվ սոցիալ-հոգեբանական խնդիրներ: Վերջին ժամանակներս հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքը կապված է բազմաթիվ դժվար իրադրությունների հետ, որոնցում նա արդեն պետք է կողմնորոշվի, գտնի ճիշտ լուծումներ, ուղևեր: Բացի դրանից, մշտապես առաջացող դժվար, երբեմն անլուծելի թվացող խնդիրները, որոնք վերապրվում են մարդու կողմից որպես ճգնաժամ և թվում է, որ դրանից դուրս գալու միջոցներ չկան:

Կյանքի արագ տեմպը, իրադարձությունների մշտական անկայունությունը և փոփոխականությունը հանգեցրին մարդկանց մոտ վարքի տարբեր տիպերի առաջացման. հիմնականում անհատների հատուկ կոմունիկատիվ վարքի հասարակության մեջ, այդ թվում՝ դեռահաս և դելինկվենտ վարքի: Մի մասին վերջերս բնորոշ է դարձել մեկուսացումը, մյուսներին՝ ռիսկի պատրաստականությունը և այլն: Ստեղծվում է միջավայր, որն ապահովում է սոցիալ հատկանիշների դրսևորման հնարավորությունը, ամրապնդվում են կամ միջավայրին հակադրվելու, կամ միջավայրից պաշտպանվելու մարդու գործառնություններ:

Դեռահաս արտահայտվում է որպես անհամաձայնության ձև, որպես պաշտպանական մեխանիզմ միջավայրի ճնշման ազդեցության նկատմամբ: Այնուամենայնիվ, ցանկացած հանգամանքներում ճգնաժամային դժվարությունները անհրաժեշտ է լուծել, ինչի հետ կապված՝

ցանկացած մարդ հոգեբանորեն մշակում է դրանց հանգուցալուծման իր եղանակները և գործիքները: Ներկայումս մարդու հոգեկանն ստիպված է կատարել որոշակի փոփոխություններ սեփական պատկերացումների, գործողությունների և վարքի մեջ, նաև նորից ստեղծել անձի պահանջվող հատկանիշները, ակտուալիզացնել առանձնահատուկ հոգեկան փոփոխություններ: Ընդհանուր առմամբ, անորոշության և փոփոխությունների ժամանակաշրջանը, որը բնորոշ է ժամանակակից իրականության պայմաններին, պրոյեկտվում է նաև մարդու հոգեկանի վրա: Մարդու հոգեկանն ստիպված է արձագանքել սոցիալական իրականության մարտահրավերներին: Դրա համար նախ և առաջ, մարդը պետք է պատրաստ լինի կառուցելու անհրաժեշտ փոփոխությունները և կատարելու պահանջվող փոխակերպումները: Սակայն հաճախ ժամանակակից իրականության արագ փոփոխվող իրադաժությունները մարդուն դնում են անելանելի դրության մեջ, և ինքն անպատրաստ է լինում հոգեկան փոխակերպումների: Այդ պայմաններում մարդը, որպես կանոն, գործում է փորձի և սխալների մեթոդով, այլ ոչ թե ծրագիրը կառուցում է կառուցողական հիմքի վրա: Դրա հետ միասին հասարակության մեջ կատարվող փոփոխությունները, ուղիղ համեմատական չեն հոգեկանում կատարվող փոփոխություններին, սակայն աստիճանաբար հնարավորություններ են ստեղծում անձի վարքի և կառուցվածքում փոխակերպումների ձևավորման համար:

Հասարակական գործընթացների և սոցիալական խմբերի ազդեցությունը մարդկանց վարքի վրա առաջնահերթ դիտարկվում է սոցիոլոգիական մոտեցման շրջանակներում: Սոցիոլոգիական տեսությունները դնիանտ վարքը դիտարկում են հասարակական գործընթացների, համակեցության և սոցիալական նորմերի համատեքստում, որոնք հաստատված են տվյալ հասարակության մեջ: Սոցիալական դնիացիաները սովորաբար ենթարկվում են սոցիալական օրինաչափություններին, նրանք կախված են ժամանակաշրջանից և հասարակությունից, դրանք կարելի է կանխատեսել, մի շարք դեպքերում էլ կարելի է կառավարել:

Տվյալ ուղղության առավել հայտնի ներկայացուցիչներ են հանդիսանում Օ. Կոնտը, Գ. Թարդը, Ա. Քեթլեն, Է. Դյուրքհեյմը, Մ. Վեբերը, Թ. Փարսոնսը, Ռ. Մերտոնը և ուրիշներ: Հեղինակների կարծիքով՝ դնիացիաների հիմնական պատճառներից մեկը կոնֆլիկտն է նպատակների և նրանց հասնելու միջոցների միջև, որը կարող է հանգեցնել անոմիկ լարվածության, ֆրոստրացիայի և ադապտացիայի անօրինական եղանակների որոնման: Տվյալ հանգամանքով է մասամբ բացատրվում հանցավորության հարաբերականորեն բարձր մակարդակը սոցիալական ստորին շերտերի մեջ:

Սոցիալական դնացիաների այլ օբյեկտիվ գործոններ են ճանաչվում՝ տարբերությունները սոցիալական փոխգործողության մասնակիցների միջև և սպասելիքների չիրականացումը (Թ. Փարսոնս), անհամապատասխանությունը բարիքների բաշխման ու մարդկանց անձնային հատկանիշների միջև (Պ. Սորոկին), դնիանտային ենթամշակույթի նորմերի և ուսուցման ազդեցությունը (Ռ. Կլաուորդ, Լ. Օուլին): Այսպես՝ դնիանտաբան Ե.Ջմանովսկայան և ճանաչված սոցիալական հոգեբան Ի.Կոնը գտնում են, որ վաղ մանկությունից դնիանտային ենթամշակույթում (հանցավոր, կոնֆլիկտային կամ ռետրիստական) ապրող անհատը մեծ հավանականությամբ կդրսևորի դնիանտ վարքի համապատասխան ձևերը (Клейбер 2001: 13):

Օբյեկտիվ սոցիալական գործոնների հետ մեկտեղ գործում են նաև դնիանտ վարքի սուբյեկտիվ պատճառները: Ստիգմատիզացիայի տեսության համաձայն (Է. Լեմերտ, Գ. Բեքերը)՝ դնիացիաները այն բանի հետևանքն են, որ հասարակությունն ինքն է անհատին կպցնում համապատասխան պիտակներ՝ կոնկրետ մարդու գործողությունները հարաբերակցելով վերացական կանոնների հետ (առաջնային դնիանտություն): Աստիճանաբար ձևավորվում է վարք, որն անհատին ստիպում է հետևել դնիանտ դերին (երկրորդային դնիանտություն) (Выготский 1984: 13):

Սազերլենդը 1939թ. ձևակերպեց դիֆերենցված ասոցիացիայի տեսությունը, ըստ որի՝ դևիացիան վարքի բարդ ու տարբերակված (դիֆերենցված) ձև է: Դրան սովորում են ինտերակցիայում (փոխգործողության մեջ): Այդ գործընթացն իր մեջ է ներառում դևիանտ մոտիվացիայի յուրացումը, դևիանտ վարքի արդարացումը ու նրա իրագործման տեխնիկաները (Выготский 1984: 15):

Սոցիոլոգիական տեսությունները չեն բացատրում, թե ինչու միևնույն պայմաններում տարբեր մարդիկ ցուցադրում են սկզբունքորեն տարբեր վարք, օրինակ՝ աղքատ շերտերի ոչ բոլոր ներկայացուցիչներն են դրսևորում դելինկվենտ վարք: Հարկ է ընդունել, որ սոցիալական պայմաններն իրոք կանխորոշում են սոցիալական դևիացիաների բնույթը (տվյալ երևույթների տարածման չափը հասարակության մեջ կամ սոցիալական խմբում), սակայն դրանք բավարար չեն կոնկրետ անձի շեղվող վարքի պատճառները և մեխանիզմները բացատրելու համար:

Այդ պատճառով անհրաժեշտ է դիտարկել նաև անձի զարգացման սոցիալ-հոգեբանական պայմանները: Դասական բիհեյվորիզմի ներկայացուցիչներն (Է. Թորնդայկը, Ջ. Ուոթսոնը, Բ.Սքինները) առաջարկեցին մարդկային վարքի հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները դիտարկել որպես միջավայրի հետ անձի փոխգործողության գործընթաց: Բիհեյվորիստական դրույթներում շեղվող վարքը կարելի է սահմանել որպես միջավայրի բարդ պայմանավորվածության արդյունք (Торндайк, Уотсон 1988; Хельсон-Джоунс 2000):

Սոցիալ-կոգնիտիվ տեսությունը կամ սոցիալական սովորեցման տեսությունը, որը մշակվել է Ա.Բանդուրայի կողմից, իրենից ներկայացնում է սովորեցման դասական տեսության զարգացում: Սոցիալական սովորեցման տեսության համաձայն՝ բնածին են հանդիսանում միայն տարրական ռեֆլեքսները՝ մարդու հնարավորությունների սահմանը: Մարդու ցանկացած վարք սոցիալապես պայմանավորված է, քանի որ նրա հիմքում ընկած են բարդ հմտություններ, որոնք պահանջում են հատուկ սովորեցում: Այսինքն՝ ազդեցիվ վարքը սովորում են, քանի որ ազդեստրը պետք է իմանա, որ ցավ է պատճառում, ինչ է անհրաժեշտ անել և ինչ պայմաններում: Հոգեֆիզիոլոգիական, այդ թվում՝ ժառանգական մեխանիզմների ազդեցությունը թեկուզ առկա է, սակայն որոշիչ դեր չի խաղում (Торндайк, Уотсон 1988: 11):

Սովորեցման տեսությանը շատ մոտ է կոգնիտիվ ուղղությունը, որը նույնպես զարգացել է բիհեյվորիզմի հիմքի վրա: Ա.Բեկի կոգնիտիվ մոդելի և Ա.Էլիսի ռացիոնալ-էմոտիվ տեսության համաձայն՝ վարքի շեղման հիմքում ընկած են ոչ ադապտիվ մտածական սխեմաներ: Ոչ ադեկվատ կոգնիցիաները գործի մեջ են դնում ոչ ադեկվատ զգացմունքներ ու գործողություններ: Սթրեսային իրադրությունների մեկնաբանման ձևը մարդկանց կողմից կանխորոշում է նրանց վարքը (Хельсон-Джоунс 2000: 19):

Լ.Ս.Վիգոտսկին գտնում էր, որ դեռահասի հոգեբանական զարգացման առանցքն է հետաքրքրությունների խնդիրն անցումային տարիքում: Մարդու բոլոր հոգեբանական գործառնությունները զարգացման յուրաքանչյուր աստիճանում գործում են ոչ թե չհամակարգված, պատահական ձևով, այլ որոշակի համակարգով՝ ուղղորդվելով անձի մեջ կուտակված որոշակի ձգտումներով, հակումներով և հետաքրքրություններով: Ըստ հեղինակի՝ մեր վարքի այդ շարժիչ ուժերը փոխվում են յուրաքանչյուր տարիքային փուլում, իսկ նրանց էվոյուցիան ընկած է վարքի փոփոխության հիմքում (Выготский 1984: 6):

Լ.Ս.Վիգոտսկին գրում էր, որ մարդու վարքը ոչ միայն կենսաբանական էվոյուցիայի արդյունք է, որը հանգեցրել է մարդկային տիպի առաջացմանը՝ նրան բնորոշ բոլոր հոգեֆիզիոլոգիական գործառնություններով, այլև պատմական կամ մշակութային զարգացման արդյունք է: Վարքի զարգացումը կանգ չի առել մարդկության պատմական գոյության սկզբի հետ, սակայն այն չէր էլ անցել այն ուղիներով, որոնցով ընթանում էր վարքի կենսաբանական էվոյուցիան (Выготский 1984: 47):

Կ.Լևինը դեռահասության տարիքի երևույթը մեկնաբանում էր իր դաշտի տեսության: համաձայն Նա ուշադրություն էր դարձնում այդ շրջանին բնորոշ կոգնիտիվ դիսբալանսի վրա, այսինքն՝ շեշտը դնում էր մանկությունից մեծահասակի կարգավիճակին անցնելու շրջանում

միջավայրում կողմնորոշման եղանակների անորոշության վրա: Նրա տեսության համաձայն՝ մանկությունից չափահասության անցումը հասկացվում է որպես խմբային պատկանելության փոփոխություն, անցում երեխաների հանրությունից մեծահասակների հանրություն: Նման տեղափոխությունը անցում է կենսական տարածության անձանոթ, կոգնիտիվորեն չկառուցակարգված ոլորտ: Կ.Լ.Լինը այդ տեղափոխությունը համեմատում է անձանոթ քաղաքում հայտնվելու հետ: Անհատի համար պարզ չէ, թե ինչի հետ է կապված իր նոր դիրքը և չգիտի, թե որ ուղղությամբ է նրան անհրաժեշտ շարժվել, որ հասնի նպատակին, մի գուցե նույնիսկ հրաժարվել դրանից: Հստակության բացակայությունը դեռահասի վարքի անկայունության պատճառ է: Նա վստահ չէ, որ ճիշտ է վարվում, քանի որ գտնվում է անձանոթ միջավայրում: Այդ անվստահությունն աճում է, եթե երեխան անտեղյակ է մեծահասակների աշխարհից, որի մեջ նա պետք է մուտք գործի:

Կ.Լ.Լինը առաջ քաշեց դեռահասության տարիքի հոգեբանության համար մի շարք կարևոր խնդիրներ: Նախևառաջ դեռահասի՝ մեծահասակների աշխարհում կողմնորոշման և դեռահասի կողմից սեփական կենսական պլանների ու նպատակների կառուցման խնդիրն է:

Խորհրդային հոգեբաններ Լ.Ս.Վիգոտսկին, Ա.Ն.Լեոնտևը, Բ.Գ.Անանևը, Դ.Բ.Էլկոնինը և այլք գործունեության մեջ առանձնացնում են երկու կողմեր. 1. առարկայական և 2. մարդկանց և հասարակության հետ փոխհարաբերությունների զարգացմանն ուղղված: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել էր, որ դեռահասության տարիքի համար բնորոշ է փոխհարաբերությունների նորմերի յուրացման հարցում գործունեության ուղղվածությունը:

Հատուկ ուշադրության է արժանի շեղվող վարքի պատճառականության, պայմանավորվածության հարցը, որն ընկալվում է որպես գործոնների հանրագումար, որոնք առաջացնում, դրդում, ուժեղացնում կամ աջակցում են շեղվող վարքին: Դեկանտ վարքը պայմանավորող գործոնները ազդում են սոցիալական կազմակերպության տարբեր մակարդակների վրա, որտեղ անձը դրանց ենթահամակարգերից մեկն է: Հասարակություն-անձ համակարգը միաժամանակ գործում է մի քանի մակարդակներում՝ գեոֆիզիկական, մակրոհասարակական, սոցիալ-խմբային, միկրոսոցիալական, անհատական-անձնային, հոգեֆիզիոլոգիական:

Ե.Վ. Ջմանովսկայան սահմանել է գործոնների հետևյալ խմբերը, որոնք դետերմինավորում են անձի շեղվող վարքը.

1. ֆիզիկական միջավայրի արտաքին պայմանները,
2. արտաքին սոցիալական պայմանները,
3. ներքին ժառանգական-կենսաբանական և կոնստիտուցիոնալ նախադրյալները,
4. շեղվող վարքի ներանձնային պատճառները և մեխանիզմները (Змановская 41):

Շեղվող վարքի առաջացման արտաքին սոցիալական պայմաններն են.

1. հասարակական գործընթացները (սոցիալ- տնտեսական իրադրությունը, պետական քաղաքականությունը, ավանդույթները, նորաձևությունը, զանգվածային լրատվության միջոցները և այլն),

2. սոցիալական խմբերի բնութագրումները, որոնց մեջ ներգրավված է անձը (ռասայական և դասակարգային պատկանելությունը, էթնիկական դիրքորոշումները, ենթամշակույթը, սոցիալական կարգավիճակը, պատկանելությունը ուսումնամասնագիտական խումբը, ռեֆերենտային խումբը),

3. միկրոսոցիալական միջավայրը (ընտանիքի կենսատճը և կենսամակարդակը, հոգեբանական մթնոլորտն ընտանիքում, ընտանեկան դաստիարակության ոճը, ընկերները, այլ նշանակալից մարդիկ) (Змановская 2006: 42):

Դեռահասների դեկանտ վարքի պատճառականության բացահայտման համար մեր ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք որոշակի ընտրանքների բավականին լայն հետազոտություն: Մենք կարողացանք բավականին ներկայացուցչական ընտրանքի վրա

համեմատել շեղվող վարքի ախտորոշման արդյունքները երկու սկզբունքորեն տարբեր ձևով կողմնորոշված մեթոդիկաներով:

Հետազոտության մեջ ընդգրկվել են 12-15 տարեկան 160 դեռահասներ, որոնք կազմել են 2 խումբ, որոնք հետազայում տարբերակվել են խումբ 1՝ “նորմա” և խումբ 2՝ “ոխսկի”:

“Նորմա” խումբը կազմել են միևնույն տարիքի 80 (35 տղա և 45 աղջիկ) նորմատիվ վարքով դեռահասներ Վանաձորի թիվ 1; 6; 11 միջնակարգ դպրոցներից: Նրանց վարքի նորմատիվությունը որոշվում էր “ոխսկի” խումբ միկրոսոցիումի համեմատությամբ, քանի որ երբեմն դեռահասներ են համարում նաև նրանց, ովքեր երբեմն ցուցադրում են ագրեսիվություն կամ մեկ անգամ և պատահաբար իրենց դրսևորել են աշակերտին անվայել ձևով: “Ախենբախի հարցարանի” դեռահաս վարքի ախտանիշներից նրանք հավաքեցին նվազագույն միավորներ, սակայն նրանց մոտ դրսևորվում էին հուզական անբարեհաջողության, դպրոցական դեզադապտացիայի ախտանիշներ:

Կարևոր է նշել, որ “նորմա” խումբը կազմեց ոչ թե աշակերտների պատահական ընտրանքը, այլ ընդհանուր պատահական ընտրանքի (մոտ 400 մարդ քանակությամբ) այն մասը, որի մոտ նկատվում էին դպրոցական դեզադապտացիայի այս կամ այն ախտանիշները և գրանցվել էին որևէ հուզական կամ վարքային խնդիրներ: Այսպիսով՝ հանրակրթական ուսուցման պայմաններում փորձարկվողների մեր խումբը կազմեց բաշխման այն եզրը, որը բնութագրվում էր հոգեբանական և վարքային անբարեհաջողությամբ: Սակայն երկրորդ “ոխսկի” խմբի համեմատությամբ դպրոցականների այդ ընտրանքը ցուցաբերում էր նորմատիվային վարք: Առաջին խմբի փորձարկվողները չէին ցուցադրում դելինկվենտ վարքի այնպիսի մակարդակ, որը նրանց կստիպեր դուրս մնալ հանրակրթական դպրոցում ուսուցման շրջանակներից: Հետևաբար, մեր “նորմա” խումբը կարելի է համարել այնպիսին, որի մեջ հոգեբանական խնդիրների մակարդակը ցածր է “ոխսկի” խմբի համեմատությամբ, սակայն հանդիսանում է սահմանային “նորմայի” ավելի լայն ընտրանքի մեջ:

“Ռիսկի” խմբի դեռահասների ընտրությունը (80 մարդ. 35 տղա և 45 աղջիկ) կատարվում էր Վանաձորի մանկատան, թիվ 2, 3 հատուկ դպրոցի և Ստեփանավանի թիվ 1 հատուկ դպրոցի սաներից: Նշված հաստատությունների սաները ծնողական խնամքից զուրկ, թափառաշրջիկ, դասերից սիստեմատիկ բացակայող, ցածր առաջադիմությամբ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն են: Նախնական տվյալներն ստացվել են տվյալ դեռահասների փաստաթղթերի ուսումնասիրությունից, դաստիարակների, մանկավարժների հետ զրույցներից, որոնք յուրաքանչյուր սովորողի համար լրացնում էին «Ախենբախի հարցարանը»:

Դեռահասներից յուրաքանչյուրի հետ հոգեախտորոշման աշխատանքը կատարվում էր անհատապես: Երկու ուսումնասիրված ընտրանքներից որևէ մեկին պատկանելությունը դիտարկվում էր որպես միջխմբային փոփոխականների հիմնական գործոն ներխմբային տարբերությունների հետ նշանակալի փոխգործողությունների բացահայտման համատեքստում, որոնք կապված են ներքին պայմանների փոփոխականների հետ: Որպես այդպիսին մեր կողմից ներկայացված են Ֆրիկի մեթոդիկան ներկայացնող «դիտման թերթիկ» հարցարանը:

Պայմանականորեն առանձնացրել ենք հետազոտության չորս փուլեր.

1. Փաստաթղթերի վերլուծության մեթոդ և նախնական ախտորոշիչ հարցազրույց (ուղղորդված զրույց դեռահասի հետ):
2. K-SADS կիսակառուցակարգված (կիսաստանդարտացված) ախտորոշիչ հարցազրույց:
3. Ա.Բասի և Ա.Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա:
4. “Դիտման թերթերի” (Ֆրիկի հարցարան, Ախենբախի հարցարան) լրացում դաստիարակի, ուսուցչի կողմից:

Համադրած ցուցանիշները թույլ տվեցին սահմանել խնդիրների ընդհանուր ախտանիշները, որոնք ֆիքսվել են կիրառված մեթոդիկաների սանդղակներում:

Հետաքրքրական է մեր կողմից ստացված հետևյալ փաստը՝ ներքին պայմանների փոփոխականները նշանակալիորեն ազդում էին Ախենբախի մեթոդիկայի 3 ցուցանիշների վրա,

այն է՝ սոցիալականացման, մտածողության և դեմոկրատիայի, որը թույլ է տալիս հոգեբանական անբարեհաջողության նշված ախտանիշները դիտարկել որպես դեռահասների հոգեախտաբանորեն պայմանավորված զարգացման դեմոկրատիայի վրա հնարավոր ազդեցությունների առավել ակնհայտ ուղղություն:

Ազդեցիկ մեխանիզմներին նպաստող փոփոխականները, որոնք կապված են սոցիալականացման խախտման հետ, կապված են նաև իմացական ոլորտի առանձնահատկությունների՝ դեռահասների կողմից իրենց շրջապատող իրողությունների հասկացման հետ, ինչը օրինաչափորեն շեղվող վարքին ուղեկցող հատկանիշների շարքում առանձնացնում է մտածողության խնդիրները:

Դեռահասի և նրան խնամող մեծահասակի հետ նախնական գրույցի և փաստաթղթերի վերլուծության ընթացքում ստացված տվյալների համաձայն՝ կառուցվել էին հետևյալ որակական փոփոխականները, որոնք դիտարկվում են որպես դեռահասի սոցիալական (արտաքին) պայմանների զարգացման գործոններ:

Օգտագործված հոգեբանական մեթոդիկաների ցուցանիշների համեմատության արդյունքների համար հիմնական արտաքին չափանիշ է հանդես եկել խմբային պատկանելությունը: Բացի այդ, դիտարկելով նշված գործոնը որպես անկախ փոփոխական, որպես հոգեբանական ցուցանիշների վրա ազդող արտաքին գործոններ դիտարկել ենք որակական փոփոխականների ազդեցությունները, որոնք կառուցված են նախնական հարցազրույցի արդյունքներով.

1. դեռահասի վերաբերմունքը ուսման և դպրոցի նկատմամբ,
2. հարաբերությունները հասակակիցների հետ,
3. հարաբերություններն ընտանիքում,
4. դեռահասների կողմից իրավախախտումների կատարման գործոնները,
5. հարբեցողությունն ընտանիքում,
6. երեխաների քանակն ընտանիքում,
7. ծնողների կրթությունը և աշխատանքը:

Ընտանեկան անբարեհաջողությունը, դպրոցական դեզադապտացիան, ինչպես նաև տրավմատիկ իրադարձությունները (ծնողներից մեկի մահը, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքն ընտանիքում և ընտանիքից դուրս) և նմանատիպ այլ գործոններ դեռահասի կյանքի խախտված սոցիալական էկոլոգիայի պայմանները դիտարկելիս առաջին պլան են մղվում: Դեռահասական միջավայրի քրեականացման միտումները դիտարկվում են այնպիսի գործոնների համատեքստում, ինչպիսիք են ոչ լիարժեք ընտանիքը, որի հետևանքով նա զրկվում է բազմաթիվ իրադրությունների համար վարքի անհրաժեշտ մոդելներից, դեռահասների միջավայրում ծխախոտի, խմիչքի և թմրանյութերի օգտագործման տարածումը, գիտակցության մեջ վարքի ազդեցիկ մոդելների ամրապնդումը: Դեռահասների խմբերի համեմատության դեպքում անհրաժեշտ է մասնավորացնել արտաքին գործոնների ազդեցությունը հոգեբանական ախտաբանության վրա:

Այսպիսով՝ ուսումնասիրության խնդիրն է դեռահասի սոցիալական շրջապատի այն փոփոխականների հայտնաբերումը, որոնք նշանակալիորեն ազդում են «նորմա» և «ռիսկի» խմբի դեռահասների վարքային խախտումների հոգեբանական առանձնահատկությունների և դրանց արտահայտվածության վրա:

Ընտանեկան անբարեհաջողության և խախտված ծնողական պրակտիկայի գործոններն էականորեն ազդում են դեմոկրատիայի ցուցանիշի վրա թե՛ կիսակառուցակարգված հարցազրույցի, թե՛ Ախենբախի մեթոդիկայի օգնությամբ չափման դեպքում:

Սոցիալական դեզադապտացիան նույնպես օրինաչափորեն մեծանում է ընտանիքում բռնության կիրառության, խախտված հարաբերությունների և ծնողներից մեկի մահվան դեպքում: Ընտանիքի պայմաններն ազդում են մտածողության խնդիրների ցուցանիշի վրա,

ավելի շատ սպասելի էին ուշադրության և հիպերակտիվության խախտումները, սակայն հենց այդ ցուցանիշը դիտարկված փոփոխականների նշանակալի էֆեկտների մեջ չէր մտնում: Կոնկրետացնենք փոփոխականների մակարդակները, որոնք կանխորոշում են ներխաժային տարբերությունները դեռահասների ուսումնասիրված խմբերում: Այդ գործոններն են՝ վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, հարաբերությունները հասակակիցների հետ, երեխաների քանակն ընտանիքում:

Նշենք, որ նախորդ տվյալների համեմատությամբ որպես կախյալ փոփոխական պարտադիր առկա է ագրեսիան, որը չափվում է Ախենբախի, Բասի ու Դարկիի մեթոդիկաներով: Ագրեսիվ հակազդեցության տարբեր տիպեր ներառված են ընդդիմադիր վարքի և վարքային խախտումների մեջ, որոնք չափվում են կիսակառացուկարգված հարցազրույցի միջոցով և Բասի ու Դարկիի ագրեսիվության ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի միջոցով:

Վերաբերմունքը դպրոցի նկատմամբ: Ստացված արդյունքները վկայում են դպրոցական դեզադապտացիայի լուրջ ախտանիշների մասին. լավ են սովորում 15%-ը, բավարար՝ 16,7%-ը, սովորել չեն ցանկանում՝ պատասխանել են դեռահասների 7%-ը, 16,3%-ը ասել են, որ ունեն լուրջ խնդիրներ կապված վարքի հետ: Հիշեցնենք, որ այդ խմբի դեռահասների 75%-ը սովորում են հատուկ դպրոցներում: Դպրոցի նկատմամբ վերաբերմունքով կանխորոշվեց նշանակալի արդյունքների (էֆեկտների) բաշխումը K-SADS-ի հոգեբանական ցուցանիշներով հետևյալ կերպ.

1. դեպրեսիա,
2. ընդդիմադիր վարքի և վարքային խախտումների ախտանիշներ,
3. ծխախոտի օգտագործում:

Նշանակալի է նաև փսիխոպաթիայի քանակական գործակցի վրա ազդեցության էֆեկտները (ըստ Ֆրիկի հարցարանի), ի դեպ՝ այստեղ կարևոր է ցուցանիշների գերակշռությունը ռիսկի խմբում, ինչպես նաև ծխախոտի օգտագործումը և վարքային շեղումների երկու սանդղակները: Այսպիսով՝ «վերաբերմունքը դպրոցի նկատմամբ» գործոնը, որը վկայում է դպրոցական դեզադապտացիայի աստիճանի մասին, սերտորեն կապված էր վարքային շեղումների ցուցանիշների հետ:

Ըստ Ախենբախի մեթոդիկայի՝ հոգեբանական ցուցանիշները փոխհաստատվում էին K-SADS-ի և Բասի ու Դարկիի մեթոդիկայով ցուցանիշների հետ: Դելինկվենտությունը նույնպես նշանակալիորեն փոխվում էր դպրոցի նկատմամբ վերաբերմունքի գործոնի ազդեցության տակ, ինչպես նաև՝ K-SADS-ի համապատասխան XV և XVI սանդղակները: Փսիխոպաթիայի և ծխախոտի օգտագործման գործակիցների աճը առաջին հերթին արտացոլում էր դեռահասների վարքի շեղումները:

Հասակակիցների հետ հարաբերությունները: Սոցիալական շրջապատի պայմանների այդ գործոնը տվեց նշանակալի էֆեկտ, ինչպես նշանակալի էր նաև նրա խմբային պատկանելության հետ փոխգործողության էֆեկտը: Նախնական զրույցի ժամանակ «ընկերներ ունե՞ք» հարցին «այո» պատասխանեցին «նորմա» խմբի դեռահասների 72,5%-ը, «ռիսկի» խմբում այն կազմում էր՝ 60,7%: Հասակակիցների հետ «մակերեսային հարաբերությունների» մասին նշեցին դեռահասների 17,2%-ը «նորմա» խմբում, 19,4%-ը՝ «ռիսկի» խմբում: «Ոչ ոքի հետ չեմ շփվում» պատասխանել են դեռահասների 3%-ը «նորմա» խմբում և ոչ ոք՝ «ռիսկի» խմբում: Հասակակիցների հետ հարաբերությունները երկու խմբերում կոնֆլիկտային բնույթագրեցին մոտավորապես հավասար՝ 7% և 6,2%: Նշենք, թե ինչպիսի հոգեբանական փոփոխականների վրա էին ազդում հարաբերությունները հասակակիցների հետ: Այդ ազդեցությունն արտահայտվում էր դեպրեսիայի, ուշադրության պակասի և հիպերակտիվության ախտանիշի, ընդդիմադիր վարքի և վարքի խախտումների սանդղակների վրա: Բացի այդ՝ նշանակալիորեն փոխվում էր փսիխոպաթիկ վարքի ցուցանիշը Ֆրիկի մեթոդիկայով: Ախենբախի մեթոդիկայով նշակալի էին տազնապայությունը, սոցիալական դեզադապտացիան, մտածողության խնդիրները, դելինկվենտությունը և ագրեսիան, չի հաստատվել հասակակիցների հետ հարաբերության ազդեցության էֆեկտը ուշադրության պակասի և հիպերակտիվության

ախտանիշի վրա: Այսպիսով՝ մեր կողմից ուսումնասիրված խմբերի դեռահասների գրեթե 60%-ից ավելին պնդում էին, որ նրանք ունեն ընկերներ, սակայն հասակակիցների հետ հարաբերությունների խախտումները կանխորոշեց փոփոխությունները ինչպես շեղվող վարքի սանդղակներով, այնպես էլ՝ ուղեկցող անձնային փոփոխությունների և սոցիալականացման խնդիրների սանդղակներով:

Ընտանիքում երեխաների քանակը: Նշված ժողովրդագրական գործոնը, որն էականորեն փոխում է երեխայի զարգացման միկրոմիջավայրը նաև ազդում է հոգեբանական ցուցանիշների վրա: Ըստ Ախենբախի՝ դելինկվենտության սանդղակը որպես կախյալ փոփոխական արտահայտել է ընտանիքում երեխաների քանակի աճի ազդեցությունը, նշանակալի է դարձել նաև այդ գործոնի փոխգործունեությունը խմբային պատկանելության գործոնի հետ:

Ամփոփելով փոխակերպվող հասարակության մեջ դեռահասների դնիանտ վարքի պատճառականությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ յուրահատկությունները.

1. Դնիանտ վարքի պատճառականության շղթայում կարևոր տեղ են գրավում արտաքին կամ օբյեկտիվ անբարենպաստ պատճառներն ու պայմանները, որոնք կազմում են անձի սոցիալականացման թերությունները և բացթողումները: Վարքի շեղման սոցիալական պատճառներից են՝ անբարեկեցիկ կյանքը, սոցիալական անարդարությունը, պետական հովանավորության պակասը, հանցավորությունը:
2. Օբյեկտիվ անբարենպաստ գործոնների ազդեցության տակ դեռահասը հետզհետե սոցիալապես ախտահարվում է և դառնում ընկալունակ կրիմինալի նկատմամբ: Այդ գործընթացում անձը ձեռք է բերում մի շարք անբարենպաստ անձնային որակներ և հատկանիշներ (ագրեսիվություն, նեգատիվ դիրքորոշում շրջապատի նկատմամբ, քրեածին վարքի միտումներ և դրդապատճառներ, դաժանություն, կոպտություն, հուզական անտարբերություն և այլն): Դնիանտ վարքի պատճառականության շղթայում այդպիսի գործոնների ամբողջությունը ներկայանում է որպես սուբյեկտիվ գործոն:
3. Դեռահասի դնիանտ վարքի կազմավորմանը հատկապես նպաստում է ծնողների և մանկավարժների վերաբերմունքը աճող մարդու նկատմամբ, անհրաժեշտ հոգածության, սիրո ու փաղաքշանքի, ուշադրության պակասը, երեխային՝ որպես անձնավորության ընկալելու, նրա կարծիքի և ցանկությունների հետ հաշվի նստելու, նրա իրավունքներն ու ազատությունները հարգելու բացակայությունը, որոնք նպաստում են դեռահասի վատ սովորությունների ձեռք բերմանը (թափառաշրջիկություն, ծխախոտի, ալկոհոլի և թմրանյութի օգտագործումը և այլն):

ԳԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Торндайк, Э., Уотсон, Дж.Б. (1988). Бихевиоризм: Принципы обучения, основанные на психологии; Психология как наука о поведении. М.
- Выготский, Л.С., (1984). Собрание сочинений. М., Т.4.
- Змановская, Е.В. (2006). Девиантология (Психология отклоняющегося поведения). М.
- Клейберг, Ю.А. (2001). Психология девиантного поведения. М.
- Кон, И.С. (1978). В поисках себя: личность и ее самосознание. М.
- Нельсон-Джоунс, Р. (2000). Теория и практика консультирования. СПб.

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՀՐԱՆՏ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ-ի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի վարիչ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանգուցային բառեր՝ թեստ, ընտրություն, հոգեբանական չափորոշիչ, ախտորոշում, սուբյեկտ, թեկնածու, աշխատակազմ:

Ներկայում կառավարման ոլորտում լայնորեն կիրառվող ընտրության տարբեր մեթոդներն են՝ թեստերը, հարցարանները և մոդելավորող փորձարկումները, անձնական տվյալների (CV) վերլուծությունը, հարցազրույցը: Այս բոլոր մեթոդներն ուղղված են բացահայտելու սուբյեկտի առավելությունները և թերությունները: Հոգեբանական հետազոտության օբյեկտի յուրօրինակ, բազմաձևարդյակ և հիերարխիկ կառուցվածքի մասին պատկերացումներն ընկած են անձնային որակների և հոգեվիճակների ախտորոշման գիտական ու կիրառական խնդիրների լուծման հիմքում: Այս մեթոդների ներդրման հիմնական նպատակն է ընտրել համապատասխան ու արդյունավետ աշխատակցի և համալրել կազմակերպության աշխատակազմը, իսկ այնուհետև իրականացնել խորհրդատվական, շտկող և կարգավորիչ ազդեցությունների իրականացումը: Իրավացի է այն դրույթը, որի համաձայն, անցնելով հոգեբանական ախտորոշման վերլուծությանը ընդհանուր գիտական մեթոդաբանության տեսանկյունից, մեթոդաբանական վերլուծության ստացված արդյունքների մեխանիկական կիրառումը դժվար թե կարող է արդյունավետ լինել: Հեղինակը նշում է, որ ախտորոշման մեթոդների օգտագործումը կոնկրետ ոլորտում ստանում է առարկայական մեկնաբանություն և մշակում (Анцупьев 2006): Այս տեսակետից մասնագիտական պիտանելիության գնահատման մշակումը հոգեբանական ախտորոշման հարաչափերի՝ չափանիշների հիման վրա համապատասխանում է կիրառական հոգեբանության պահանջներին:

Կիրառական հոգեբանության համար արդիական է դառնում անձի ինքնաիրագործման և մասնագիտական կայացման, մասնագիտությանը տիրապետելու գործընթացի որակի վրա ազդող հոգեբանական գործոնների, գործունեության արդյունավետության, աշխատանքից բավարարված լինելու վիճակի ուսումնասիրությունը: Եվ, ինչպես նշում են մի շարք հեղինակներ, ոչ պակաս կարևոր խնդիր է անձնակազմի մասնագիտական ընտրության հոգեբանական համակարգի մշակումը՝ տվյալ գործունեության համար կարևոր մասնագիտական ունակությունների կամ որակների հիման վրա: Լուծելով ընտրության և արդյունավետ մասնագիտական գործունեության կանխատեսման խնդիրները՝ հարկ է հաշվի առնել ոչ միայն նեղ մասնագիտական հետաքրքրությունների, հակումների, ունակությունների շրջանակը, այլ նաև անձը՝ իր ամբողջականության մեջ, պարզել աշխարհայացքի յուրահատկությունները, հաղորդակցման ընդունակությունները, ինչպես նաև՝ թեկնածուների հոգեֆիզիկական և անձնային առանձնահատկությունները (Гуревич 2008, Климов 1990, Рогов 1998):

Անձնակազմի նպատակային գնահատման և ընտրության համար ընդհանուր պայման է տվյալ մասնագիտության համար կարևոր և ցանկալի որակների որոշումը, հետևաբար ընտրության չափորոշիչները պետք է ձևավորվեն ինչպես պրոֆեսիոգրամայի՝ մասնագիտական որակների նկարագրի (կամ մասնագիտության գծապատկերի), այնպես էլ հուսալի հոգեախտորոշիչ ապարատի հիման վրա: Մյուս կողմից անհրաժեշտ է հաշվի առնել, որ ընտրությունը, լինելով երկկողմանի գործընթաց, մեկնաբանվում է և՛ «ընտրողների» (թեկնածուի գնահատական), և՛ հավակնորդի (ինքնագնահատական) կողմից: Հետևաբար մասնագիտորեն կարևոր անձնային որակների գնահատման համակարգի մշակումը պիտի

ենթադրի արտաքին ընկալում, ինչպես նաև վիճարկում կամ վերանայում թեկնածուի կողմից: Այդ պատճառով, բացի գործընթացի համապատասխան պայմանների ապահովումը, անհրաժեշտ է արդյունքների հաշվարկման հստակ համակարգ, դրանց դասակարգում և յուրաքանչյուր որակի հիմնավորված գնահատում (Ավանեսյան 2010): Այստեղ ի հայտ է գալիս հոգեախտորոշման համար անհրաժեշտ ևս մեկ պայման՝ գնահատման արդյունքների ներկայացման ձևը և դրանց մեկնաբանությունը (հիմնավորվածության և մատչելիության սկզբունքներ): Դա որոշակի ձևով կապված է թեստավորվողի մասնագիտական պատրաստվածության և ինտուիցիայի հետ:

Չնայած հետազոտությունները մասնագիտական ընտրության ոլորտում ունեն տասնյակ տարիների պատմություն, մինչ այժմ մշակված չէ ընտրության միասնական մոտեցում գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար աշխատողին անհրաժեշտ որակների որոշման միջոցների և մեթոդների վերաբերյալ: Դրան անհրաժեշտ է գումարել նաև ժամանակակից պայմաններում այս կան այն մասնագետներին ներկայացվող պահանջների փոխակերպման հանգամանքը, ինչպես նաև նոր մասնագիտությունների և մասնագիտացումների առաջացման շարժընթացը: Իրավիճակը բարդանում է նրանով, որ բազմաթիվ մասնագիտությունների համար չկան հստակ ու լիարժեք պրոֆեսիոգրամաներ, ինչի պատճառով կա հավանականություն, որ ընտրության ժամանակ չափվում են գործունեության արդյունավետությունը որոշող անհամապատասխան որակները (Базаров 1998): Առավել սուր է այդ հարցը դրված արտակարգ և ոչ ստանդարտ պայմաններում գործունեության ոլորտների աշխատանքների համար կադրերի ընտրության ժամանակ: Նման ոլորտների աշխատողների մասնագիտական և սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները և աշխատանքային բարդությունները պայմանավորում են հոգեբանական սթրեսի և նյարդահոգեբանական լարվածության, հոգեմարմնական շեղումների բարձր մակարդակը, դրանով իսկ ի հայտ բերելով աղեկվատ հոգեբանական գնահատականի: Վերջինիս հիման վրա ընտրության հստակ համակարգի ներդրումը ենթադրում է հետագա ուսուցման, հոգեբանական ուղեկցման և վերականգման անհրաժեշտությունը:

Մեր բազմափուլ հետազոտական աշխատանքի նպատակն է թեկնածուի մասնագիտական պիտանելիության հոգեբանական չափորոշիչների գնահատման համակարգի ալգորիթմի մշակումը:

Անձնակազմի ընտրության գործընթացում ամենալայն կիրառում գտած մեթոդներից մեկը թեստավորումն է: Թեստավորման միջոցով կարելի է բացահայտել բնավորության անհրաժեշտ գծերը և մարդու պոտենցիալ հնարավորությունները: Այս հարցը հատկապես արդիական է այն մասնագիտությունների պարագայում, որտեղ ներկայացնում են հատուկ պահանջներ մասնագետի հոգեկանին, այդ թվում պատասխանատու կառավարչական պաշտոնական կարգավիճակում: Ակնհայտ է, որ գիտականորեն հիմնավորված և հուսալի ընտրությունից են կախված բազմաթիվ գործոններ, որոնք պայմանավորում են մասնագիտական գործունեության հետագա արդյունավետությունը հասարակական կարևոր ոլորտներում: Մեր դեպքում նոր աշխատակիցների ընտրությունների փաստը ենթադրում է առաջին հերթին թեկնածուների ներգրավում, երկրորդ հերթին՝ հարցաթերթերի լրացման և թեստավորման ընթացակարգի հստակ հրահանգավորում (նաև լրացուցիչ հրահանգավորումներ մշակված համակարգչային տարբերակով թեստային առաջադրանքներին պատասխանելու համար): Ճիշտ ընտրված աշխատակազմը ցանկացած նմանատիպ կազմակերպության համախմբված աշխատանքի գրավականն է:

Այսպիսով, որակյալ մասնագետների ընտրության համար, ովքեր աշխատում են արտակարգ և լարված պայմաններում, մեր կողմից մշակվել է թեստավորման համակարգ՝ ուղղված մասնագիտական հոգեբանական «դիմանկարի» ստեղծմանը: Թեստերի համալիրի կառուցվածքը մի կողմից պայմանավորված է մասնագիտական գործունեությանը ներկայացվող պահանջներով, մյուս կողմից՝ անձի հոգեբանական կառուցվածքով:

Հետազոտվողների մասնագիտության տեսանկյունից կարևոր անձնային որակները պարզելու համար օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները՝ Ռ. Ամտհաուների ինտելեկտի կառուցվածքի թեստը (TSI), CPI թեստը (հաղորժողականության, պատասխանատվության, ապրումակցման, ինքնաընդունման), Ա. Ն. Օրյոլի շեղվող վարքի հակվածության թեստը, «Կամային ինքնավերահսկման ախտորոշում» հարցարանը (մշակում՝ Ա. Գ. Զվերկովի և Կ/Կ), Հ. Այզենկի «Հոգեկան վիճակների ինքնագնահատման ախտորոշում» թեստը, Բասս-Պերիի հարցարանը (BPAQ), Ա. Ա. Ռեանի հարցարանը (МУН):

Փորձագիտական մեթոդիկաների ընտրության ժամանակ մենք առաջնորդվել ենք առաջին հերթին հետազոտվող անձի առանձնահատկությունների համալիր արտացոլման պայմանավորվածությամբ, ձևակերպումների մատչելիությամբ և այնպիսի հրահանգավորմամբ, որը հետազոտվողներին կորդեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանների, ինչպես նաև չէր պահանջի կատարման անսահման ժամանակ (Карелина 2007): Վերջին պահանջը նպաստում է ստանալ մաքսիմալ անկեղծ պատասխաններ և գնահատել ժամանակային սահմանափակման պայմաններում գործելավոր՝

Անցկացված հետազոտության արդյունքների հիման վրա մեր կողմից մշակվել է անձնակազմի գնահատման և ընտրության այնպիսի հոգեբանական համակարգ, որը հնարավոր է կիրառել տարբեր ոլորտներում: Ի սկզբանե մեր առջև դրված էր խնդիր՝ համադրել տարբեր բլոկերի տվյալները (իրազեկվածություն, ինտելեկտ, անձնային որակներ) և բացահայտել դրանց առաջնայությունը, իսկ երկրորդ հերթին՝ անհրաժեշտ էր հաշվարկել չափորոշիչների սահմանները կոնկրետ սեռատարիքային խմբի համար: Տարբեր փոխլրացնող մեթոդիկաների օգտագործման անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ դրանցից ոչ մեկը չի տալիս սպառնիչ տեղեկություն, որի հիման վրա կարելի էր ճիշտ որոշում կայացնել թեկնածուի բնութագրի վերաբերյալ:

Հետազոտության նախնական փուլում դիտարկվել են բավականին մեծ թվով մեթոդիկաներ՝ յուրաքանչյուր ախտորոշվող որակի առանձնահատկությամբ: Որոշ որակներ «մաղվեցին», որոշ մեթոդիկաներ էլ մոդիֆիկացվեցին ընտրության և հետազոտության պատվիրատու կազմակերպության առաջադրանքին համապատասխան: Այսպես, օրինակ, մեր կողմից խիստ հաշվի էին առնվում նախընտրելի որակները, պրոֆեսիոնալ գործունեության առանձնահատկությունները, հնարավոր թեկնածուների պատրաստվածության աստիճանը և այլն: Այդ տվյալները հիմնավորվեցին փորձագիտական հարցման արդյունքներով: Մշակված նորմերի հիման վրա էլ ստեղծվել էր թեկնածուի «դրական» հոգեբանական պատկերը տարբեր պայմաններում գործելու համար:

Բացի դրանից, հաշվի առնելով ներկայացվող առաջադրանքի դժվարությունը և կարևորությունը՝ մեր կողմից նաև ստեղծվել է թեստային առաջադրանքների ներկայացման հերթականության հստակ և միասնական համակարգչային համակարգ: Մշակված մեթոդիկան կազմված էր երկու համախմբերից, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին բաղկացած էր մի քանի ենթաբաժիններից: Այսպես, առաջին համախմբի մեջ էին մտնում անձի ընդհանուր զարգացվածության թեստը, ինչպես նաև օտար լեզուների իմացության և համակարգչային հմտությունների թեստերը: Երկրորդ համախմբումն ուղղված էր անձնային առանձնահատկությունների բացահայտմանը, որի հիման վրա էլ ստեղծվել է անհատական որակների համադրության մատրիցա, որը հնարավորություն է տալիս գնահատել այնպիսի բացասական հակումների առկայությունը, ինչպիսիք են՝ բարձր տագնապայնությունը, ագրեսիան, ադիկցիան, ստելու հակումը, ներքին կոնֆլիկտը, ինքնատիրապետումը և համառությունը, անհաջողության վախը և մի շարք այլ որակներ:

Այսպիսով, ելնելով վերը նշված թեստերից, ինչպես նաև հաշվի առնելով հայի սոցիո-մշակութային առանձնահատկությունները, կազմվեց մասնագիտական կարևոր որակների գնահատման միասնական համակարգ: Համակարգչային մոդելի մշակման գործընթացում օգտագործվել են համապատասխան բանաձևեր, միջոցներ, որոնք հուսալի՝ վալիդ կերպով

գնահատում են բոլոր որակները: Մեր կողմից առաջարկվող մոդելը ներառում է նաև կազմակերպչական կանոններ և գործելակարգ, որոնք կարգավորում են կադրային գնահատման կիրառումը և կադրերին վերաբերող որոշումների կայացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

На индивидуальном уровне успех любой стратегии определяется психологическим, физическим и эмоциональным дискомфортом. Впечатления об иной культуре эмоционально окрашены: чувствами отверженности, удивлением при осознании различий между культурами, беспокойства, тревожности, путаницей в ценностных ориентациях, социальной и личностной идентичности, проявляющимися как симптомы культурного шока (Садохин 2002). Это явление имеет и позитивную сторону: первоначальный дискомфорт ведет к принятию новых ценностей и моделей поведения и, в конечном счете, важен для личностного роста (Triandis 1994).

Особое значение придается проблеме психической адаптации человека к новой культуре. Она является результатом деятельности целостной самоуправляемой системы, процесса, включающего в себя два аспекта:

- а) оптимизация постоянного взаимодействия индивида с окружением;
- б) установление адекватного соответствия между психическими и физиологическими характеристиками.

При адаптации индивида те или иные условия вызывают эмоциональное напряжение не в силу их абсолютной жесткости, а в результате несоответствия эмоционального механизма этим условиям. При любом нарушении сбалансированности "человек - среда" недостаточность психических или физических ресурсов индивидуума для удовлетворения актуальных потребностей или рассогласование самой системы потребностей является источником тревоги (Селье 1960). Берензин провел исследование для определения тревоги в процессе психической адаптации личности. Тревожная реакция имела место у подавляющего большинства испытуемых (Стефаненко 2003). По показателям можно определить, что молодежь более адаптивна и менее подвержена воздействию внешней тревоги, чем люди старшего поколения. Следовательно, чем легче выстроена нервно-психическая система человека, чем он моложе и имеет сознание, свободное от предрассудков, тем легче происходит процесс адаптации и менее болезненно переносятся стрессовые ситуации.

Важными факторами, улучшающими психическую адаптацию в профессиональных группах, является организация микросоциального взаимодействия, социальная сплоченность, способность строить межличностные отношения, возможность открытой коммуникации.

Рассмотрение любой проблемы психического несоответствия будет неполным без исследований психической адаптации.

Мы провели исследование на выборке из иностранных студентов, местных студентов, местных жителей зрелого периода (общим количеством 126 человек). Методика включала в себя опросник, состоящий из специально подобранных конкретных ситуаций, которые выявляют ощущения, испытываемые человеком в инокультурной среде. Респонденты указали на те высказывания из опросника, которые соотносились с ощущениями, возникающими в стране пребывания, в первые несколько недель, на I этапе, и впоследствии, на II этапе.

При анализе ситуаций было выявлено, что в чужой стране люди (характеристики всех респондентов) в первую очередь все сравнивают со своей страной (на I этапе - 73,55% , на II этапе - 36,5%), им не терпится обследовать окрестности, попробовать местную кухню и выучить язык (71, 75% - 38%). Около половины респондентов (47,14% - 46,2%) приходят к выводу, что знания языка недостаточно для достижения полноценного общения. Респонденты указали, что:

- при вхождении в незнакомую среду они думают, что это лучшее приключение всей жизни (58% - 23%);
- их удивляло то, чего нет у них на родине (67,2% - 22,5%);
- в процессе адаптации есть ощущения неопределенного беспокойства (32,85% - 72%);
- они испытывают чувства, что все вокруг готовы им помочь (51, 07% - 14%) . Незначительную часть испытуемых посещают чувства:
 - все время хочется домой (12,85% – 62,2%);
 - местная культура кажется недостойной их, а местные жители кажутся грубыми и безразличными (8,9% – 14,4%);
 - потеряли интерес к работе (учебе) и с трудом сосредотачиваются (6,25% – 39,5%);
 - ничто не кажется им смешным (5%-7%);
 - они избегают общения с новыми людьми, так как чувствуют себя неуютно (5,1 % - 34,2%);
 - часто устают и плохо спят (3,5% – 41%);
 - испытывают чувство подавленности и некомпетентности (2,5% - 36,3%);
 - легко отчаиваются (0,14% - 29,2%);

Представленные результаты - упрощенная схема на самом деле сложного, многоэтапного процесса адаптации.

При анализе результатов легко просматривается динамика психо-эмоционального состояния индивидов: от позитивного, оптимистического до состояния безнадежности и отчаяния (в некоторых случаях). Данные характеристики мы сопоставили с так называемой кривой процесса адаптации по Триандису:

I этап, называемый исследователем “медовым месяцем”, характеризуется, как и в нашем исследовании, энтузиазмом, приподнятым настроением и большими надеждами (Triandis 1994).

II этап начинает оказывать свое негативное воздействие. На последующих этапах постепенно депрессия сменяется ощущением уверенности и полной адаптацией.

Мы также выявили индивидуально-психологические свойства личности при адаптации с помощью методики диагностики социально-психологической адаптации (Виттенберг 1994). Методика позволяет изучить адаптивность, уровень принятия себя и других, локус контроля, эмоциональную комфортность, уровень доминирования и эскапизма. При обработке результатов обнаружено, что более высокая адаптивность и более высокая интернальность свойственна студентам.

Эмоциональная поддержка, психологическая подготовка к межкультурной коммуникации, формирование этнопсихологической компетентности помогут избежать психологических трудностей при адаптации и случайных ошибок в психологической интерпретации поведения представителей другой культуры и позволят избежать психических энергозатрат. Данные проблемы особенно актуальны для сферы туризма, и их исследование доказывает необходимость работы психолога. В модели освоения чужой культуры, как справедливо утверждает М. Беннет, необходимо делать акцент на чувственном, эмоциональном восприятии и толковании культурных различий, то есть развивать межкультурную чуткость. Людям важно осознать не сходство между собой, а различия, потому что все трудности межкультурной коммуникации проистекают именно из-за неприятия межкультурной разницы. Адаптация начинается с эмпатии и заканчивается формированием плюрализма. Процесс психического роста от монокультурного к мультикультурному человеку – это процесс изменения, связанный с большим стрессом и напряжением из-за необходимости приспособления к давлению окружающей среды.

Бесспорно, мультикультурность должна стать важной человеческой и социальной ценностью, тем идеалом, к достижению которого следует стремиться.

Как показывают результаты исследования, наиболее важными характеристиками индивидуально-психологических черт личности при адаптации являются преобладающее психоэмоциональное состояние, возраст, пол. Одними из эффективных методов по подготовке к межкультурному взаимодействию являются культурные ассимиляторы. Их можно использовать в разных вариантах: как часть диагностического блока методик, как основу тренинга межкультурной сензитивности, как самостоятельный психолого-педагогический материал. Очень важно акцентировать эмоциональную поддержку как сопереживание, возможность высказываться и быть выслушанным.

ЛИТЕРАТУРА

- Балл, Г. А. (1989). Понятие адаптации и его значение для психологии личности. Вопросы психологии, №1,.
- Виттенберг, Е.В. (1994). Социально-психологические факторы адаптации к социальным и культурным изменениям, СПб,.
- Крысько, В. Г. (2002). Этнопсихология и межнациональные отношения. Москва.
- Налчаджян, А.А. (1988). Социально-психологическая адаптация личности, Ереван.
- Садохин, А.П. (2002). Основы межкультурной коммуникации, Москва.
- Селье, Г. (1960). Очерки об адаптационном синдроме, Москва.
- Смирнов, С. Д. (2003). Педагогика и психология высшего образования, Москва.
- Стефаненко, Т. Г. (2003). Этнопсихология, Москва.
- Столяренко, А. Д. (1999). Основы психологии. Практикум, Р.– Д.
- Хотинец, Ю.В. (2002). Формирование этнического самосознания студентов в процессе обучения в вузе. Вопросы психологии. Москва. №2.
- Berry, J. N. (1997). Immigration, acculturation and adaptation.
- Triandis, H.C. (1994). Cultural and social behavior, N.Y.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՐԲՈՒՀԻ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի Տարիքային և մանկավարժական հոգեբանության
ամբիոնի վարիչ

ԱՆՁԻ ԻՆՔՆԱԻՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՍՈՑԻԱԼ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ)

Ամփոփում: Հոդվածում քննարկվում է անցումային փուլին բնորոշ սոցիալ-
հոգեբանական փոփոխությունների լայնամասշտաբ տարրապատկերը՝ դիտարկելով այն որպես
ներկա կացութաձևի և հոգեբանական ինքնաարտահայտման հնարավոր արտահայտչաձևերի
բազմակերպություն: Անձի ուսումնասիրման վարքային դրսևորումների բացատրման
հնարավոր ուղիների մեջ առաջնահերթությունը տրվում է սոցիոդիզմի գաղափարին՝ որպես
անձի և նրա ուսումնասիրման հիմնական կողմնորոշիչ:

Հանգուցային բառեր և բառակապակցություններ: նորամուծության շուկա, սոցիալական
անկայունություն, ադապտացիա-դեզադապտացիա, վարքային հակազդումներ, սոցիալական
իրավիճակներ, նորամուծություններ:

Ժամանակակից աշխարհում նկատվում են հասարակական կյանքի զլոբալացման,
տեղեկատվության վերազինման, մարդու կենսագործունեության տարաբնույթ գործընթացների
ակտիվացման միտումներ, որոնք բնորոշ են երրորդ հազարամյակին: Սոցիալական
երևույթների փոփոխությունների և նորամուծությունների ազդեցության պարագայում փոխվում
են անձի ընկալումները և վերաբերմունքը դրանց հանդեպ: Հասարակական կյանք
ներթափանցած նորամուծություններն աչքի են ընկնում ոչ միայն իրենց մասշտաբայնությամբ,
հանկարծակի և սրընթաց հայտնվելով, այլև վնասակար ազդեցություններով, որոնց հետևանքով
անձն իրապես կորցնում է նախկինում ձևավորված ստերեոտիպերը, չի պատրաստվում
ընկալելու նորամուծություններով պայմանավորված փոփոխությունները, որոնց արդյունքում
ժամանակային առումով կորցնում է ապագայի իմաստն ու նշանակությունը:

Ընդհանուր հասարակական փոփոխություններով պայմանավորված՝ զարգացման
անցումային փուլի հոգեբանական մթնոլորտը և նոր սոցիալական իրավիճակներն
առաաջացնում են <<նորամուծության շուկա>> (<<ինովացիոն>> կամ <<փոփոխությունների շուկա>>),
որն ուղեկցվում է տհաճ զգացումներով (սոցիալական դիրքի փոփոխություն, ընկերների
կորուստ, զարմանք, մերժվածություն, անհարմարության զգացում և այլն), արժեքային
կողմնորոշումների և անձնային նույնականության բեկմամբ ու աններդաշնակությամբ:
Ինովացիոն շուկի ախտանշաններից են՝ տագնապայնությունը, ֆրուստրացիան, դեպրեսիան և
անվստահությունը: Անձը կարող է այն վերապրել 3 փուլով, որպես՝

1. Ոգևորություն և բարձր տրամադրություն: Անձի կողմից դրսևորվում են աննախադեպ
սոցիալ-քաղաքական ակտիվության, փոփոխությունների մեծ ցանկության, նույնիսկ
կարծրատիպերի փոփոխությունից առաջացած էֆորիայի զգացողություն:

2. Մոլորվածություն, դեպրեսիա, ֆրուստրացիա: Անձի կողմից սպասված
փոփոխություններն արագ և ցանկալի արդյունքներ չեն տալիս, այլ հանգեցնում են անցումային
փուլին բնորոշ անկանխատեսելի և հանկարծակի բացասական հետևանքների: Երկրի սոցիալ-

տնտեսական զարգացման անբարենհարմար ֆոնի վրա այս փուլը կարող է երկար տևել և օբյեկտիվորեն խորացնել սոցիալական իրավիճակի ընկալումն ու գնահատումը:

3. Թեթևություն, բավականություն, վստահություն: Այս փուլում արձանագրվում է սոցիալական փոփոխությունների կտրուկ առաջընթաց:

Սոցիալական տարբեր կարգավիճակից և անձնային նախատրամադրվածությունից ելնելով՝ մարդիկ տարբեր կերպ են զգում <<ինովացիոն շոկի>> ազդեցությունը, որի պարագայում իրենց հոգեկան վիճակն առաջին փուլում փոխելու ունակ մարդիկ այդ ազդեցության ներգործությունը այլ կերպ են վերապրում: Պարզվում է, որ սկզբնական շրջանում արժեքների աններդաշնակության փոփոխություններով պայմանավորված՝ հոգեբանական անբարենհարմարությունները հանգեցնում են նոր արժեքների, դիրքորոշումների, վարքի մոդելների ընդունման և փոփոխվող աշխարհին հարմարման: Այս դեպքում կարելի է խոսել նաև ինքնազարգացման և անձնային աճի, անձնավորության ինքնաիրացման, ինչպես նաև փոփոխությունների ընկալման արդյունավետության մասին: Հետևաբար հասարակական բարեփոխումների առաջընթացի, հասարակության արդյունավետ զարգացման դեպքում «ինովացիոն շոկը» կարող է ընթանալ այս սխեմայի շրջանակում՝ «ֆրոնտրացիա-հարմարում» և դիրքերի ու արժեքների «համաձայնեցում-ինքնիրացում», «անձնային աճ»:

«Ինովացիոն շոկի» արտահայտվածության աստիճանը, հարմարման տևողությունը և սխեման որոշվում են բազմաթիվ բնութագրերով: Նորին արդյունավետ հարմարումը ենթադրում է ձևավորված անձի ինքնազարգացում և ինքնաիրացում իր ամբողջականությունը չխաթարող, նոր, անձնային աճ պահանջող պայմաններում: Հետևաբար, «ինովացիոն շոկը» կարելի է դիտարկել որպես ինքնաիրացման պայման: Արդի փուլում անձի ինքնաիրացման հիմնական պայմաններից մեկը սոցիալական անկայունությունն է, որը դիտվում է տարբեր մակարդակներում՝ հասարակության, սոցիալական խմբի և անձի: Ըստ Գ.Մ.Անդրեևայի՝ սոցիալական մակարդակում անկայունությունը դիտարկվում է նորմատիվային պատկերացումների առավելագույն դրսևորումների ճգնաժամի տեսանկյունով: Գոյություն ունեցող նորմերի և արժեքների, ինչպես նաև անցյալի երևույթների գիտակցումն ինքնաբերական հանգեցնում են ինչ-որ նոր պատկերացումների ստեղծման: Հասարակության մեջ սոցիալական անկայունության դրսևորումն ի հայտ է գալիս որպես սոցիալական ստրատիֆիկացիայի ուժեղացում: Ի վերջո նորմատիվային ճգնաժամը առնձին դեպքերում հանգեցնում է վարքի քրեական կամ հակամարդկային ձևերի տարածման:

Սոցիալ-հոգեբանական մակարդակում սոցիալական անկայունությունը դրսևորվում է մի քանի իրավիճակների սրընթաց աճով, որոնց մասին կոնկրետ խումբը չունի նորմատիվ հակազդումներ, կարգադրագրեր: Հանրությունների նոր տիպի առաջացումը սկզբունքորեն կառուցված է տարբերակային ընտրության ճկուն հիմքերի վրա: Այս պարագայում ինքնակազմակերպման և ինքնազարգացման նկատմամբ մասնակիցների համահավասար հարաբերությունները դիտարկվում են որպես խմբի ընդունակություն: Սոցիալական անկայունությունը դրսևորվում է նաև անձնային խնդիրների մակարդակում և ժամանակային առումով կապված է հեռանկարի խանգարման, տազնապայնության աճի, սոցիալական նույնականության ապակառուցման և այլ դրսևորումների հետ:

«Ինովացիոն շոկը» մարդուն դրդում է ակտիվ սոցիալական հարմարման: Անձի ակտիվությունը կարող է ուղղված լինել միջավայրին ավելի լավ և ամբողջական հարմարման՝ ի հաշիվ սեփական անձնային ներուժի: Այս պարագայում շեշտվում է ոչ միայն «Ես»-ի արժևորումը սոցիալական միջավայրում, այլև նրա ինքնափոփոխման, ինքնազարգացման և ինքնանույնականացման անհրաժեշտությունը: Փաստորեն, Կարլ Ռոջերսի խոսքերով սոցիալական հարմարման կորն առավելապես ուղղված է դեպի իրեն: Հայտնի է այն միտքը, որ մարդկանց մի մասի համար փոխվել նշանակում է ինքն իրեն նմանվել, մյուսների համար, ընդհակառակը՝ մյուսներից ոչնչով չտարբերվել:

Բոլոր դեպքերում անձնականի, ներանձնային կոնֆլիկտների և տարբեր մակարդակների սոցիալական փոփոխությունների փոխադարձ կապը և փոխհարաբերությունները բարդ են, բազմակողմանի և ոչ միանշանակ:

Այս առումով Վ.Բ.Օլշանսկին նշում է, որ «Սոցիալական հակասությունները», անհատի կյանքի ընթացքում կուտակվելով նրա «Ես»-ում (մասնավորապես, նույնականացման արդյունքում), կարող են հանգեցնել ներանձնային կոնֆլիկտի և դառնալ սոցիալական փոփոխությունների աղբյուր» (Ольшанский 1994: 196): Պարզվում է, որ սոցիալական փոփոխությունների աղբյուր կարող են լինել հիմնախնդիրը և անձնավորության կոնֆլիկտը, որոնք ինքնաբերական չեն վերանում կայացած հասարակության սահմաններում: Հոգեկան լարվածությունը դրսևորվում է դերային կոնֆլիկտում, ագրեսիայում, ֆրուստրացիայի դրսևորումներում, մարդու վարքի պաշտպանական հակազդումներում: Սոցիալական փոփոխության մակարդակին հասնող ներանձնային հիմնախնդրի փուլային վերարտադրումը բավականին բարդ է, չնայած պետք է կարծել, որ երկարատև և կայուն հասարակական վիճակը էապես կրճատում է անձնային զարգացման, ինքնաիրականացման և ինքնադրսևորման հնարավորությունները՝ ապակայունացնելով հասարակության ինքնազարգացումը:

Անձնավորության վրա հսկայական ազդեցություն են գործում հասարակական կյանքի բարեփոխումները, սոցիալ-հոգեբանական փոփոխությունները և ժամանակի ոգով ձևավորված նորամուծությունները: Արդի փուլում միաժամանակ և շատ կարճ ժամանակահատվածում տեղի են ունենում էական փոփոխություններ: Արդյունքում շատ նորամուծությունների իմաստը ազգաբնակչության մեծ մասի համար անորոշ է և բացառապես ընկալվում է երևույթի բացասական կողմը: «Ինովացիոն պայթյունը» մարդկանց մեջ առաջացնում է անհանգստություն, անվստահություն վաղվա օրվա հանդեպ, անորոշության զգացողություն: Սոցիալ-հոգեբանական ադապտացիան սոցիալական միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններին անհատի հարմարման շարունակական գործընթաց է, որը կապվում է անհատի կենսագործունեության և սոցիալական շրջապատի արմատական փոփոխությունների, անհատի դրդապատճառների, պահանջումների, անձնային տարաբնույթ որակների էական տեղաշարժերի հետ:

Բացի դրանից, ադապտացիան ոչ միայն ակտիվ հարմարման գործընթաց է, այլև նրա արդյունքը: Ի.Բ. Դերմանովան ուշադրությունը բևեռում է այնպիսի ֆենոմենների վրա, ինչպիսիք են՝ տոտալիտար գիտակցությունը և ստեղծագործական գործունեությունը (Дерманова 1996: 61):

Պարզվում է, որ տոտալիտար գիտակցության էական բաղկացուցիչ տարրերից մեկը արատավոր և ճշմարտությունների ակնհայտությունը չընդունող աշխարհի նկատմամբ սեփական ես-ի գերիշխանության զգացումն է, որի պարագայում մարդը զգում է իր պատկանելիությունը ազգությանը, տվյալ պետությանը, աշխարհին, քաղաքակրթության մեջ սեփական ընդգրկվածությունը: Այս ամենը որպես տոտալիտար գիտակցության հասարակական-մշակութային կողմ կարող է դիտվել և որպես ընդհանուր հոգեբանական մեխանիզմ, և որպես անհատական-անձնային գոյացություն: «Ես»-ը՝ որպես գիտակցության կազմակերպում, տոտալիտար գիտակցության ենթատեքստում բնութագրվում է այնպիսի իմացական հակումներով, որոնք անչափ նման են գեղարվեստական գրականության մեջ նկարագրված տոտալիտար համակարգերին: Որպես տիպական օրինակ կարելի է վկայակոչել ա/եսակենտրոնությունը (եսը որպես գիտելիքի ֆոկուս), բ/ցանկալի արդյունքների դեպքում պատասխանատվության ընդունումը, գ/անցանկալի դեպքում պատասխանատվությունից հրաժարումը և դ/կոզմիտիվ պաշտպանողական իմացական փոփոխությունների նկատմամբ կայունությունը /Ջ.Օռուել/:

Ստեղծագործող անձի առանձնահատկությունները մեծապես կապված են նրա դրդապատճառային և հուզական-կամային ոլորտի, այլ ոչ թե նրա կոզմիտիվ բնութագրերի հետ, մինչդեռ քննադատականության որակը անձնային դետերմինանտների մեջ հատուկ տեղ է

զբաղեցնում «ես» պատկերը, քանի որ կապ է նկատվում ստեղծագործական ընդունակությունների և նարսիցիզմի ցուցանիշների միջև: Այս իրողությունը հաստատվում է նաև նրանով, որ ստեղծագործող անձը գերազնահատում է իրեն, հակված է բացահայտ խոսելու իր «ես»-ի մասին: Ստեղծագործող մարդը ընդունակ է ինքնատիպ ընկալել ինքն իրեն և տարբերվել մյուսներից: Եթե անհատի կողմից գերիշխանության ձգտումը չի հաջողվում իրականացնել ընդունելի միջոցներով, ապա մրցակցությունը վերաճում է նյարդայինի, որը սոցիալական շրջապատի հանդեպ ադապտացիայի ծայրահեղ դեպք է՝ հիմնված տվյալ կոնկրետ մոտիվի վրա:

Ադապտիվ գործընթացների ակտիվացումը հաճախ հանգեցնում է սթրեսային վիճակների գոյացման: Որպես սթրեսային վիճակի հիմնական հատկանիշներ Լ.Վ.Կուլիկովը առանձնացնում է.

1. օրգանիզմի ամբողջական հակազդեցություն,
2. լարվածություն,
3. սպառնալիքի սպասում կամ ընկալում,

4. օրգանիզմի պաշտպանական ուժերի ակտիվացում և վերակառուցում, քանի որ ադապտիվ հակազդեցությունները բավարար չեն (Куликов 1995: 124):

Քանի որ ցանկացած լարում սթրեսի հատկանիշ չէ, «օրգանիզմի յուրաքանչյուր գործունեություն ուղեկցվում է լարվածությամբ, գործունեության մեջ ակտիվության դրսևորումը ներկայանում է որպես լարվածության աստիճան» (Мясищев 1970: 7): Լարվածությունը՝ առանց որևէ ադապտիվ գործընթացների ակտիվացման և տագնապի բարձրացման, սթրես չէ սովորական գործողության կատարման ժամանակ, այդ պատճառով ավելի ճիշտ է խոսել «լարվածության շարժի» (աճի կամ նվազման) մասին, որը նկատվում է գերակայող դրդապատճառի ինտենսիվության դեպքում: Սթրեսը միշտ չէ, որ դրսևորվում է լարվածության վերելքով: Թուլությունը և ապաստիան ևս սթրեսային հակազդեցության հնարավոր ձևերից են, երբ երկարատև ինտենսիվ լարվածությունը (մոտիվացիայի իջեցման պատճառով) կարող է հանգեցնել հրաժարման կամ ծայրահեղ բևեռային հուզական հակազդեցությունների (սուր աֆեկտից մինչև լիակատար անտարբերություն): Այսպիսով՝ սթրեսային վիճակի փուլային դինամիկայի որոշակի հատկանիշները (Գ. Սեյե) ընդհանուր են այն գործընթացների համար, որոնք ընթանում են ինչպես ֆիզիոլոգիական և հոգեբանական մակարդակներում, այնպես էլ, ըստ Լ.Վ.Կուլիկովի, սթրեսային վիճակը կապված է հետևյալ հիմնական գործընթացների հետ.

1. Սթրեսածին ազդեցության, որը ներգործում է սուբյեկտի վրա առանձին սթրեսի կամ ամբողջ իրավիճակի ձևով:

2. Իրավիճակի մեկնաբանման և գնահատման,

ա/ իրավիճակի պահանջների, ծանրաբեռնվածության չափի, սպառնալիքի աստիճանի (բարեկեցություն, առողջություն, հեղինակություն և այլն)

բ/ օրգանիզմի և անձնավորության հնարավորություններ,

գ/ իրավիճակի պահանջների և մարդու

հնարավորությունների հարաբերակցության:

3. Սթրեսային իրավիճակի վերապրման (երբ այն մեկնաբանվում է որպես սթրեսային):

4. Սթրեսային փոփոխություններ օրգանիզմում և անձնավորության մեջ, նկատի ունենք, որ հաճախ սթրեսածին ազդեցության «նշանակետ» կարող է լինել օրգանիզմի որևէ առանձին համակարգը կամ անձնավորության կողմը, նախնական սթրեսային շարժերը որևիցե օրգանի վնասվածքի կամ խանգարման, որևէ կողմի գերծանրաբեռնվածության (օր.՝ ինֆորմացիոն ծանրաբեռնվածություն), որևէ նշանակալի կապի կորստի, փոփոխության, սոցիալական որակի փոփոխության պատճառներով:

5. Աղապատացիոն գործընթացների հիմնական տեսակներից են.

ա/ հակազդեցությունը,

բ/ հարմարումը,

գ/ խուսափումը սթրեսածին ազդեցությունից:

Ըստ Ա.Ա.Կրիլովի և Լ.Վ.Կուլիկովի՝ ավելի բարձր իմպուլսիվությամբ և դոմինանտությամբ խմբում կայուն հոգեկան վիճակը բոլոր հիմնական չափորոշիչներով ավելի քիչ բարեհարմար է, քան ավելի ցածր ազդեցիվությամբ խմբում: 1-ին խմբի մասնակիցների մոտ բարձր է տագնապայնությունը, ավելի ուժեղ են տրամադրության տատանումները, բարձր է հոգնելու աստիճանը, ցածր է կյանքի ընթացքով բավարարվածությունը և կենսական իրավիճակների նկատմամբ ակտիվ վերաբերմունքը (Крылов, Куликов: 1995):

Սթրեսակայունության վիճակի անբաժանելի մասն են կազմում անձնավորության կամային հատկությունները, որը հաստատվել է նաև Ե.Ն.Իզնատովայի, Լ.Վ.Կուլիկովի, Մ.Ա.Ռոզանովայի փորձարարական հետազոտություններում: Վերջիններիս մեջ ընդգրկված է սոցիալական սթրեսների մի ամբողջ շարք կապված՝

- ամենօրյա նյարդայնացնող իրադարձությունների,
- սոցիալական դեպրիվացիայի կամ մեկուսացման,
- ծանր կենսական իրավիճակների (հիվանդություններ, մտերիմ մարդկանց մահ, նրանց կողմից վերապրվող դժվարություններ),
- աշխատանքի կորստի սպառնալիքի,
- միջանձնային հարաբերությունների խանգարումների (հուզականորեն նշանակալի),
- նյութական ապահովվածության դժվարությունների,
- հասարակության, կազմակերպության, խրի մեջ անձնավորության կարգավիճակի ազդեցության հետ:

Ամբողջ հոգեկան կարգավորման կարևորագույն օղակը սեփական «ես»-ի նկատմամբ անձի վերաբերմունքն է: Այսպիսով՝ սեփական սոցիալական և պաշտոնական կարգավիճակի մասին ունեցած «ես»-ի պատկերացումները, սեփական սոցիալական «ես»-ի ամբողջական պատկերը անձնավորության ինքնավերաբերմունքի անհրաժեշտ տարրերից են: Անձնավորության սոցիալական դերերի և նրա «ես»-ի ներդաշնակությունը կամ կոնֆլիկտայնությունը առավելապես որոշում են անձնավորության վարքը և նրա հոգեկան վիճակի առկա դրսևորումները:

Ըստ Լ.Վ.Կուլիկովի տվյալների՝ ամենաքիչ բարեհարմար վիճակ նկատվում է այն մարդկանց շրջանում, ովքեր զբաղված չեն մասնագիտական գործունեությամբ (կենսաթոշակառուներ, տնային տնտեսուհիներ և գործազուրկներ): Վերջիններիս մոտ ցուցանիշները համեմատաբար բարձր են, որով էլ կարելի է բացատրել նրանց համեմատաբար երիտասարդ տարիքով կամ անգործության իրողությամբ: Սակայն առանց աշխատանք չունենալու մարդու վրա ոչ միայն ճնշող ազդեցություն է ունենում, այլև հանգեցնում է սթրեսային վիճակի (Куликов: 1995):

Զբաղված բնակչության շրջանում սթրեսային վիճակներն ավելի արտահայտված են բանվորների շրջանում: Ուղղահայաց աստիճանակարգում ուսանողների և սովորողների շրջանում ոչ բարձր մակարդակն ինքն իրեն դեռևս սթրեսային գործոն չէ, քանի որ սթրեսի ցուցանիշները միջին մակարդակի են կամ մի փոքր բարձր: Ղեկավարների սթրեսն ավելի արտահայտված է բարձրաստիճան ղեկավարների շրջանում (արտադրություն, հիմնարկների և կազմակերպությունների առաջին դեմքեր): Ավերիչ սթրեսից դուրս գալու հիմքը բարձր

տրամադրությունն է՝ ինքնաիրականացման բարձր ցուցանիշներով և անձնային դիրքի ակտիվությամբ, ինչպես նաև ինքնաընդունման բարձր մակարդակը:

Ինժեներատեխնիկական աշխատողներն՝ ըստ իրենց հոգեկան վիճակի բնութագրերի, բավականին նման են միջին դասի ղեկավարներին, սակայն վերջիններիս շրջանում կա սթրեսակայունության որոշակի պաշար: Նրանց մոտ ավելի շատ է կյանքի ընթացքով և ինքնաիրացմամբ բավարարվածության միտումները և բարձր է ինքնաընդունման մակարդակը: Ինժեներատեխնիկական աշխատողների սթրեսակայունությունը կապված է ինժեներային աշխատանքի բնույթի հետ: Այդ մասին է վկայում ստեղծագործական ուղղվածության նշանակությունը, որը հետազոտված և ապացուցված է հոգեբանական հետազոտություններում:

Առավել բարեհարմար վիճակը բնորոշ է կառավարման ցածր օղակի ղեկավարներին, որոնց շարքին են դասվում բարձր որակավորմամբ մասնագետները և գիտական աստիճանով դասավանդողները: Հնարավոր է, որ ըստ պաշտոնների աստիճանակարգի տեղի ունենա սթրեսային վիճակը պայմանավորող տարբեր գործոնների ազդեցության որոշակի մարում, եթե վերանան ցածր մակարդակների ռիսկի գործոնները, և դեռևս բացակայեն բարձր մակարդակին դասվող գործոնները: Այս խմբում բարեհարմար տրամադրությունն առաջանում է առանց բարձր ինքնաընդունման, առանց սեփական «ես»-ի նկատմամբ հուզականորեն ջերմ ազդեցության:

«Ադապտացիա-դեգադապտացիա» մակարդակների միջանկյալ օղակը կարող է լինել «ռիսկի» հասկացությունը, որը հանդես է գալիս որպես ա)միջավայրի և անձնային ցուցանիշների յուրահատուկ ներդաշնակություն, բ)ոչ ադապտիվ ակտիվություն: Պարզ է, որ ռիսկը կարող է հանգեցնել ինչպես ադապտացիայի, այնպես էլ դեգադապտացիայի:

Նորարարական գործընթացներով պայմանավորված ռիսկը դիտարկվում է որպես տարբեր բնույթի և տեսակի փոփոխությունների նկատմամբ ռիսկի նոր տարբերակ, որի պահանջմունքն առաջանում է անցյալ կամ ներկա պահի դեգադապտացիայի պարագայում, սակայն ինովացիոն ռիսկի միջոցով կարելի է անցնել ադապտիվ վիճակի: Ռիսկային գործունեության անհաջողության դեպքում դեգադապտացիայի վիճակը կարող է պահպանվել կամ խորանալ:

Մեր պատկերացմամբ ադապտացիոն գործընթացը, որպես փոփոխվող պայմաններին հարմարման և նորամուծությունների նկատմամբ վերաբերմունքի գործընթաց, լայն իմաստով կարելի է դիտարկել որպես վերակառուցման, դիսպոզիցիոն համակարգի գործելու, մի ռեժիմից մյուսին անցնելու գործընթաց: Մի դեպքում դիսպոզիցիաների (դիրքերի) բարդ կազմակերպված աստիճանակարգ է, որը «զգայուն է» փոփոխությունների հանդեպ և կարող է արագ փոփոխվել կամ վերակառուցվել: Մյուս դեպքում դիսպոզիցիաները խիստ համաձայնեցված համակարգեր են, որոն ուղղված են իրենց յուրահատուկ կառուցվածքը պահպանելուն, դանդաղ են վերակառուցվում՝ նույնիսկ ի վնաս փոփոխվող իրավիճակին միտված ադապտացիայի, սակայն ապահովում են անցյալ փուլի վերափոխման բովանդակությունը:

Վերլուծելով միջավայրի մեջ ներառվելու գործընթացը՝ Ի. Ա. Միլոսլավովան առանձնացնում է սոցիալական ադապտացիայի 4 հիմնական փուլ.

ա) Հավասարակշռում: Միջավայրի և անհատի միջև հավասարակշռության հաստատում, դրսևորում է փոխադարձ համբերատարության գործընթացում, մեկը մյուսի արժեքային համակարգերի և վարքի կարծրատիպերի համադրման պայմաններում:

բ) Կեղծ հարմարում: Արտաքին հարմարավածության համադրումը նրա նորմերին և պահանջներին՝ արդեն կազմավորված բացասական վերաբերմունքի պարագայում:

գ) Հարմարեցում: Նոր իրավիճակի արժեքային համակարգերի ընդունում, փոխադարձ զիջումներ:

դ) Նմանեցում: Անհատի հոգեբանական վերակոդմնորոշում, նախկին հայացքների, կոդմնորոշումների, դիրքորոշումների վերափոխում՝ ըստ նոր իրավիճակի (Кропоткин: 1992):

Այսպիսով, սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացը՝ որպես փոփոխվող պայմաններին հարմարման և նորամուծությունների նկատմամբ վերաբերմունքի լայնամասշտաբ

գործընթաց, բովանդակային իմաստով կարելի է դիտարկել որպես վերակառուցման, դիսպոզիցիոն համակարգում գործելու, մի ռեժիմից մյուսին անցնելու գործընթացների շարք: Մի տիպը դիսպոզիցիաների (սոցիալական դիրքերի բարդ կազմակերպում) աստիճանակարգ է, որը ոչ միայն զգայուն է փոփոխությունների հանդեպ, այլև կարող է արագ փոփոխվել և վերակառուցվել: Մյուսը՝ դիսպոզիցիաների համապատասխանեցված համակարգ է, որն ուղղված է իր կառուցվածքը պահպանելուն, դանդաղ է վերակառուցվում՝ նույնիսկ ի վնաս փոփոխվող իրավիճակի հանդեպ ադապտացիայի, սակայն ապահովում է անցյալ փուլի վերափոխման բովանդակությունը և արտահայտաձևները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Нартова-Бочавер, С.К. (1993). Два типа нравственной самоактуализации личности.// Психологический журнал. Т.14. N 4.
- Кропоткин, П. А. (1992). Взаимная помощь среди животных и людей как двигатель прогресса. Москва.
- Ольшанский, В.Б. (1994). Практическая психология для учителей. Москва.
- Куликов, Л. В. (1995). Стресс и стрессоустойчивость личности. Теоритические и прикладные вопросы психологии. / Под ред. А.А.Крылова/ Ч.1. СПб.
- Мясищев, В. Н. (1970). Предисловие // Эмоциональный стресс. Физиологические и психологические реакции. Москва.
- Андреева, Г. М. (2004). Социальная психология. Москва.
- Дерманова, И.Б. (2006). Типы социально-психологической адаптации и комплекс неполноценности // Вестник СПб., Сер. 6, Вып. 6.
- Советова, О. С. (2010). Основы социальной психологии инноваций. Изд. СПб.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՐԲՈՒՀԻ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի «Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի» ֆակուլտետի դեկան

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՎԱԶԳԵՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Զարգացման և կիրառական հոգեբանության» ամբիոնի հայցորդ

ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Փոխակերպվող հասարակությունը աչքի է ընկնում իրեն բնորոշ սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների փոփոխությունների բազմազանությամբ: Դրանում իրականացվող բարեփոխումները ուղղված են հասարակության բոլոր խավերի համար՝ բարեկեցիկ կյանքի պայմաններ ստեղծելուն: Այդ փոփոխությունների սկզբնական փուլերում նախկին ապրելակերպի կարծրատիպերի կտրուկ փոփոխությունների պատճառով առաջ են գալիս լուրջ դժվարություններ: Դրանք արտահայտվում են մարդկանց օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական համակարգերի գործառնության հնարավորությունների փոփոխության, ապահարմարման ձևերով (Куликов 2004: 221):


Գործարար հարաբերությունները (բիզնես) իրենց սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով խիստ կերպով տարբերվում են միջանձնային փոխհարաբերությունների մնացած դրսևորումներից: Հոգեբանական առումով դրանցում բխվում են տվյալ բիզնես բնագավառին առնչվող բազմաթիվ մարդկանց շահեր (ապրանքը թողարկողից մինչև իրացնողը, գովազդողներն ու մինչև շուկա հասցնող կազմակերպություններն ու դրանց ղեկավարները): Բիզնեսում որպես հիմնական կապող գործոն է կոդմերի հետապնդվող շահույթը, իսկ որպես գործընթացի մասնակից՝ ապրանքի իրացմանն ուղղված տարբեր շահագրգիռ կառույցները (արտադրանքի կազմակերպումից մինչև արտահանումը, պահեստավորումն ու իրացման գործընթացին մասնակցող բոլոր օժանդակ կառույցներում գործող անձինք):

Ապրանքի (արտադրատեսակի) շուրջ տեղի ունեցող բոլոր փոխհարաբերություններն ու գործընթացները կապված են մարդկային գործոնի հետ, որոնք առնչվում են անհատական մակարդակից (սպառող) մինչև սպառման գործընթացին նպաստող տարբեր կազմակերպություններ, կոլեկտիվներ, առևտրական ձեռնարկություններ:

Գործարար միջավայրում ցանկացած սոցիալական խումբ ուղղված է որոշակի գործունեության ծավալման, ուստի այն անհրաժեշտաբար կարիք ունի խելացի, բանիմաց, բնագավառի առանձնահատկություններին տիրապետող, կառավարող ղեկավարի:

Ժամանակակից առևտրատնտեսական հարաբերությունների կառավարման չափանիշը արդյունավետությունն է, որը իր մեջ ներառում է ինչպես մարդկանց պահանջմունքների բավարարվածություն, այնպես էլ բիզնես կազմակերպության տարբեր օղակների միջև շահագրգռվածություն, արդյունավետ, հեռանկարային համագործակցություն բոլոր մակարդակներում (Егоршин 2008: 27):

Արդյունավետության չափանիշ



Գծապատկեր 1. Արդյունավետ ղեկավարման չափանիշներ:

Գ. Մինցբերգը (և ուրիշներ) առաջադրում է արդյունավետ ղեկավարման հետևյալ չափանիշները, որոնք առնչվում են կոլեկտիվի անդամների հոգեբանական և սոցիալ-տնտեսական ոլորտների առանձնահատկություններին (Минцберг 2004: 316): Հեղինակների կողմից նկարում առաջարկված հոգեբանական և ոչ հոգեբանական գործոնները առնչվում են անձի հոգեբանական կառուցվածքի և սոցիալ-տնտեսական դրության ոլորտին:

Անձի ակտիվության հիմքում ուրիշ այլ պահանջմունքների շարքում ընկած են հենց այս կարևորագույն գործոնները (գծ. 1), որոնք հանդիսանում են նրա ներքին և արտաքին միջավայրից լրացվող էներգետիկ աղբյուրները: Նշված գործոնները ունեն դեմոստրացիոն բնույթ, որոնք հիմնավորում են ձեռնարկության և ղեկավարի արդյունավետության անձնային և սոցիալ-տնտեսական կողմերը:

Մասնագիտական գրականության վերլուծությունները ցույց են տալիս (Емельянов 1998, Питер, Друкер 1994, Тренев 2000), որ նույնիսկ բարձրակարգ մասնագետների առկայության պայմաններում ձեռնարկության արդյունավետությունը կարող է ցածր լինել, եթե ղեկավարը չի տիրապետում գործունեության ղեկավարման արդյունավետության պահանջներն ապահովող անձնային և մասնագիտական որակների:

Անձնային որակները հանդիսանում են ղեկավարի արդյունավետ կառավարման հոգեբանական կողմն ապահովող կառուցվածքային բաղադրամասը, որը իր կողմից իրականացվող ցանկացած նախաձեռնություն, որոշում ու ազդեցություն պետք է դրական արձագանք գտնի կոլեկտիվի անդամների մոտ: Դրանց շնորհիվ ղեկավարը կոլեկտիվի անդամների շրջանում հոգեբանական պատրաստակամություն է ստեղծում վերջնական արդյունքի հավանական արդյունավետության նկատմամբ: Ղեկավարի գործարար որակների մեջ ներառվում են նվիրվածությունը մասնագիտությանն ու կոլեկտիվի անդամներին,

վստահությունն ու հավատը իր և կոլեկտիվի անդամների հնարավորությունների նկատմամբ, շահագրգռվածությունը աշխատակիցների եկամուտների աճի նկատմամբ, նրբանկատությունն ու հոգատարությունը, նախաձեռնողականությունն ու ճշգրիտ որոշումների կայացման ունակությունը, արդարամտությունն ու անաչառ ներողամտությունը, աշխատանքի, որակի, մարդկանց գնահատելու կարողունակությունը: Սրանք և բազմաթիվ այլ որակներ ապահովում են կոլեկտիվ-դեկավար հոգեբանական կապն ու ձևավորում առողջ մթնոլորտ:

Մասնագիտական որակներից, հիմնարար բարձր գիտելիքներից բացի դեկավարը պետք է տիրապետի բիզնես միջավայրի տնտեսական քաղաքականության նրբություններին, ժամանակի զգացողությանը, հավանական փոփոխությունների կանխատեսման, պլանավորման և ծրագրերի իրականացման ժամանակակից գիտական առաջավոր տեխնոլոգիաներին:

Մյուս կողմից՝ արդյունավետության ապահովման կարևորագույն պայմանը առողջ, համերաշխ կոլեկտիվի ձևավորման և արդյունաետ կառավարման հմտությունների տիրապետումն է: Ցանկացած մտահաղացում, ծրագիր իրականացվում է բարձրակարգ մասնագիտական և անձնային որակներով օժտված կոլեկտիվի առկայության դեպքում: Այս տեսանկյունից կարևորագույն պահանջ է դառնում կոլեկտիվի անդամների մասնագիտական ընտրության գործընթացը: Կոլեկտիվի համալրման ավանդական մոտեցումները ժամանակից բիզնես միջավայրում հեռանկար չեն խոստանում: Այդ իսկ պատճառով, խելացի դեկավարը կոլեկտիվի համալրման գործընթացը իրականացնում է մասնագիտական ընտրությունը իրականացնող կոմպետենտ մասնագետների մասնակցությամբ, ինչպես նաև նորագույն հետազոտական միջոցների կիրառմամբ: Դրանում ներառվում են հոգեբաններ, տնտեսագետներ, սոցիոլոգներ, մանկավարժներ, բժիշկներ և այլ անհրաժեշտ մասնագետներ (Тренев 2000: 76): Մասնագիտական ընտրությանը հոգեբանական տեսանկյունից իրականացվում է հոգեբանական դիմանկերի և պրոֆեսիոգրամմայի կառուցման հիման վրա, ինչպես նաև հոգեբանական թեստերի կիրառմամբ: Սակայն սկզբնական մասնագիտական ընտրության գործընթացը վերջնական չէ և այն չի կարող բավարարել բիզնես միջավայրում տեղի ունեցող գործընթացների արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով պայմանականորեն ընտրված անձանց մասնագիտական պիտանելությունը բացահայտվում է փորձնական ժամանակաշրջանում ընտրված անձնակազմի գործարար կողմերը բնութագրող կոնկրետ հանձնարարությունների կատարման որակով, անձնային պատասխանատվությամբ, շահագրգռվածության աստիճանով, նրանց մասնագիտական մտածողության ստեղծարարության (креативность) և հնարամտության աստիճանով:

Խմբային, թիմային գործունեության ժամանակ գնահատվում է միջանձնային հարաբերություններում նրանց կողմից դրսևորվող համագործակցության, մասնագիտական և անձնային որակների փոխադարձ փոխարինելիության կարողությունները, համագործակցության շարժառիթները, որոնք առնչվում են կոլեկտիվի հաջողությունների հետ (Питер, Друкер 1994: 174): Անշուշտ գործազրկության, տնտեսական, քաղաքական ճգնաժամի, զանազան դեֆիցիտների պայմաններում կոլեկտիվում ընդգրկվելու շարժառիթները մեծանում են և հաճախ փորձնական ժամկետում գտնվողները ցուցադրում են իրենց «պահեստային հնարավորությունների» առավելագույն կողմերը: Բայց և հենց այս հանգամանքը հանդիսանում է յուրօրինակ հոգեբանական ցուցիչ (индикатор), որում դիտողունակ մարդու համար ակնառու երևում է նրա վարքի դրսևորման «խաղային» բովանդակությունը:

Այսպիսով, որպես ամփոփում կարող ենք պնդել այն գաղափարը, որ արդյունավետ կառավարման գործընթացը համալիր գործոնների ամբողջություն է, որին պետք է տիրապետի ժամանակակից բիզնեսի միջավայրում գործող յուրաքանչյուր դեկավար: Այն հանդիսանում է անձնային և մասնագիտական որակների, կազմակերպչական կարողությունների, հավանական զարգացումների ճշգրիտ կռահման և համապատասխան որոշումների կայացման ընդունակություններ ունեցող դեկավարի մասնագիտական պիտանելության հիմնական բնութագիրը:

Հանգուցային բառեր. Փոխակերպվող հասարակություն, գործարար միջավայր, արդյունավետ ղեկավարում, անձնային որակներ, հոգեբանական կառուցվածքային բաղադրամասեր, մասնագիտական ընտրություն, հոգեկան որակների փոխադարձ փոխարինելիություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Бодров, В. А. (1995). Психологический стресс. М., Наука.
- Егоршин, А. П. (2008). Управление персоналом: учеб. для вузов. - 3-е изд. Н.Новгород: НИМБ.
- Емельянов, Е. Н., Поварницына С. Е. (1998). Психология бизнеса М.: Экономика.
- Занюк, С. (2001). Психология мотивации. Киев, Ника-Центр, Эльга-Н.
- Куликов, Л. В. (2004). Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики. Москва, ПИТЕР.
- Ломов, Б.Ф. & Сурков, Е.Н.(1980). Антиципация в структуре деятельности. М.: Наука.
- Маслоу, А. (2003). Мотивация и личность. М., ПИТЕР.
- Минцберг, Г. (2004). Структура в кулаке: создание эффективной организации. Спб.: Питер.
- Питер, Ф., Друкер. (1994). Эффективный управляющий, Москва: ВСІ.
- Реан, А. А., Кудашев, А.Р. & Баранов, А. А. (2006). Психология адаптации личности. СПб, « Прайм-Еврознак».
- Тренев, Н. Н. (2000). Стратегическое управление. Учебное пособие для вузов. М.: «Издательство ПРИОР».

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան, տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնի դոցենտ

ԺԱՆ ՊԻԱԺԵԻ ԿՈԳՆԻՏԻՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ժամանակակից կրթության ոլորտում առավել հաճախ շրջանառվող սովորողակենտրոն ուսուցման մեկնաբանության և վերլուծության տեսանկյունից խիստ ուշագրավ է շվեյցարացի հայտնի հոգեբան Ժան Պիաժեի կոգնիտիվ (իմացական) զարգացման տեսությունը:

Նախ փոքր-ինչ մանրամասնենք, թե ի՞նչ ենք հասկանում սովորողակենտրոն ուսուցում (ուսումնառություն) ասելով: Այն անմիջականորեն առնչվում է պրոգրեսիվ կրթության գաղափարի հետ, որը ձևակերպել է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին: Ըստ պրոգրեսիվ կրթության հիմնարար մոտեցման՝ կրթությունը պետք է կենտրոնա սովորողի և նրա հնարավորությունների բացահայտման վրա: Դյուիի կարծիքով կրթության գործընթացի կազմակերպման համար ելակետ պետք է լինեն երեխայի հետաքրքրություններն ու փորձը: Կրթության գործընթացում կենտրոնական դերը երեխան է, սովորողը: Նա արեգակ է, որի շուրջը պտտվում է ողջ կրթական գործընթացը: Երեխայի ուժերը պետք է հայտնաբերվեն, հետաքրքրությունները՝ բավարարվեն, ընդունակությունները՝ մարզվեն (John Dewey 1900):

Հատկանշական է, որ պրոգրեսիվ կրթության գաղափարների հիման վրա սկզբնավորեց կառուցողականության տեսությունը:

Գոյություն ունի ուսուցման գործընթացի դիտարկման երկու մոտեցում: Առաջինը ենթադրում է, որ ուսուցիչը պետք է կազմակերպի պատրաստի գիտելիքի փոխանցումը սովորողին, «գիտելիք տա», «գիտելիք հաղորդի», իսկ սովորողն իր հերթին պետք է «վերցնի գիտելիքը»: Սա *ուսուցման դիրեկտիվ մոտեցումն է*, ուսուցման *ուսուցչակենտրոն (կամ ուսումնակարգապահական) մոդելը*: Ի դեպ, դիրեկտիվ ուսուցման դիրքորոշումներն ու մեթոդները հաջողությամբ համապատասխանում են ուսուցման վարքաբանական տեսություններին, որոնք, որպես կանոն, ընդգծում են ուսուցչի դերի կարևորությունը:

Երկրորդ մոտեցման հիմքում ընկած է այն համոզումը, որ ուսուցումը տեղեկատվության պարզ փոխանցում չէ: Այն ընդգծում է սովորողների ակտիվ մասնակցությունը ուսուցման գործընթացին, սովորողների կողմից տեղեկատվության յուրացումն ու սեփական գիտելիքի կառուցումը, ուսումնառություն բացահայտումների միջոցով: Այս մոտեցումն էլ ընդունված է անվանել *կառուցողականություն (կոնստրուկտիվիզմ), դեպի անձը կողմնորոշված ուսուցման մոդել, սովորողակենտրոն ուսուցում (ուսումնառություն)*: Այս մոտեցման համաձայն՝ ուսուցման գործընթացը միտված է ոչ թե ուսուցչին, այլ սովորողին: Այն հաճախ հակադրվում է դիրեկտիվ ուսուցման մեթոդներին, որոնք ուսումնական գործընթացի կենտրոնում տեսնում են ուսուցչին՝ որպես գիտելիքի հիմնական աղբյուր: Իհարկե կառուցողականության կողմնակիցներն ամեննին չեն անտեսում ուսուցչին, չեն առաջարկում նրան «ձեռքերը ծալած նստել». ուսուցիչը հանդես է գալիս որպես միջնորդ տեղեկատվության, գիտելիքի և սովորողի միջև, սովորողի ակտիվ գործունեությունն ուղղորդող: Ուսուցիչը ստեղծում է, այնպիսի կրթական միջավայր, որտեղ սովորողն ինքնուրույն է ձեռք բերում գիտելիքները:

Վերը նշված մոտեցումների սկզբունքային տարբերությունները դրսևորվում են նաև «գիտելիք հաղորդել», «գիտելիք տալ» և «գիտելիք ձեռքբերել» ձևակերպումներում: Եթե «գիտելիք հաղորդել», «գիտելիք տալ» ձևակերպումները (ուսուցման դիրեկտիվ մոտեցում) սովորողին նախանշում են տեղեկատվության և գիտելիքների պասսիվ ընդունողի, «վերցնողի» դեր, ապա «գիտելիք ձեռք բերել» ձևակերպումը (ուսուցման կառուցողական մոտեցում, սովորողակենտրոն ուսուցում) սովորողին ընձեռում է տեղեկատվությունը տնօրինողի դեր: Այն ենթադրում է ակտիվ փոխգործունեություն սովորողի և գաղափարների, հասկացությունների միջև,

վերջիններս, ստեղծագործաբար համադրելու միջոցով, վերախմաստավորելու և ձևափոխելու բարդ գործընթաց: «Մարդու բոլոր դեկլարատիվ գիտելիքները կարելի է պատկերացնել որպես փոխկապակցված դատողությունների մեծ ցանց» (Ellen D.Gagne 1985):

Սովորողին հնարավորություն է ընձեռվում տեղեկատվությունը և գաղափարները քննության ենթարկել, վերլուծել, ձևափոխել, խորհել դրանց նշանակության մասին, դիտարկել դրանք հակադիր տեսանկյուններից, հիմնավորումներն ամրապնդելու համար կառուցել դրույթների համակարգ, և այդ կառույցների վրա հենվելով՝ գալ որոշակի դիրքորոշման: Ինչպես նշում է Ջ. Բրուները «...այսօր բավարար չէ երեխաներին բացատրել, թե ինչ անեն, օրակարգում այն հարցն է, թե ինչ են մտածում իրենց արածի մասին և ինչու են դա անում» (Bruner J. 1996):

Ժան Պիաժեի կոգնիտիվ զարգացման տեսությունն իրավամբ կարելի է համարել սովորողակենտրոն ուսուցման և կառուցողականության տեսության առանցքը:

Ըստ Ժան Պիաժեի՝ մարդու զարգացումը հարմարման գործընթաց է, իսկ հարմարման բարձրագույն ձևը իմացությունն է, որը կարելի է ձևակերպել որպես հասկանալու արվեստ և շնորհ: Պիաժեն ուսումնասիրում է մտածողության կառուցվածքը և այն, թե ինչպես է միտքն աշխատում նոր տեղեկություն ստանալիս, ինչպես է մարդը ձեռք բերում, մշակում և կիրառում տեղակատվությունը: Պիաժեն համոզված էր, որ միտքը ոչ թե սոսկ արձագանքում է ազդակներին, ինչպես կարծում էին բիհեյվիորիստները (վարքաբաններ), այլ նաև աճում, փոփոխվում և հարմարվում է աշխարհին: Հարմարումը, ըստ Պիաժեի, ենթադրում է երկու կարևոր գործընթաց՝ ասիմիլիացիա և ալոմոդացիա: Ասիմիլիացիան ենթադրում է արտաքին ներգործությանը տրվող այնպիսի պատասխան, որը հիմնվում է մարդու արդեն ունեցած փորձի վրա: Ասիմիլիացիայի դեպքում տեղի է ունենում վաղօրոք ձեռք բերված փորձի համապատասխանեցում տվյալ իրավիճակին, ասիմիլիացնել նշանակում է կիրառել ունեցած փորձը: Ալոմոդացիան ենթադրում է պատասխան ռեակցիայի փոփոխություն ստացվող փորձի հիման վրա: Ալոմոդացիան գործունեության կամ ունակության ձևափոխումն է շրջապատող միջավայրի, տվյալ իրավիճակի պահանջներին համապատասխան: Եթե ասիմիլիացիայի ժամանակ անտեսվում են իրավիճակի որոշ կարևոր ասպեկտներ, քանի որ նրանք չեն համապատասխանում մարդու ունեցած փորձին, ալոմոդացիայի ժամանակ հաշվի են առնվում բոլոր նոր ասպեկտները: Արդյունքում ասիմիլիացիան կոգնիտիվ համակարգի փոփոխության չի բերում, քանի որ ունեցած կարողությունները աստիճանաբար ամրապնդվում են և ռեակցիաները հասցվում են ավտոմատացման: Մինչդեռ ալոմոդացիան զարգացնում է իմացական համակարգը նախկին փորձի, վարքի և իմացության ձևափոխման միջոցով: Ասիմիլիացիան և ալոմոդացիան անբաժան գործընթացներ են: Յուրաքանչյուր գործողություն ենթադրում է և՛ ասիմիլիացիա, և՛ ալոմոդացիա: Ցանկացած իրավիճակ մենք սկզբում ասիմիլիացիայի ենք ենթարկում, որից հետո նոր միայն կարող ենք իրականացնել ալոմոդացիա:

Պիաժեի տեսության հիմնական յուրահատկությունն այն է, որ մտածողությունը, և հենց հարմարման այս գործընթացները ակտիվորեն մասնակցում են ուսումնառության գործընթացին: Եթե տեղեկությունը կամ փորձառությունը, որին սովորողը հանդիպում է, համապատասխանում է գոյություն ունեցող մտային կառույցին (կոգնիտիվ սխեմա), այն յուրացվում է (տեղի է ունենում ասիմիլիացիա), հակառակ պարագայում ուղեղը կարող է մերժել կամ հարմարեցնել այն (տեղի է ունենում ալոմոդացիա): Այսպիսով, յուրացնել նշանակում է նոր փորձառությունը կամ տեղեկությունը մեկնաբանել գոյություն ունեցող մտային կառույցների, սխեմաների միջոցով՝ առանց դրանք փոփոխելու, իսկ հարմարեցնելը մտային կառույցների, սխեմաների փոփոխումն է նոր փորձառությունն ու տեղեկությունը ներառելու նպատակով: Ուսուցման ընթացքում ծագող իրավիճակների մեծ մասը ենթադրում է փոխազդեցություն այս երկու գործողությունների միջև:

Պիաժեն առանձնացնում է զարգացման էությունը բնութագրող չորս հիմնական գործոն՝ հավասարակշռություն միջավայրի հետ, հասունացում, ակտիվ փորձ և սոցիալական փոխներգործություն:

Առաջին գործոնը հավասարակշռությունն է՝ ասիմիլիացիայի և ալոմոդացիայի միջև բալանսի պահպանումը: Եթե ամեն անգամ երեխան ասիմիլիացիայի ենթարկի իր պատասխան ռեակցիան, այսինքն համապատասխանեցնի իր ունեցած փորձը կոնկրետ իրավիճակին, որակական ուսուցում-ուսումնառություն տեղի չի ունենա: Նա ամեն անգամ կկրկնի նույն գործողությունները, որը կհանգեցնի փորձի սոսկ քանակական փոփոխության: Մյուս կողմից՝ եթե երեխան ամեն անգամ պետք է վերափոխի իր գործողություններն ու ունակությունները կոնկրետ իրավիճակի պահանջներին համապատասխան, այսինքն իրականացնի ալոմոդացիա, այն նույնպես բացասաբար կազդի զարգացման տեմպի վրա: Բերենք օրինակ դպրոցական փորձից, երբ երեխան պետք է հաշվի երկրաչափական պատկերի մակերեսը: Եթե սովորողը, իմանալով քառակուսու մակերեսը հաշվելու սկզբունքը, այն օգտագործի շրջանի մակերեսը հաշվելու համար (գերակշռում է ասիմիլիացիան), ապա նա, բնականաբար, սխալ պատասխան կստանա: Մյուս կողմից՝ եթե սովորողը ամեն նոր խնդրի լուծման ընթացքում սկսի նորից մշակել երկրաչափական պատկերի մակերեսը հաշվելու սկզբունքը (ալոմոդացիայի գերակշռում), խնդրի լուծման արդյունավետությունը կտրուկ կիջնի և ուսումնառությունը շատ դանդաղ կընթանա:

Երկրորդ գործոնը հասունացումն է, կենսաբանական գործընթաց, որը ենթադրում է մարդու պոտենցիալ հնարավորությունների աստիճանական բացահայտում: Հասունացումը զարգացման բնույթը ուղղակիորեն որոշող գործոն չի համարվում: Ֆիզիկական հասունացումը, օրինակ, թույլ է տալիս վերահսկել լեզուն, շրթունքները և բերանի շարժումները, բայց առանց համապատասխան փորձի երեխան չի կարող խոսել:

Փորձի ակտիվ ձեռքբերումը զարգացման բնույթը որոշող երրորդ գործոնն է: Շրջապատի հետ ակտիվ փոխգործունեության արդյունքում երեխան պատկերացում է կազմում առարկաների և նրանց նշանակության մասին:

Չորրորդ գործոնը սոցիալական փոխազդեցությունն ու փոխգործունեությունն է: Այլ մարդկանց հետ փոխազդեցության շնորհիվ երեխան ճանաչում է ոչ միայն առարկաներն ու երևույթները, այլև մյուս մարդկանց և ինքն իրեն:

Եթե փորձենք միավորել վերը նշված գործոնները, ապա կունենանք Ժան Պիաժեի ընդհանրական ձևակերպումը երեխայի մտածողության զարգացման բնույթի և ընթացքի վերաբերյալ: Երեխաները ծնվում են մտավոր զարգացման պոտենցիալ կարողությամբ, որը ժամանակի ընթացքում աճում ու բարդանում է մտածողության ներքին կառույցների ծավալման և նյարդային համակարգում տեղի ունեցող հասունացման փոփոխությունների շնորհիվ: Զարգացումը տեղի է ունենում այն դեպքում, երբ երեխան փոխազդում է ֆիզիկական աշխարհի հետ և ներգրավվում սոցիալական փորձառությունների մեջ:

Զարգացման վերը նշած գործոնները Պիաժեի կոգնիտիվ զարգացման տեսության հենասյուներն են, որոնցից բխում են մի շարք կարևոր ուսուցման սկզբունքներ: Այդ սկզբունքները համապատասխանում են կառուցողականության և ուսումնառության սովորողակենտրոն մոտեցումներին: Ներկայացնենք դրանք:

- Ստեղծել հնարավորություն ֆիզիկական և մտավոր ակտիվության համար: Ակտիվությունը Պիաժեի զարգացման տեսության ելակետային եզրույթներից է: Երեխայի դասակարգելու, կապերը բացահայտելու և հաշվելու ունակությունները հիմնված են այնպիսի ակտիվ գործողությունների վրա, ինչպիսիք են համադրելը, վերլուծելը և համեմատելը: Մտավոր զարգացումը կարող է տեղի ունենալ միայն իրական առարկաների և երևույթների հետ ակտիվ փոխներգործության, շրջապատող աշխարհի հետ անմիջական շփման արդյունքում: Հետևաբար, ուսուցիչները պետք է

շրջապատող աշխարհի հետ սովորողի փոխգործունեության այդպիսի հնարավորություններ ստեղծեն :

- Ապահովել անհրաժեշտ բարդություն:

Ինչպես նշվեց, կոգնիտիվ զարգացման համար խիստ կարևոր է հավասարակշռություն պահպանել ասիմիլիացիայի և ալոմոդացիայի միջև: Ուսուցման գործընթացում սա նշանակում է որոշակի հավասարակշռություն հին և նոր նյութի միջև: Առաջադրանքները չպետք է լինեն չափազանց հեշտ կամ չափազանց բարդ: Դրանք հարկավոր է կազմել այնպես, որ լուծման, կատարման ժամանակ սովորողը կարողանա տեսնել նախ՝ ինչ-որ ծանոթ բան, որն ինքը կարող է հեշտությամբ հասկանալ (ասիմիլացիա), այնուհետև՝ ինչ-որ նոր բան, որը դեռ այդքան հստակ չի հասկանում (ալոմոդացիա): Լավագույն արդյունքն այն կլինի, որ նոր գիտելիքի ձևավորումը տեղի ունենա ունեցած փորձառության հիման վրա:

- Նպաստել սոցիալական փոխներգործություններին:

Երեխայի մտածողությունը զարգացման վաղ փուլերում եսակենտրոն է (էգոցենտրիկ), նա չի կարող և չի ցանկանում հաշվի առնել այլ մարդկանց հետաքրքրություններն ու կարծիքները: Երեխան սկսում է գիտակցել մտքերի փոխհամաձայնեցման կարևորությունը միայն սոցիալական փոխներգործության արդյունքում: Մտածողության սոցիալականացումը, բարոյական և խաղային կանոնների ձեռքբերումը և տրամաբանական մտածողության զարգացումը անհնար է առանց ամենօրյա ակտիվ վերբալ (խոսքային) փոխազդեցության: Ուստի, ուսուցման ծրագրերում հարկավոր է ապահովել ակտիվ փոխգործունեություն, որը պետք է ծավալվի ոչ միայն ուսուցչի և աշակերտի, այլև աշակերտների միջև: Ուսուցիչները պետք է ստեղծեն ուսումնառության այնպիսի միջավայր, կիրառեն ուսուցման ինտերակտիվ, համագործակցային մեթոդներ, որոնք հնարավորություն կտան սովորողներին ակտիվ փոխազդել միմյանց հետ, գիտելիքներ ձեռք բերել սոցիալական շփումների միջոցով:

- Գնահատել սովորողի պատրաստականությունը:

Այստեղ Պիաժեն առաջ է քաշում այն գաղափարը, որ առաջնայինը երեխայի զարգացումն է, որն իր ետևից տանում է ուսուցումը: Սա նշանակում է, որ ուսուցումը կազմակերպելիս հարկ է նկատի ունենալ երեխայի զարգացման իրական հնարավորությունները, որոնք էլ իրենց հերթին ապահովում են նոր հնարավորությունների ձեռքբերումը: Ուսուցիչը պետք է գնահատի սովորողի զարգացման, գիտելիքների ու կարողությունների իրական, արդի մակարդակը և դրա վրա կառուցի ուսումնառության գործընթացը: Հարկ է սկսել այնտեղից, ինչը երեխաները գիտեն, նոր նյութն ու փորձառությունը կապել հինի, արդեն իմացածի հետ: Պիաժեն հատկապես կարևորում է երեխայի հիմնարար կարողությունների (դասակարգում, պահպանում և այլն) մակարդակի գնահատումը:

- Աշխատել հասկանալ, թե ինչպես է մտածում երեխան:

Պիաժեն առաջին հոգեբանն է, ով ներկայացրել է երեխայի մտածողության առանձնահատկությունները և ցույց տվել, որ երեխայի և մեծահասակի մտածողության միջև հսկայական տարբերություն կա: Ըստ նրա՝ այդ տարբերությունը դրսևորվում է ոչ միայն նրանում, թե ինչ գիտեն, այլ նաև՝ թե ինչպես գիտեն: Սա նշանակում է, որ ուսուցման գործընթացում ուսուցիչը պետք է խուսափի սեփական մտքերն ու գաղափարները սովորողներին պարտադրելու գայթակղությունից և խրախուսի երեխաների ինքնուրույն մտածելու, սեփական մտքեր և տեսակետներ առաջադրելու կարողությունները: Նա պետք է նաև վերլուծի ստեղծված իրավիճակները և գնահատի դրանք երեխայի մտածողության անձնահատկությունների տեսանկյունից:

Այսպիսով, զարգացման մի փուլից մյուսին անցնելու ընթացքում երեխայի ճանաչողական ունակությունների փոփոխությունները կախված են միջավայրի, շրջապատի հետ նրա ակտիվ փոխներգործություններից: Հետևաբար, Պիաժեի կարծիքով երեխայի աճին աջակցելու համար մանկավարժները պետք է ավելի շատ օգնականի դեր ստանձնեն, որպեսզի երեխան կարողանա

ինքնուրույն հայտնաբերել ու սովորել՝ համեմատելով իր այսօրվա և երեկվա արդյունքները կամ իր և հասակակիցների մտքերն ու կարծիքները: Սովորողներին պետք է ավելի շատ ուղղորդեն նպատակային ուսումնական նյութերը, քան ուսուցիչները: Պիաժեն գտնում էր, որ երեխայի մտավոր զարգացմանը զուգընթաց ուսուցիչները պետք է այդ զարգացմանը համապատասխան դասավանդում ապահովեն: Օրինակ՝ զարգացման կոնկրետ փուլում գտնվող սովորողների համար տեսական գիտելիքների ընկալումն ու որոշակի հմտությունների զարգացումն ավելի արդյունավետ կլինեն, եթե կիրառվող նյութերն ու քննարկվող գաղափարները հիմնված լինեն երեխայի կենսափորձի, դասարանում ձեռք բերած կոնկրետ փորձառության, ոչ թե բանավոր հրահանգների, պատրաստի ճշմարտությունների փոխանցման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Брунер, Дж. (1997). Психология познания. Москва.
 Выготский, Л. С. (1999). Мышление и речь. Москва.
 Пиаже, Жан (1994). "Избранные психологические труды", Москва.
 Пиаже, Жан (1968). "Психология интеллекта", Москва.
 Пиаже, Жан (1994) "Речь и мышление ребенка", Москва.
 Пиаже, Жан, Инельдер, Б. (1975). "Генезис элементарных логических структур". Москва.
 Кулагина, И. Ю. (1998). Возрастная психология. Москва.
 Обухова, Л. Ф. (1981). Концепция Жана Пиаже: за и против. Москва.
 Bruner, J. (1996) The Culture of Education, Cambridge, MA: Harvard University Press.
 Dewey, J. (1900) School and Society.
 Driver, R., Asoko H., Leach J., Mortimer E. & Scott P. (1994). Constructing scientific knowledge in the classroom. *Educational Resercher*, 23 (7), 5-7.
 Ellen, Gagne, D. (1985). The cognitive psychology of school learning. Boston; Little, Brown.

ԽՈՒԴՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ,

ԱՆՁԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ՆՈՒՅՆԱՑՈՒՄՆԵՐԸ

Հանգուցային բառեր. նույնացման հոգեբանական մեխանիզմ, նույնացման ֆունկցիան, նույնացումների տեսակները, հիմնական և ածանցյալ նույնացումներ, նույնացման օբյեկտի հետ ընդհանրություններ:

Նույնացումը որպես հոգեբանական երևույթիստ կարևորվում է հոգեվերլուծության մեջ և բազմակողմանիորեն հետազոտվում, սակայն չնայած դրան, այս հիմնախնդրի հետ կապված բազմաթիվ հարցեր դեռևս բազմակողմանի հետազոտման կարիք ունեն:

Հոգեվերլուծության մեջ նույնացումը սահմանվում է որպես. «Հոգեբանական գործընթաց, որի միջոցով սուբյեկտն իրեն է վերագրում այլ մարդու հատկությունները, որակները, ատրիբուտները և մասնակիորեն կամ ամբողջությամբ համապատասխանեցնում է իրեն նրա կերպարին» (Лапланш, Понталис: 431):

Նույնականացումը կարևոր դեր է խաղում անձի ձևավորման գործում.

«...հանգեցնում է վարքային դրսևորումների՝ օբյեկտի գործողությունների և ապրումների նմանակման, նրա արժեքների և դիրքորոշումների ինտերնալիզացիայի» (Налчаджян 1988: 142): Ըստ Ժ. Լապլանշի և Ժ. Պոնտալիսի. «Ժամանակի ընթացքում (ինքնա)նույնացում հասկացությունը առաջատար դիրք գրավեց Ֆրեյդի աշխատություններում. այն է սկսեց հանդես գալ ոչ թե ուղղակի որպես հոգեբանական մեխանիզմներից մեկը, այլ որպես մարդկային սուբյեկտիվության ձևավորման գործընթաց» (Лапланш, Понталис: 432):

Ըստ մեզ, նույնացման մեխանիզմը ժառանգական հիմքեր ունի, որի ֆունկցիան տեսակային վարքի յուրացումն է: Նույնացման երևույթների կարելի է հանդիպել նաև կենդանական աշխարհում, ասենք, ձագերի իրենց ծնողների նմանակման պարագայում (ըստ մեզ, հատկապես չգիտակցված նմանակումների դեպքում առկա նույնացումը):

Հոգեվերլուծության մեջ խիստ կարևորվում են էդիպյան շրջանի նույնացումները, քանի որ հենց այդ նույնացումների շնորհիվ է ձևավորվում Գեր-ես-ը, նույնացման օբյեկտից վերցվում է հոգեկերտվածքի հիմնային բնութագրերը (Фрейд 1990):

Զ. Ֆրեյդն այս շրջանի նույնացումների հետ է կապում նաև բնավորության առնական ու իգական գծերի ձևավորումը (Фрейд 1990: 29-30): Պետք է ասել իհարկե, որ երեխան շատ ավելի վաղ տարիքից է սկսում նմանակել հարազատներին ու հատկապես ծնողներին և քանի որ այդ նմանակումները գիտակցված բնույթ չեն կրում, ապա դրանք նույնպես կարող են դիտվել որպես նույնացման դրսևորումներ, որոնց հիման վրա, ըստ երևույթին, ձևավորվում են բնավորության առանձին կողմեր:

Զ. Ֆրոյդը նույնացումը կապում է իդեալի կերպարի հետ նույնը լինելու ձգտմամբ (Фрейд 1926: 60), (Шниц 2001: 37) ըստ որում. «Նույնացման ձգտումն այնքան մեծ է և այնքան կարևոր դեր է խաղում օբյեկտային հարաբերություններում, որ երեխան առանց ընտրության նույնանում է սիրտօբյեկտի ցանկացած վարքի հետ, որ ի վիճակի է լինում վերագրել իրեն»:

Ըստ Ն. Մակ-Վիլյամսի, ոմանք ավելի հեշտ են կարողանում նույնանալ, քան ուրիշները, ինչը կարող է կապված լինել անձի տիպով (պարզվել է, որ հիստերոիդներն ավելի հեշտ են նույնացնում իրենց ուրիշների հետ, քան շիզոիդները) կամ հիմնային նույնականության առանձնահատկություններով (Мак-Вильямс 2001: 85):

Հոգեվերլուծության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում նույնացման տեսակների հիմնախնդրին: Այսպես, ըստ հաջորդականության և ժամանակային դրսևորումների տարբերակվում են առաջնային և երկրորդային նույնացումները, անակլիտիկ կամ հուզական

նույնացումները, որոնք ի հայտ են գալիս վաղ շրջանում երեխային հոգ տանող անձանց նկատմամբ, ըստ այլ պաշտպանական մեխանիզմների ներոնվածության առանձնացում են պրոյեկտիվ և ինտրոյեկտիվ նույնացումները (Мак-Вильямс 2001), ըստ ընդգրկման՝ մասնակի, ըստ պաշտպանական ֆունկցիայի՝ պաշտպանական և ոչ պաշտպանական, ըստ կայունության՝ իրավիճակային և կայուն: Առանձնացվում են նաև ժամանակավոր կամ մշտական, ընդհանուր, մասնավոր, խմբային, գիտակցության կողմից ընդունելի կամ անընդունելի, կոգնիտիվ և աֆեկտիվ նույնացումները (Johnson, Morgeson 2005): Լ. Էյդելբերգը առանձնացնում է պսևդոնույնացումը (<http://www.pep-web.org/document.php?id=ijp.019.0321a>): Ըստ այն հանգամանքի, թե վերլուծողը վերլուծվողի ո՞ր ասպեկտների հետ է նույնանում, առանձնացնում են կոմպլեմենտար և կոնկորդանտ նույնացումները (Racker 1960): Ըստ նույնացման ուղորտի, առանձնացնում են սեռային, սոցիալական, մասնագիտական: Ըստ նույնականության օբյեկտի, առանձնացնում են մայրական, հայրական, բազմակի նույնացումներ (Голубкова):

Մեր նախնական հետազոտությունները թույլտվեցին առանձնացնել նույնացման ևս մի տեսակ կամ առանձնահատկություն, այն է՝ հիմնական կամ գլխավոր և լրացուցիչ կամ ածանցյալ նույնացումները:

Հիմնական նույնացումն անձի մեջ առկա այն հարազատի կերպարն է, որի հետ նա առավելագույն ընդհանրություններ ունի, համարում է, որ այդ մարդն իր իդեալն է եղել, նրան է նա համարում իր կյանքի ամենանշանակալի մարդկանցից մեկը, որին նա ձգտել է նմանվել, կրկնօրինակել, նրա ճակատագիրն է կրկնել: Նման նույնացման հետևանքով մարդու մեջ ձևավորված բնութագրերը հաճախուղեկցում են նրան ամբողջ կյանքում:

Ածանցյալ կամ լրացուցիչ նույնացում ասելով, նկատի ունենք այն նույնացումները, որոնք եղել են անձի կյանքում, սակայն որոշիչ դեր չեն խաղացել: Անձը նույնացման օբյեկտներից «վերցրել է» առանձին հատկություններ, ինչ-որ ժամանակ այդ մարդիկ հանդես են եկել որպես իդեալներ: Այդ մարդկանց դերն իր կյանքում անձը չի համարում վճռական, չնայած նրանցից շատերը նրա համար իդեալ են եղել:

Նման եզրակացության մենք հանգեցինք՝ հետազոտելով հոգեբանական օգնության դիմած այցելուների նույնացումները և դրանց հետևանքով նույնացման օբյեկտի հետոնեցած ընդհանրությունները: Նշենք, որ մեր կողմից առանձնացվել է նույնացման հետևանքով ի հայտ եկած ընդհանրությունների հետևյալ տեսակները

1. ճակատագրի կամ կյանքի ուղու նմանություններ՝ ամուսնությունների և ամուսնալուծությունների նմանությունների, նույն տարիքում տեղի ունեցած իրադարձությունների նմանություն, կրթության և մասնագիտությունների ընդհանրություն և այլն:
2. Հոգեբանական ընդհանրություններ (բնավորություն, մտածելակերպ, սթրեսների հաղթահարման ստրատեգիաները, խոսքի առանձնահատկություններ, ճաշակի և նախապատվությունների առանձնահատկություններ և այլն):
3. Ֆիզիկական ընդհանրություններ (մարմնակազմվածք, դեմք, քայլվածք, մազերի բնութագրերը և այլն):
4. Սովորությունների ընդհանրություններ (ծխախոտ, ալկոհոլ, օրվա ռեժիմ, ֆիզիկական վարժություններ, տոները նշելու ավանդույթները, մարդկանց հետ շփման ընդհանրություններ և այլն):
5. Հիվանդությունների ընդհանրություններ:

Հիմնական նույնացման դեպքում անձի և նույնացման օբյեկտի միջև ընդհանրություններ կարելի է գտնել նշված ընդհանրությունների առնվազն չորս կետերում, իսկ ածանցյալ նույնացումների դեպքում առավելագույնը՝ 2 կետում:

Հիմնական նույնացման պարագայում ամենահաճախ ընդհանրություններն ի հայտ են գալիս ճակատագրի, սովորությունների, ապա հիվանդությունների, հոգեբանական

բնութագրերի և վերջում ֆիզիկական տվյալների (օրինակ, արտաքինի նմանությունը հաճախակի երևույթ չէր) ոլորտներում: Ըստ որում, ճակատագրի և հիվանդությունների կրկնության մեջ, ըստ մեզ, կարևոր դեր է խաղում ինքնաձրագրավորումը: Հետազոտվողները հաճախ էին, նշում, որ կրկնեն կամ կրկնել են նույնացման օբյեկտի ճակատագիրը, հաճախ վախենում էին հիվանդանալ նույն հիվանդությամբ ինչ նույնացման օբյեկտը:

Հիմնական նույնացումները հիմնականում վերաբերում են մանկական շրջանին, այն դեպքում, երբ ածանցյալ նույնացումները ավելի ուշ շրջանի արդյունք են:

Հիմնական նույնացման օբյեկտները խիստ հաճախ են ի հայտ գալիս անձի երազներում, նրա կյանքի հետ կապված ցուցումներ են տալիս, ուղղորդում են, իսկ ածանցյալները հազվադեպ են հանդիպում երազներում:

Ածանցյալ նույնացման դեպքում ընդհանրությունները, որ կային ինչ-որ տարիքում, ավելի ուշ կարող են վերանալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Голубкова, О.А. Механизм множественной идентификации в контексте межкультурного диалога в условиях глобализации. test.hse.spb.ru>media/190589/5coval.doc
- Лапланш, Ж., Понталис, Ж.Б. (1996). Словарь по психоанализу. Москва, Высшая школа, 431 с.
- Мак-Вильямс, Н. (2001). Психоаналитическая диагностика. Москва, Независимая фирма "Класс", 480 с.
- Налчаджян, А.А. (1988). Социально-психическая адаптация личности (формы, механизмы и стратегии). Ереван.
- Фрейд, З. (1990). Я и Оно. Москва, Меттэм, 32 с.
- Фрейд, З. (1926). Психология масс и анализ человеческого "Я", издательство "Современные проблемы", Москва.
- Шпиц, Р.А. (2001). Психоанализ раннего детского возраста. Москва, ПЕР СЭ; СПб.: Университетская книга.
- Johnson, M. D., Morgeson, F. P. (2005). Cognitive and affective identification in organizational settings. Paper presentation at the 64th Annual Meeting of the Academy of Management, Honolulu, HI, August, pp. 582-585.
- Racker, H. (1960). Transference and countertransference. Estudios sobre técnica psicoanalítica. Buenos Aires: New York: International Universities Press.
- <http://www.pep-web.org/document.php?id=ijp.019.0321a>

KUYUMCIYAN RITA

Master Degree in Psychoanalysis, Universidad Nacional de La Matanza, Argentina.
Licenciada in Psychology, Universidad de Belgrano, Argentina,
University Profesor of Asociación Escuela de Psicoterapia
para Graduados, Buenos Aires, Argentina.

DENIAL OF ARMENIAN GENOCIDE AND TRANSFORMATIONAL SOCIETY

The article reveals the question of how the *Denial of the Armenian Genocide* disturbs the mourning process in its survivors and descendants. This setback might psychologically explain certain transformational phenomena in the Armenian society. The *Denial of the Armenian Genocide* makes the genocide perfect: those dead have disappeared, they have never existed, and therefore, those unrecognized deaths disturb the relationship between the survivors and their historical past.

According to the unconscious function of secrets and traumas, the existence of which is totally ignored, in third generations may develop affective inconsistent behaviours, problems unsolved in previous generations that are transmitted like psychological inheritance.

In Armenian phenomena, the normal mourning process has been disrupted and the permanent *Denial of the Armenian Genocide* establishes the consequences of the trauma from generation to generation such as unconscious feelings of guilt, repetitions and impulses that lead to reactions like accidents or suicides and psychosomatic and mental disorders.

Key words and expressions: trauma, denial, work of mourning, trans-generational transmission.

When a country like Armenia undergoes so many historical and political changes in a reasonably brief time, its society makes great transformations to adapt to a new reality.

The research in which I proved my thesis on how the *Denial of the Armenian Genocide* disturbs the mourning process in its survivors and descendants, might explain psychologically the origin of certain transformational phenomena in the Armenian society.

Armenian Psychological Trauma.

Armenian people have lived a lifetime of psychological anguish and endurance to all types of sufferings because of their history of persecution and discrimination. Armenian psychological trauma can be applied to different periods, but my psychoanalytical investigation is centralized in the consequences of the *Denial of the Armenian Genocide* as a psychological trauma.

The psychoanalytical definition by Freud of psychological trauma is applied to describe an event in the person's life characterized by an excessive inflow of stimuli which causes the inability to react adequately, causing disorders and lasting pathological effects in the psychological organization.

The events of the Armenian Genocide with proceedings of violent atrocity are considered to cause a psychological trauma, even though its origin is different from an isolated traumatic event. The trauma of genocide attains another dimension in magnitude because it means years of continuous terror, physical cruelties, distressing hunger, loss of family, contemplation of torture, and murder of other human beings. Such events are expressed in an undeniable psychic suffering which goes beyond human tolerance, corresponding to a long-lasting trauma with difficulties in its psychological elaboration.

The Armenian Genocide as psychic trauma involves two dimensions:

A) *The Impact of the Trauma* because of the violence of the slaughters in the massive extermination.

B) *The Denial of Facts* as an essential piece in the genocide project which intends to remove all traces of the crime, using State strategies of concealment and secrecy to accomplish the premeditated mass massacre.

Therefore, the condition of the survivors of the Armenian Genocide includes two strongly related factors: (a) *The original trauma*: as disintegrating impact on personality.

(b) *Permanent effects of trauma*: as an omnipresent and unavoidable threat.

For that reason, the constant denial of the existence of the Armenian Genocide is an absolute threat that perpetuates the impact of trauma. Regarding the psychological reaction, Bruno

Bettelheim (1981), survivor of the Jewish Holocaust, establishes three different answers to extreme trauma in survivors:

1. A group of survivors lets the experience destroy them.
2. Another group tries to deny any lasting effect.
3. A third group starts a fight which might take his whole life, for the sake of remaining conscious.

Denial of the Armenian Genocide.

In order as to explain, "*What are the implications of the Denial of the Armenian Genocide for the mourning process in survivors and descendants?*" two aspects on denial must be explained.

1. Denial as an element in the ideology of every genocide project with its consequent psychic effects in survivors and descendants.
2. Denial as a psychological defence mechanism of the Armenians which include two spheres.
 - 2.1. Denial: psychological consequences are distinguished as regarding the lack of recognition of the Armenian Genocide.
 - 2.2. Denial: psychological effects upon the unbearable trauma of genocide.

The *Denial of the Armenian Genocide* has been carried out by the Turkish State from its beginnings, not acknowledging its existence and therefore, continuing their genocide plan until nowadays.

The refusal to recognize the Armenian Genocide is not a mere denial of the dead; it places death in a dimension of destruction and non-existence, which equals to the removal of all traces of the crime. The *Denial of the Armenian Genocide* makes the genocide perfect: those dead have disappeared, they have never existed, and therefore, those unrecognized deaths disturb the relationship between the survivors and their historical past.

When the permanency of the lack of recognition of the Armenian Genocide by the Turkish State continues, it reinforces the destruction of the mass murder. The erasing of the dead when they are not recognized means that the dead become the object of an historical denial from the collective memory, disturbing the process of mourning in survivors and descendants of the Armenian Genocide.

The complexity of a genocide project includes the destruction of all traces of a human group: it consists on annihilating not only individuals but also all their cultural inscriptions, *attempting to eliminate the origins of its history and collective memory*.

The extermination of individuals, together with the destruction of their culture, has the objective of suppressing all possible inheritance of a people and the memory of their ancestors; that is to say, the extermination implies *the destruction of the cultural identity* that identifies them. Without traces to witness the existence of a people's culture, the intention is to destroy the identity, the symbolic system and the historical memory.

The lack of recognition of the Armenian Genocide updates the trauma of genocide because the Armenians feel the crime is perpetuated: *those deaths never existed* (Piralian 1994).

The other aspect of the *Denial of the Armenian Genocide* is the psychological defensive mechanism in survivors and descendants when facing horrifying scenes, using denial so as not to remember the shocking scenario. The psychoanalytical concepts of the *denial* mechanism according to Freud, refers to the way an individual, when describing his feelings, thoughts or desires until that time repressed, defends himself from them by refusing that they belong to him. Therefore, the denial of the collective trauma appears in Armenians as a defensive mechanism when there is a refusal to recognize the reality of the traumatizing perception of the Armenian Genocide.

There are two different situations of denial which are linked and which has disturbed transmission of history: (a) survivors used denial to prevent remembering the horror of death, (b) descendants used denial when they avoided hearing the violent atrocities the generation before had suffered.

Mourning and Trans-generational Transmission.

The impact of the Armenian Genocide trauma creates an unbearable memory with psychological effects transmitted through generations: it turns out to be a non-elaborated circumstance on the deceased, and produces a disorganizing and deadly effect.

The transmission of trauma through generations is done by means of complex ties that bind them with the predecessors. This can be done by conscious mechanisms, though most of it takes place unconsciously.

Psychological inheritances are transmitted and unresolved traumas suspended in the unconsciousness of parents and ancestors are transferred like a strange body from one generation to another. The main work on the Freudian issue about transmission and inheritance during unconscious psychic processes is *Totem and taboo* (1912), in which Freud distinguishes two ways of transmission: one is related to tradition supported by the cultural and social apparatus, which guarantees the continuity between generations; the other one is composed by the psychological life of generations that is incorporated from the prohibitions that become part of the unconscious.

When there is denial of a reality because of the terror experienced, the painful past falls like a shadow upon a generation that remains silent and the creation of a secret is transmitted upon the descendants.

The unspeakable horrors that had left traces in the survivors of the Armenian Genocide, and its evil consequences with an oppressive atmosphere are still present in the transmission to their descendants. Witnesses of a traumatic reality must face the social speech as something that is denied or avoided. Helplessness in their experience transforms the trauma into un-integrated fragments inside the psychic structure, and breaks in the mind like something incomprehensible and unspeakable. This unspeakable emptiness is generationally transmitted like a *psychic tomb*, where survivors must receive those that disappeared. In this way, *a postponed mourning is transmitted to the second generation*, in which the dead body is incorporated like the only trace; suspended in the survivor's psyche, the corpse is enclosed like a secret, protected. The traumatic experience, psychologically non-elaborated, becomes *unspeakable* in the first generation, then *unmentionable* in the second generation, and it finally becomes *unthinkable* for the following generations. Influences between generations work through fragmented and broken symbols: there are no spoken representations of the event, but sensorial, affective and driving representations play an essential role.

According to the unconscious function of secrets and traumas, the existence of which is totally ignored, in third generations may develop affective inconsistent behaviors, problems unsolved in previous generations that are transmitted like psychological inheritance. Therefore, non-elaborated traumas in a generation might lead to the extinction of descendants' heirs with no space to elaborate the mourning (Tisseron 1997).

In Armenian phenomena, the normal mourning process has been disrupted and the extreme situation of the permanent *Denial of the Armenian Genocide* establishes the consequences of the trauma from generation to generation such as unconscious feelings of guilt, repetitions and impulses that lead to reactions like accidents or suicides and psychosomatic and mental disorders.

The descendants of the Armenian Genocide have inherited the *secret* of an unresolved trauma, with strange feelings, emotions and images that cannot be explained from their own psychological life.

The Armenian identity arises like an answer to the survival efforts against the traumatic aspects of the Armenian Genocide; the transmission of their millenary culture aims at preserving Armenian descendants as threatened by the genocidal project.

By means of a relentless mechanism of denial, the dominant Turkish speech of the victimizers has tried to stick the victims to the *incapacity to name* the violence experienced. Only when it is possible to name the crime, the work of mourning can be elaborated, otherwise, the mourning process lasts indefinitely for those unrecognized deaths (Piralian 1994).

Research on the disruption of the generational chain has been raised between the voices of the survivors who *remain silent* and those who *want to talk* (Primo Levi 1986), and two behaviors showing disturbance in the transmission of mourning was found:

a) The need to integrate Armenian history through repetitions on the genocide issue: the desire that the world does not forget the Armenian Genocide.

b) The absence of stories as denial because of the painful trauma: wishing to erase any painful memories.

Work of Mourning: Effects in a Transformational Society.

After the Armenian Genocide, as a consequence of the traumatic effect of the psychological pain due to the extent of the atrocities suffered and reinforced by the denial of the perpetrators, the Armenian survivors had no appropriate reference terms in language to reflect the extreme violence they had gone through.

They had to rebuild their lives and *forget* the horrors of the past so they plunged into a painful silence: *they did not want to talk or simply they just could not*. The first generation could only express their pain behind closed doors, which is the representation of an internal pain: survivors felt excluded, misunderstood and left to the loneliness of their experience, being vulnerable to new traumas. Only as from 1965, was there a turn into remembrance of the Armenian Genocide when changes appeared in the Armenian descendants, who were able to express in public their pain and commemorate the 50th anniversary with monuments, as the symbolic emblem of Dzizernagabert.

The Armenian descendants received an interruption of the generational chain transmission observed in the following factors:

a) The absence of stories on the genocide and Armenian history issues.

b) The repetition on the genocide and Armenian history issues.

The voices of those survivors and descendants who *remain in silence* and those who *want to talk* (Primo Levi 1986) are signs of consequences of a disturbed mourning transmission.

The *Denial of the Armenian Genocide* which disturbs the mourning process establishes an essential issue to understand the transformational society of Armenia in the psychological sphere.

The difference on the elaboration of mourning in each group of descendants of Armenia and Diaspora must be established as another aspect of this transformational society. For the Armenians of the Diaspora, their psychological pain is linked not only to the trauma of the Genocide, but also to the melancholy and nostalgia of leaving their homeland. The elaboration of trauma of the descendants in Armenia, who had the urge of survival in their own ancestral lands and who still have to endure the grievance of the continuous deaths like those at Arsaj, contribute to a different transformation in the work of mourning of the collective psyche.

Armenians must be conscious that many transformational events are interconnected to a painful past of each family, linked to things that were kept in silence and that bring psychological symptoms which might come from generations behind.

Therefore, the psychological effects of the *Denial of the Armenian Genocide* are still non-elaborated issues that remain in Armenian society which must be exposed as an important issue to examine in a transformational society.

REFERENCES

- Bettelheim, B. (1983). *Sobrevivir. El Holocausto una generación después [Surviving the Holocaust]*, Barcelona, Crítica,.
- Dadrian, V. (1991). *Documentation of the Armenian Genocide in Turkish Sources*, Israel, Institute on the Holocaust and Genocide.
- Freud, S. (1990). *The Psychopathology of Everyday Life*, Buenos Aires, Amorrortu Editores, vol. XIV.
- Freud, S. (1915). *Mourning and Melancolía*, Buenos Aires, Amorrortu Editores,
- Freud, S. (1927). *The future of an Illusion*, Buenos Aires, Amorrortu Editores, vol. XXI, 1990.
- Hovannisian, R. (1987). *The Armenian Genocide in Perspective*, New Brunswick, U.S.A., Transaction Books,.
- Käes, R., Faimberg, H., Enríquez, M., Baranes, J. (1996). *Transmisión de la vida psíquica*, Buenos Aires, Amorrortu Editores,.
- Kuyumciyan, R. (2009). *El Primer Genocidio del Siglo XX*, Buenos Aires, Ed Planeta,

- Laplanche, J. y Pontalis, J. (1988). The language of psychoanalysis, London, H. Karnac (Books) Ltd.,.
- Morgenthau, H. (1918). Secrets of the Bosphorus, Londres, Hutchinson.
- Ohanian, P. (1975). *La cuestión armenia y las relaciones internacionales. Tomo I*, Buenos Aires, Institución Armenia de Cultura.
- Piralian, H. (2000). Genocidio y transmisión, Buenos Aires, Fondo de Cultura Económica.
- Tisseron, S., M., Rand, N., Nachin, C., Hachet, P., Rouchi, H., (1997). El psiquismo ante la prueba de las generaciones, Buenos Aires, Amorrortu Editores.
- Toynbee, A. (1975). Las atrocidades en Armenia. El exterminio de una nación [Armenian Atrocities: the murder of a Nation], Buenos Aires, Consejo Nacional Armenio.,.
- Telecemian, L. (1994). Genocidio Armenio. Presente sin fronteras, Buenos Aires, Edinum.

ՀԱԿՈՒՅՑԱՆ ՆԱԻՐԱ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական որակավորման բարձրացման և միջբուհական համագործակցության կենտրոնի ղեկավար

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Սոցիալ-մշակութային, սոցիալ-քաղաքական արխաիզացիան և անիշխանությունը պայմաններ են ստեղծում զարգվածային մարզինալության համար: Մարզինալությունը կապված է հասարակության մեջ առկա ճգնաժամերի կառուցվածքային փոփոխությունների, սոցիալական շարժունության հետ, որի արդյունքում փոխվում են քաղաքական մշակույթը, սոցիալ-մշակութային վարքաձևերի կարծրատիպերը և ձևավորվում վարքաձևերի նոր մոդելներ:

Մարզինալության երևույթը բնորոշ է ինչպես կայուն, այնպես էլ փոխակերպվող տրանսֆորմացիոն հասարակություններում:

Անցումային շրջանին բնորոշ սոցիալ-հոգեբանական հիվանդություններից են. անորոշությունը, վախն ու տագնապը, սոցիալ-հոգեբանական անբավարարվածությունը:

Մարզինալ գիտակցության դրսևորման ձևերից են. ապատիան, աքսենտիզմը, խռովությունը, որոնք համընդհանուր անիշխանության պայմաններում կարող են բացասական ազդեցություն ունենալ ինչպես հասարակության կյանքի, այնպես էլ անձի հոգեկան վիճակների վրա:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ մարզինալություն, ճգնաժամեր, փոփոխություններ, սոցիալական շարժունություն, փոխակերպվող տրանսֆորմացիոն հասարակություն:

Հասարակության և պետության զարգացման յուրաքանչյուր փուլ ունի գործունեության իր համակարգը, սոցիոմշակութային և սոցիալ-հոգեբանական իր յուրահատկությունները: ԽՍՀՄ փլուզումից հետո անկախացած հետխորհրդային հանրապետություններում ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյական անկայուն իրավիճակներն անմիջական ազդեցություն ունեցան հասարակական համակարգի գործառնության վրա: Խորհրդային և հետխորհրդային շրջաններն իրենցից ներկայացնում են հասարակության երկու տիպ՝ կայուն և անցումային, որոնց սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական բնութագրերը իրարից էապես տարբերվում են:

Առհասարակ, կայուն հասարակություններում տեղի ունեցող փոփոխությունները չեն շոշափում սոցիալական համակարգի հիմքերը, դրանք առավելապես ուղղված են համակարգի գործառնության օպտիմալացմանը: Մինչդեռ, անցումային հասարակություններում տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, որոնք, մի կողմից խարխլում են նախորդ համակարգի հիմքերը, մյուս կողմից՝ հիմք դնում նոր սոցիալական-քաղաքական համակարգի առաջացմանը: **«Անցումային հասարակություն»** հասկացությունը բնութագրում է սոցիալական համակարգի այն վիճակը, երբ հասարակության նախորդ որակական որոշակիությունը այլևս գերիշխող չէ, իսկ նորը գտնվում է լինելիության գործընթացում: Սոցիալական համակարգը **«անցումային»** է կոչվում այն պատճառով, որ նրանում տեղի են ունենում **գաղափարա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական ու կառուցվածքային-ինստիտուցիոնալ** այնպիսի փոփոխություններ, որոնց շնորհիվ համակարգը անխուսափելիորեն կորցնում է իր նախորդ որակական որոշակիությունը և ձեռք բերում որակական որոշակիության նոր հիմունքներ» (Հարությունյան 2000: 3) : Մեկ այլ սահմանման համաձայն՝ **«անցումային փուլը հասարակական հին արժեքային համակարգերի և չափանիշների աստիճանական անհետացման և նոր արժեքային համակարգերի ստեղծման, հասարակության հին շերտավորումը և սոցիալական խավերի փոխհարաբերությունների նախկին համակարգը նորով փոխարինելու սոցիալական գործելակերպի նոր չափանիշների աստիճանական ձևավորման համար պատմական այն**

Ժամանակաշրջանն է, որն օբյեկտիվորեն «ստանձնում» է երկու էապես տարբեր /անցյալի գիրկն անցնող և ապագայում կառուցվելիք/ հասարակարգերի միջև ժառանգականության օրգանական կապն ապահովող յուրօրինակ «կամրջի» դերը՝ պահպանելով ազգային առանձնահատկությունները» (Հովսեփյան 1999) :

Մարզինալության երևույթը բնորոշ է ինչպես կայուն, այնպես անցումային, փոխակերպվող հասարակություններին: Կայուն հասարակություններում նույնպես գոյություն ունի սոցիալական մոբիլություն: Այս իմաստով մարզինալությունը ամեն մի սոցիալական փոխակերպությանն ուղեկցող երևույթ է, հասարակության սոցիալական գործառույթներից մեկը, քանի որ հնարավոր չէ պատկերացնել հասարակություն, որում չկատարվեն որոշակի փոփոխություններ: Կայուն հասարակություններում առկա է լինում սոցիալական հարաբերությունների միասնական ցանց, որը ապահովում է սոցիալական միավորվածության բարձր աստիճան: Մարդիկ իրենց զգում են որպես հասարակական ամբողջի օրգանական մասը: Օրինակ, նախկին Խորհրդային Միությունում ստեղծվել էր միասնական սոցիալ-քաղաքական և մշակութային դաշտ, որի արժեքները համընդհանուր բնույթ ունեին: Խորհրդային մարդկանց մեծամասնությունը ընդհանուր առմամբ իրեն չէր զգում մեկուսացված, օտարված հասարակությունից: Խորհրդային ամբողջատիրական հասարակարգում, հատկապես 30-50-ական թվականներին, մարզինալությունը դատապարտվում էր, իսկ մարզինալները՝ հետապնդվում: Սակայն «լճացման տարիներին» մարզինալության նկատմամբ վերաբերմունքը մասամբ փոխվում է: Չնայած որոշ մարզինալ խմբեր հետապնդվում էին, այնուհանդերձ, հասարակությունը աստիճանաբար մարզինալացվում էր:

Անցումային հասարակությունը, որտեղ սոցիալական մոբիլության տեմպերը բարձր են, իր իսկ բնույթով նպաստավոր միջավայր է ստեղծում մարզինալ երևույթների դրսևորման համար: Անցումային հասարակության մեջ առաջանում է սոցիալական գուգահեռականության երևույթ. մի կողմից իներցիայի ուժով շարունակում են գործել հին ինստիտուտները և դրանց բնորոշ արժեքներն ու հարաբերությունները, իսկ մյուս կողմից՝ փոխակերպման գործընթացների հրամայականով պայմանավորված սոցիալական նոր ինստիտուտները և միջանձնային նոր հարաբերությունները: Անկախ իրենց կամքից ու ցանկությունից մարդիկ հայտնվում են երկու իրականության, երկու տարբեր սոցիոմշակութային աշխարհների հատման գոտում և նոր իրողությունների ազդեցությամբ նրանց մեջ ձևավորվում է երկակի վերաբերմունք շրջապատող ամեն ինչի նկատմամբ: Ստեղծված իրադրությունները մարդկանց ստիպում են մտնել մինչ այդ իրենց անձանոթ սոցիալական կապերի ու դերերի մեջ: Սկսվում է իրար հետ գուգահեռաբար գոյատևող հին և նոր իրողությունները համատեղելու հոգեբանական տանջալից գործընթացը: Երկակի դերակատարումները նախադրյալներ են ստեղծում երկփեղկված աշխարհայացքի, երկակի դիրքորոշումների ձևավորման համար:

Ճիշտ է, անցումային հասարակություններում իրականացվող բարեփոխումներն ուղղված են լինում նոր սոցիալ-քաղաքական համակարգի ստեղծմանը, իրավիճակի շուտափույթ կայունացմանը, այնուհանդերձ, այդ գործընթացներում, որոնք հաճախ տարերային և անվերահսկելի բնույթ են ունենում, դրական երևույթների հետ մեկտեղ ի հայտ են գալիս բազմաթիվ բացասական երևույթներ: Տնտեսական ճգնաժամի հետևանքով ընկնում է կյանքի մակարդակը, տեղի է ունենում սոցիալական բևեռացում, շեշտակիորեն մեծանում է աղքատների և գործազուրկների բանակը, շատանում են սոցիալ-քաղաքական կոնֆլիկտները, տեղի է ունենում մասսայական արտագաղթ և այլն: Արմատական փոփոխությունների են ենթարկվում հարաբերությունները ընտանիքում, սոցիալական խմբերում և կոլեկտիվներում: Քաղաքական ու տնտեսական փոփոխություններն ուղեկցվում են սոցիալ-հոգեբանական բնույթի փոփոխություններով. տեղի է ունենում արժեքների վերաբժեքավորում, կարծրատիպերի փոխակերպումներ, կյանքի իմաստի փնտրտուք, միջանձնային հարաբերությունների ապամարդկայնացում, սոցիալական կարգավիճակի, դիրքի ու դերային վարքագծի փոփոխություններ:

Հասարակության մեջ արտակարգ ու աննախադեպ իրավիճակները, սոցիալական գործընթացների անսովոր բովանդակությունը, մարդկանց կյանքում գլոբալ փոփոխությունները անմիջականորեն ազդում են հասարակության հոգեբանական ոլորտի վրա՝ մարդկանց տրամադրության, հոգեվիճակի, համոզմունքների, գնահատականների, դիրքորոշումների վրա: Նոր պայմաններում սկսվում է փոփոխվել մարդկանց հոգեբանությունը: Նախ և առաջ փոխվում է անձնային արժեքների և գնահատումների համակարգը, անձանց կամ խմբերի սոցիալական նույնականությունը: Ավանդական սոցիալական համատեքստի կտրուկ փոփոխությունը անհատին դնում է որովում է ոչ միայն հասարակական գիտակցությունը և սոցիալ-իրավական հարաբերությունները շոշափող արտաքին սոցիալական կոնֆլիկտների, այլև միջանձնային և ներանձնային կոնֆլիկտների մակարդակում:

Բախվող արժեքների բազմաքանակությունը, անորոշությունը և վարքի հնարավոր ընտրության հետ կապված խնդիրները հանգեցնում են սոցիալական ու հոգեբանական շեղումների: Անցումային հասարակության սոցիալ-հոգեբանական «հիվանդություններից» են դառնում անորոշությունը, անվստահությունը, տագնապն ու վախը: Տիրապետող է դառնում սոցիալ-հոգեբանական անբավարարվածության զգացումը: Հոռետեսական տրամադրություններ, պատվասիրության անկում, անվստահություն վաղվա օրվա նկատմամբ, սպասումների չիրականացում, ֆրուստրացիաներ, սթրեսներ ու կոնֆլիկտներ, նիհիլիտական վերաբերմունք ցանկացած գաղափարի հանդեպ, վերակողմնորոշում դեպի արկածախնդրական և ուտիլիտարիստական գործունեությունը - ահա անցումային հասարակության սոցիալ-հոգեբանական պատկերի ոչ լրիվ բնութագիրը:

Այսպիսի պայմաններում արագորեն ընթանում է հասարակության գրեթե բոլոր ոլորտների մարզինալացման գործընթացը: Դրա առանձնահատկությունն այն է, որ մարզինալ խմբերը գործում են ոչ թե սոցիալական գործունեության ծայրամասերում, այլ ամենուր՝ ընդգրկելով կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Եթե կայուն հասարակություններում մարզինալացման երևույթները վերահսկվում են, ինչ-որ տեղ նույնիսկ կարգավորվում են, ապա արագընթաց փոխակերպումների մեջ գտնվող անցումային հասարակություններում մարզինալացման գործընթացները ունենում են տարերային, անկանխատեսելի ու անվերահսկելի բնույթ:

Ե. Ն. Ստարիկովի կարծիքով հետամբողջատիրական հասարակության սոցիալական կառուցվածքում գործնականում մարզինալացվում են սոցիալական բոլոր խմբերը (Стариков 1994): Նրա կարծիքով մարզինալությունը հասարակության սոցիալական կառուցվածքի մոբիլության, անորոշության վիճակի արդյունք է: Այս տեսակետը վիճարկելի է, որովհետև մարզինալությունը նույնացվում է մոբիլության, անցումայնության հետ: Մինչդեռ մարզինալությունը ենթադրում է մոբիլության առկայություն, բայց ամեն մի մոբիլություն դեռևս մարզինալություն չէ: Ամեն դեպքում, փոխակերպվող հասարակության մեջ մարզինալությունը որպես երևույթ, լայն ընդգրկում է ունենում: Եթե մարզինալացումը մասսայական բնույթ է ստանում, ապա դրա արժեքներն ու դիրքորոշումները թափանցում են նաև այնպիսի մարդկանց գիտակցության մեջ, որոնք սոցիալական կառուցվածքներում դեռ պահպանում են իրենց կարգավիճակը: Անցումային հասարակություններում փոխվում են մարզինալության դրսևորման որակները և ոլորտները: Բնակչության մեծամասնության վերածումը մարզինալ զանգվածի ստեղծում է սոցիալական իրականության որակապես նոր իրավիճակ:

Ինչպես համեմատաբար կայուն, այնպես էլ փոխակերպվող հասարակություններում մարզինալության դրսևորմանը նպաստում են տարբեր գործոններ: Հետխորհրդային անցումային հասարակություններում մարզինալացման առաջացման հիմնական պատճառներից են՝ պետական-քաղաքական համակարգի, սոցիալ-տնտեսական կառուցվածքների փլուզումը, սոցիալական կապերի խզումը, սոցիալական և էթնիկական կոնֆլիկտները, պատերազմները, արտագաղթը (բռնագաղթը), ներգաղթը և այլն:

Փոխակերպվող հասարակություններում մարզինալության առաջացման կարևոր գործոններից մեկը, եթե ոչ գլխավորը, մասսայական գործազրկությունն է, որը հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ու կապերի փլուզման արդյունքն է: Փոխակերպվող հասարակությունում մարզինալացման գործընթացը ընթանում է որոշակի փուլերով, որոնց ընթացքում ձևավորվում են տարբեր կարգի մարզինալ խմբեր: Որոշ իմաստով մարզինալացման փուլերը համընկնում են անցումային հասարակության զարգացման փուլերին: Կարելի է առանձնացնել երեք փուլ: Առաջին փուլում զարգացման նոր միտումները ծագում են հնի գերիշխանության պայմաններում, երկրորդում առաջանում է զուգահեռականության երևույթը, այսինքն՝ ամենուր ընթանում է հնի և նորի պայքար, հասարակական կյանքը աչքի է ընկնում անկայունությամբ, սոցիալական ցնցումները հաջորդում են իրար, երրորդ փուլում նորը դառնում է գերիշխող, նոր կառուցվածքները սկսում են գործել և կայունության միտումները դառնում են անշրջելի:

Առաջին փուլում մարզինալացման գործընթացում ներառվում են այն մարդիկ, որոնք սոցիալական կառուցվածքների փոփոխության հետևանքով նոր-նոր կորցրել են իրենց աշխատանքը ու սոցիալական կարգավիճակը, սակայն վստահ են, որ շուտով կգտնեն նոր աշխատանք: Այսպիսի մարդիկ դեռևս պահպանում են իրենց նախկին արժեհամակարգն ու դիրքորոշումները: Իրենց կարգազուրկ և գործազուրկ լինելը նրանք հակված են բացատրելու որպես պատահականության, օբյեկտիվ հանգամանքների արդյունք կամ սեփական թերությունների և սխալների, անհաշվենկատ գործունեության, անբավարար ակտիվության արդյունք: Նրանք առաջնորդվում են «մեր փողոցում էլ գարուն կլինի» ասացվածքով, ինչը նշանակում է, որ նրանք, թեև հայտնվել են անորոշ իրավիճակում, սակայն չեն կորցրել իրենց հույսը վերգտնելու իրենց սոցիալական կարգավիճակը, դեռ վստահ են իրենց ուժերի հանդեպ: Սակայն, նրանց հոգեկանը ալեկոծության մեջ է: Այդպիսի մարդկանց հոգեբանական վիճակի բնորոշ գծերից են՝ սպասողականությունը, երկիմաստությունը, հուսահատությունը, ընկճվածությունը, անհանգստությունը, կասկածամտությունը և այլն: Այս վիճակի շարունակման և խորացման դեպքում կարող են առաջ գալ լուրջ հոգեխախտումներ, որոնք կարող են հանգեցնել ինքնահարգանքի կորստի և համապարփակ հոգեկան ճգնաժամի: Այս փուլում մարզինալացման միտումները հստակ չեն երևում և չեն գիտակցվում մարզինալացման շրջապատյուրի մեջ արդեն հայտնված մարդկանց կողմից:

Երկրորդ փուլում մարզինալացման գործընթացի մեջ ընդգրկվում, կամ ավելի ստույգ՝ մարզինալ են դառնում այն մարդիկ, որոնք երկար ժամանակ լինելով կարգազուրկ և գործազուրկ, արդեն ճաշակել են գործազրկության բոլոր դառնությունները և գիտակցում են իրենց նոր կարգավիճակը: Նրանց մոտ նկատվում է նախկին սոցիալական կարգավիճակին բնորոշ արժեքների ու դիրքորոշումների միախառնումը նոր արժեքների ու դիրքորոշումների հետ, ինչն էլ բարերար հող է ստեղծում տարբեր տիպի կոնֆլիկտների, անումիաների առաջացման համար: Հուսահատության ու ճգնաժամային իրավիճակները ուղեկցվում են միայնակության, օտարվածության, ավելորդության զգացմունքի սրմամբ: Աշխատանքային մոտիվացիան ու բարոյականությունը պահպանվում են, սակայն դրանք լրացվում են անտարբերությամբ կամ անթաքույց թշնամությամբ դեպի տեղի ունեցող փոփոխությունները, նոր կազմավորվող սոցիալական ինստիտուտները: Այս ընթացքում ձևավորվում են տարբեր կարգի մարզինալ խմբեր: Օրինակ, ձևավորվում են մարզինալ սոցիալական (կառուցվածքային) խմբեր, որոնք «կենտրոնի» կամ սոցիալական նորմալի հանդեպ զբաղեցնում են «ծայրամասի, լուսանցքայինի» դիրք: Եթե նման մարդիկ քիչ թե շատ հարմարվում են իրենց վիճակին, ապա ձևավորվում է մարզինալ գիտակցություն՝ դրան բնորոշ արժեքներով ու դիրքորոշումներով: Մարզինալ այն խմբերը, որոնցում ընդգրկվում են լուսնալուսնավոր մարդիկ, ձեռք են բերում որոշակի հատկություններ: Նման մարդկանց մոտ աստիճանաբար չքանում են աշխատանքային մոտիվացիան և բարոյականությունը: Աշխատանքը դադարում է պահանջմունք լինելուց: Եթե նպատակային ինչ-ինչ դիրքորոշումներ դեռ մնում են, ապա դրանք անմիջականորեն կապվում

են միայն սպառման հետ: Իսկ ընդլայնվող սպառումը, որը այլևս կապված չէ աշխատանքային գործառնությունների հետ, ստանում է հախտուն, անկազմակերպ բնույթ: Աստիճանաբար «կյանքի հատակը» գլորվող լուսավեճացված մարզինալ մարդը կորցնում է իր սոցիալական բոլոր կապերը: Լրիվ խզվում է կապը նախկին աշխատանքային կոլեկտիվի, ընկերական շրջապատի և ընտանիքի անդամների հետ: Մարզինալ անձը փնտրում է «իր նմաններին»: Եթե հասարակությունը մերժում է այդպիսի մարդկանց, ապա վերջիններս էլ մերժում են հասարակությանը: Չընդունելով սոցիումի արժեքներն ու նորմերը և ցանկանալով միայն սպառել հասարակական (ուրիշների) հարստությունը, լուսավեճացված մարզինալ մարդը հոգեբանորեն պատրաստ է դառնում ագրեսիվ, քայքայիչ, ապակառուցողական հակահասարակական գործողությունների: Այդպիսի մարզինալները հաճախ ընդգրկվում են հակահասարակական և հակապետական շարժումների մեջ, օգտագործվում տարբեր քաղաքական ուժերի կողմից: Այսինքն՝ քաղաքական սուբյեկտից վեր են ածվում քաղաքական օբյեկտի: Այս մակարդակում գտնվող մարզինալների հոգեբանական վիճակը կարելի է բնորոշել որպես անոմիա: Անոմիան հետևանք է սոցիալական ինքնության կորստին: Իրենց սոցիալական որևէ խմբի չնույնացնելով, չընդունելով դրանց նորմերը, մարզինալները զրկվում են իրենց լիարժեք մասնակցելու հասարակական-քաղաքական կյանքին: Գտնվելով անոմիայի վիճակում, չկարողանալով որոշել իրենց լուսանցքային կեցության պատճառները, աղեքվատ ձևով չգիտակցելով սեփական շահերը, մարզինալները վերածվում են քաղաքական օբյեկտների: Մարզինալը այլևս չունի իր սեփական ինքնատիպ արժեհամակարգը, ուստի հախտուն ձևով սկսում է նմանակել, ընդօրինակել (հիմնականում խեղաթյուրված կերպով) իրեն քիչ թե շատ հասկանալի սոցիալական ու մշակութային նորմերը: Մարզինալ կարգավիճակի պատճառով մարզինալները ի վիճակի չեն կազմակերպված, օրինական ձևով պայքարելու իրենց շահերի համար, ուստի նրանց բողոքական, ընդվզող վարքագծին բնորոշ է դառնում տարերայնությունն ու անկազմակերպվածությունը:

Մարզինալ մի այլ խմբի մեջ մտնում են զարգացած սոցիալական պահանջմունքներ ու սպասումներ, հիմնականում բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ, որոնք ամբողջությամբ դուրս չեն մղվել սոցիալական կառուցվածքներից, սակայն չեն կարողացել իրագործել իրենց սոցիալական սպասումները: Նրանց բնորոշ է ոչ միայն հարմարվումը մարզինալ արժեքներին, այլև դրանց ձևափոխումը գաղափարականացման միջոցով թե՛ առօրյա գիտակցության և թե՛ տեսության մակարդակում: Նրանք ընդվզում են, բողոքում «անդեմ հասարակության» և «ոստիկանական պետության» դեմ, տեղին-անտեղին քննադատում կատարվող բարեփոխումները, հոռետեստորեն տրամադրվում փոփոխությունների և առհասարակ ապագայի հանդեպ: Նման վիճակում Ես-ի և արտաքին աշխարհի միջև հաստատվում են թշնամական հարաբերություններ, և տարերային, հախտուն անհատապաշտության դիրքերից մարդը հակադրվում է հասարակությանը:

Այս խմբի մարզինալ գիտակցության դրսևորման ձևերից է դառնում անցյալի իդեալականացումը: Դա առավելապես բնորոշ է այն մարդկանց, ովքեր սոցիալականացման փուլերը անցել են նախկին հասարակարգում և նորում վերածվել են տարիքային մարզինալների: Մարզինալը գունազարդում է ոչ վաղ անցյալի սոցիալական հարաբերությունները, նախորդ սոցիալ-քաղաքական համակարգին վերագրում այնպիսի առաքիներություններ ու արժանիքներ, որոնք իրականում չեն եղել կամ եղել են մասամբ: Մարզինալ մարդը տառապում է անցյալի կարոտախտով:

Մարզինալ գիտակցության դրսևորման ձևերից են նաև ապատիան և աքսենտիզմը: Մարզինալ մարդը օտարվում է հասարակության մեջ ընդունված արժեքային նորմերից, մերժում սոցիալական գոյություն ունեցող կառուցվածքները, ամփոփվում իր ոլորտում, որը ընկալվում է որպես «հակահասարակություն»: Նա համակերպվում է իր մարզինալ կարգավիճակի ու դիրքի հետ, թաքնվում կրավորականության խրամատներում: Այդպիսի մարզինալ մարդիկ

Լռությունը ողջ տիեզերքում գոյություն ունեցող երևույթներից թերևս ամենազարմանահրաշն ու առեղծվածայինն է: Վաղնջական ժամանակներից սկսած՝ աշխարհի իմաստուն այրերը փորձել են բացահայտել նրա էությունը և ձգտել պարզել, թե որն է սկզբում եղել՝ խոսքը, թե լռությունը: Այս դիրքորոշումն արդեն վկայում է, որ սկզբից նեթ լռությունն ու խոսքը հակադրվել են իրար: Լռությունն այդպես են մեկնաբանում նաև գրեթե բոլոր բացատրական բառարանները՝ լռության ներքո նկատի ունենալով չխոսելը կամ ձայների բացակայությունը: Սակայն նման դիրքորոշումն այնքան էլ հիմնավոր չէ: Հովհաննես Ավետարանչի հանրահայտ միտքը, թե ի սկզբանե Բանն էր, դեռևս չի նշանակում, թե բառը նախորդել է լռությանը, քանզի հունարեն Լոգոս-Բան-ը ոչ միայն խոսք է, այլև միտք, և նույնիսկ գործ: Թեև երգիծաբան Ստանիսլավ Եժի Լեցը սրամտությամբ նկատում է, որ սկզբում եղել է խոսքը, իսկ հետո առաջացել է լռությունը, այնուհանդերձ, ավետարանական Բանը իր մեջ ներառում է նաև լռությունը: (Տե՛ս [://letter.com.ua/aphorizm/mo/9.php](http://letter.com.ua/aphorizm/mo/9.php))

Չխորանալով այն վեճի մեջ, թե ծագումնաբանորեն դրանցից որն է առաջնայինը, նշենք, որ լռելը և չխոսելը չի կարելի դիտարկել իբրև հոմանիշներ: Լռությունը ոչ թե չխոսելն է, այլ խոսելն է՝ առանց բառերի: Առաջին հայացքից կարող է արտառոց թվալ, թե ինչպես կարելի է խոսել առանց բառերի: Բայց խորանալով լռության ենթատեքստերի մեջ՝ մենք կարող ենք համոզվել, որ ոչ միայն կարելի է, այլև առանց բառերի խոսքը, հատկապես, լռությունը հաճախ առավել պերճախոս է: Թեև աշխարհի ոչ մի հոգեբանական, փիլիսոփայական և տրամաբանական բառարաններում ու հանրագիտարաններում «լռություն» վերնագրով հոդված ներառված չէ, սակայն լռությունն ունի իր փիլիսոփայությունը, տրամաբանությունն ու հոգեբանությունը: Լռության հանդեպ այդ բառարանների ու հանրագիտարանների լռությունը դեռևս հիմք չէ ենթադրելու, թե լռության ենթատեքստերը չունեն իրենց փիլիսոփայական-տրամաբանական-հոգեբանական նկարագիրը:

Հոգեբանական գրականության մեջ լռությունը, որպես կանոն, առանձին չի դիտարկվում, քանզի այն համարվում է խոսքին հակադիր երևույթ:

Ս. Ռուբինշտեյնի այն միտքը, թե հոգեբանական ասպեկտ ունի միայն խոսքը, իսկ լեզվի նկատմամբ նման մոտեցում չի կարելի կիրառել, ենթադրում է, որ լռությունը ևս լեզու է, ուստի այն նույնպես չի կարող ունենալ հոգեբանական նկարագիր:

Լռության ենթատեքստերի հոգեբանական նկարագիրը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Նախ, պետք է զանազանել լռության տարբեր իմաստները՝ բնության մեջ տիրող լռություն- անդորրությունը, լռության մատնել- լռությունը և բուն լռությունը: Եթե առաջինը կեցության վիճակ է և ոչ թե սուբյեկտի կողմից իրականացված գործողություն, ապա մյուս երկուսը ներհատուկ են մարդկանց աշխարհին և ունեն իրենց թեմաներն ու հեղինակները (Эппейн 2005)

Ինքնին հասկանալի է, որ ենթատեքստեր ու հոգեբանական նկարագիր կարող են ունենալ բունը և լռության մատնելը կամ թերասությունը: Իհարկե, հոգեբանական նկարագիր ունի նաև համրությունը, սակայն այն էապես տարբերվում է լռությունից: Համրությունը խոսելու ունակության բնական կամ ձեռքբերովի կորուստ է, իսկ լռությունը մի գործողություն է, որը վերաբերում է խոսելու ունակությամբ օժտված է, բայց խոսքեր չարտաբերող կամ, ավելի ճիշտ, առանց խոսքերի խոսող մարդուն: Իսկ թե ինչու է մարդ լռություն պահպանում և ինչ է թաքնված այդ լռության ներքո, դրա շարժառիթները կարող են լինել բազմաթիվ և տարբեր:

Ամերիկացի հոգեբան Պոլ Էքմանը լռությունը դիտարկում է ստի հոգեբանական համատեքստում և նշում, որ լռությամբ ստախոսը թաքցնում է ճշմարիտ ինֆորմացիան, բայց, միևնույն ժամանակ, չի հայտնում նաև կեղծը: Անշուշտ, միշտ չէ, որ լռությունը կարելի է համարել ստի դրսևորում, քանի որ մարդիկ լռում են տարբեր պատճառներով և տարբեր հանգամանքներից ելնելով:

Ինքը՝ Էքմանը, նշում է, որ լռությունը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով՝ - գրուցակիցը դեռևս չունի տրված հարցի պատասխանը.

- Համակարգված է հույզերով (ուրախություն, զարմանք, ճնշվածություն):
- Գտնվում է վախի մեջ,- լցված է ասելու լռությամբ (Պոլ 1999: 5):

Կարող են լինել նաև այլ պատճառներ՝ տրտմություն, շփոթվածություն, գրգռվածություն, ձանձրույթ և այլն: Սրանք բոլորն էլ լռության ենթատեքստերի վրա ազդող գործոններ են և միշտ չէ, որ պայմանավորված են ստելու կամ ճշմարտությունը չհայտնելու հետ: Սակայն մեկ այլ բան է լռության պատճառը, իսկ մեկ այլ բան՝ լռության ենթատեքստը, այլ խոսքով՝ լռության ներքո թաքնված խոսքը:

Պետք է ասել, որ լռությունը հույժ կարևոր նշանակություն ունի երկխոսության և ամեն մի հաղորդակցության ընթացքում: Լռությունն անհրաժեշտ է նախ և առաջ գրուցակցի խոսքը լսելու և նրա կողմից հաղորդած ինֆորմացիան ընկալելու ու հասկանալու համար: Դրանից հետո լռությունն անհրաժեշտ է հաղորդած ինֆորմացիային արձագանքելու կամ տրված հարցին պատասխանելու համար: Եթե տրված հարցը համապատասխան արձագանք չի ստանում, կամ էլ հարցը լսելուց հետո գրուցակիցը լռություն է պահպանում, դա դեռ չի նշանակում, թե նա չի խոսում: Պարզապես, նա խոսում է առանց բառերի: Ընդ որում՝ դա ոչ թե սոսկ ներքին խոսքն է, որին կարող է հետևել արտաքին խոսքը, այլև մի յուրահատուկ գրույց է՝ առանց բառերի: Լռությունը ոչ միայն մենախոսություն է, այլև երկխոսություն: Սովետական բառերով ոչինչ չասելով՝ մարդն իր լռությամբ գրուցում է ոչ միայն ինքն իր հետ, այլև պատասխանում է գրուցակցին: Այդ պատասխանը գրուցակիցը չի լսում, սակայն նա էլ լռության մեջ փորձում է հասկանալ դիմացինի լռությունը և բացահայտել այդ լռության հոգեբանական ենթատեքստերը: Երկու տարբեր սուբյեկտներ սեփական և միմյանց լռության ներքո փնտրում են տարբեր ենթատեքստեր: Երկու լռությունների միջև ընթանում է սուր հոգեբանական պայքար և մի ինքնատիպ բանավեճ, սակայն բավականին դժվար է դիմացինին համոզել լռությամբ: Ինչպես նշել է Հենրի Ուիլլեր Շոուն (Ջոշ Բիլլինգս)՝ լռությունն առավել դժվար հերքելի փաստարկներից մեկն է (<http://etter.com.ua/aphorism/mol9.php>):

Բացահայտել լռության հոգեբանական ենթատեքստը՝ նույնն է, թե ըմբռնել լռություն պահպանող սուբյեկտի ներաշխարհը, նրա հույզերի ու մտքերի ամբողջությունը և ներթափանցել նրա հոգու գաղտնաբանները: Լռության ենթատեքստի հոգեբանական նկարագիրը կազմելիս՝ յուրաքանչյուր ոք կշռադատում է՝ ելնելով իր հոգեկերտվածքից և աշխարհընկալումից:

Վիրավորանք ապրած մարդու լռությունը կարող է ստանալ տարբեր բացատրություններ: Վիրավորանք հասցնողը կարող է մտածել, որ լռություն պահպանողը

- ընդունում է վիրավորանքը,
- վախենում է վիրավորանքին. վիրավորանքով պատասխանել,
- նախապատրաստվում է վրեժխնդիր լինելուն և այլն:

Այդ կամ այլ կերպ կարող են մտածել նաև տվյալ միջադեպի ականատեսները: Ոմանք կարող են համաձայնել վիրավորանք հասցնողի հոգեբանական վերլուծությունների հետ, իսկ ոմանք էլ լռությունը կարող են համարել ներողամտություն, վեհանձնություն կամ էլ առավել նուրբ ու առավել դաժան վիրավորանք: Թեև Շեքսպիրը իր Հուլիոս Կեսար ստեղծագործության մեջ նշում է, որ դավադիրների շարքում իր հոգեզավակին տեսնելով Կեսարը բացականչել է՝ «Եվ դո՛ւ, Բրուտո՛ս», սակայն պատմագիրների վկայությամբ՝ իրականում, այդ դեպքից ցնցված, Կեսարը սուտը մի կողմ է նետել և զարմանքից, զայրույթից, ասելությունից կամ անասելի ծանր

ապրումներից ելնելով՝ ոչինչ չի ասել, այլ խոսքով՝ լռել է: Փաստորեն, «Եվ դո՞ւ, Բրուտո՞ւ» արտահայտությունը Կեսարի լռության ենթատեքստերի հոգեբանական բացահայտումն է Շեքսպիրի կողմից:

Հոգեբանական տարբեր մեկնաբանություն է ստացել նաև Հիսուսի լռություն-համբույրը Մեծ Հավատաքննիչի շուրթերին: Միխայիլ Էպշտեյնի կարծիքով՝ այդ համբույրով Հիսուսը արգելափակում է այն շուրթերը, որոնք կեղծիք են բարբառում և նրանց վերադարձնում է լռության արժանապատվությունը: Այդ համբույրն ունի երկակի նշանակություն. մի կողմից այն խոսքի ընդհատում է, իսկ մյուս կողմից՝ խոսքի պատասխան (Эпштейн 2005):

Էպշտեյնի տեսակետը համոզիչ է մասամբ, քանզի Հիսուսի լռություն-համբույրը, ըստ Դոստոևսկու աշխարհընկալման, նախ և առաջ, աստվածային գրասրտության արտահայտություն է (առավել մանրամասն տե՛ս Լ. Պետրոսյան, «Լռությունը որպես ենթատեքստ»): Առավել հետաքրքիր և ինքնատիպ է լռության արժանապատվության վերադարձի գաղափարը: Բանն այն է, որ աստվածային ճշմարտությունը կարելի է ընկալել լռության մեջ և լռությունն էլ հենց Աստծո բարբառն է: Հաճախ մարդիկ դժգոհություն են հայտնում, թե իրենց ջերմեռանդ աղոթքները և աղերսները ոչ մի արձագանք չեն ստանում Աստծո կողմից: Մարդկանց համար այնքան էլ հասկանալի չէ Աստծո լռությունը: Իհարկե, դժվար է բացահայտել Աստծո լռության ենթատեքստերի հոգեբանությունը: Սակայն կարելի է խորհել՝ իսկ միգուցե Աստված ինքը չի հավատում հավատացյալների աղոթքների անկեղծությանը:

Լռության վերաբերյալ գոյություն ունի մի արմատացած կարծիք, որը շրջանառության մեջ է դրել Հռոմի Բոնիֆացիոս 8-րդ Պապը: Խոսքը «Լռությունը համաձայնության նշան է» ասույթի մասին է, որը ոչ բոլորպարագաներում է ճշմարիտ: Ինչպես գեղարվեստական մեծ վարպետությամբ արտահայտել են Շեքսպիրը (Ռիչարդ III) և Պուշկինը (Բորիս Գոդունով), երբեմն լռությունը լիակատար անհամաձայնության նշան է: Օգյուստ Ռոդենի «Մտածողը» քանդակում նկատելի է մի խորհրդավոր լռություն, որի հոգեբանական ենթատեքստը բազում վերլուծությունների տեղիք է տվել: Առեղծվածային լռությամբ է համակված նաև Լեոնարդո դա Վինչիի Ջոկոնդա կտավում պատկերված Մոնա Լիզայի լուռ ժպիտը:

Լռության ենթատեքստերի հոգեբանական նկարագիրը պետք է դիտարկել որոշակի համատեքստում: Այլ խոսքով՝ պետք է իմանալ երբ լռել, որտեղ լռել և ինչու լռել: Լռության պահպանումը միշտ չէ, որ արդարացված է: Լռակյաց մեծամասնության վարքագիծը բավականին հիմնավոր կերպով դատապարտել է ֆրանս. մշակութաբան Ժան Բոդրիարը (Бодрийяр 2000): Հաճախ այնտեղ, որտեղ անհրաժեշտ է խոսել մարդիկ լռություն են պահպանում, իսկ որտեղ նախընտրելի է լռությունը, անհարկի շատախոսում են: Վիտգենշտայնի՝ «Ինչի մասին անհնարին է խոսել, այդ մասին պետք է լռել» (Витгенштейн 1958: 91) ասույթը հաճախ մեկնաբանում են այնպես, թե իբր լռությունն ու խոսքը փոխբացառում են միմյանց: Սակայն Վիտգենշտայնի ասույթի իմաստն այն է, որ պետք է լռել միայն այն հարցերի մասին, որն անհնարին է արտահայտել խոսքով: Ընդ որում՝ խոսք ասելով նկատի պետք է ունենալ բառերով արտահայտված խոսքը:

Ինչպես նշել է Մարտին Հայդեգերը՝ մենք մշտապես խոսում ենք, նույնիսկ այն դեպքում, երբ որևէ բառչենք արտաբերում, այլ միայն լսում և կարդում ենք և նույնիսկ այն դեպքում, երբ չենք լսում և չենք կարդում, այլ աշխատում ենք կամ հանգստանում: Ինչ-որ մի եղանակով մենք մշտապես խոսում ենք (Хайдеггер 1991: 3): Սա նշանակում է, որ լռությունը նաև մտածողություն է, մի ներքին գրույց՝ առանց որի անհնար է պատկերացնել մարդու կյանքը և որի շնորհիվ մարդ արժանի է դառնում իր իրական կոչմանը:

Երկար դարեր մարդիկ պայքարել են խոսքի իրավունքի համար: Լռությունը նույնպես պետք է ունենա իր իրավունքը: Բայց այդ իրավունքը չպետք է վերածվի պարտականության և պարտադրանքի: Երբ մարդիկ լռում են, դա դեռ չի նշանակում, թե նրանք ոչինչ չունեն միմյանց

ասելու, որովհետև մարդիկ նաև լռում են այն պատճառով, որ այնքան շատ բան ունեն ասելու, որ բառերով դժվար է արտահայտել:

Լռության մասին կարելի է անընդհատ խոսել, սակայն լռության ենթատեքստերի հոգեբանական նկարագիրը թերևս առավել ցայտուն և պերճախոս կարող է արտահայտել հենց ինքը՝ լռությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Бодрияр, Ж. (2000). В тени молчаливого большинства, или конец социального. Екатеринбург.

Витгенштейн, Л. (1958). Логико-философский трактат. М.

Хайдеггер, М. (1991). Язык. СПб.

Эпштейн, М. (2005) “Слово и молчание в русской литературе”. «Звезда», N10.

Экман, П. (1999). Психология лжи. Обмани меня, если сможешь. СПб.

<http://letter.com.ua/aphorizm/pol9.php>

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ,
հոգեբանական գիտ.թեկնածու

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆՆԱ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի ասիստենտ,
հոգեբանական գիտ.թեկնածու

ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներկայացված են այն հիմնական հոգեբանական և մանկավարժական պահանջները, որոնց հիման վրա պետք է փոփոխություն կրեն դպրոցական դասագրքերը փոխակերպվող հասարակության անցումային փուլում: Մյուս կրթական միջոցներին ներկայացվող պահանջներին անդրադարձ կկատարվի հետագա հրապարակումներում:

Առանցքային բառեր և բառակապակցություններ՝ փոխակերպություն, անցումային հասարակություն, տրանսֆորմացիոն հասարակություն, հանրակրթության բարեփոխումներ, դասագրքի գործառույթները, դասագրքի գնահատման չափանիշները:

Փոխակերպություն (տրանսֆորմացիա) հասկացությունն ունի լատինական ծագում և նշանակում է փոխել, փոխակերպել, վերափոխել, ձևափոխել և այլն: Փոխակերպությունը բնութագրում է համակարգի այնպիսի փոփոխություններ, որոնք ,ի տարբերություն հեղափոխությունների, ունեն աստիճանական բնույթ:

Ցանկացած “անցումային հասարակություն” նաև “տրանսֆորմացիոն հասարակություն” է: Բայց ամեն մի “տրանսֆորմացիա” դեռևս չի նշանակում, թե համակարգը “անցումային” է: Անցումային հասարակությունը սոցիալական համակարգերի անվերջ տրանսֆորմացիայի կոնկրետ ու սահմանափակ փուլ է, որի ավարտից հետո ձևավորված նոր համակարգը ձեռք է բերում գոյության ու վերարտադրության , զարգացման ու գործառնության նոր հիմունքներ և այդ հիմունքների շրջանակներում շարունակում իր՝ արդեն ներհամակարգային տրանսֆորմացիան (Հարությունյան 2000):

Անցումային շրջանում առավելապես դժվարանում է կրթական համակարգի գործունեությունը, քանի որ փոփոխությունների հորձանուտում այն դժվարությունների է բախվում իր առաքելությունն իրականացնելիս:

“Հանրակրթության պետական կրթակարգում” (ՀՊԿ 2004) նշվում է, որ արդի հասարակության զարգացման միտումներն ու գործոնները հրատապ են դարձրել Հայաստանի Հանրապետությունում կրթությունը ժամանակակից կյանքի պահանջներին համապատասխան կազմակերպելու, կրթության համակարգը բարեփոխելու և այդ նպատակով հանրակրթության հայեցակարգային պատկերացումները, քաղաքականությունը, բովանդակությունը նորովի սահմանելու և կրթության կազմակերպման սկզբունքները ճշգրտելու անհրաժեշտությունն ու իրագործումը:

Հանրակրթության բարեփոխումների համալիրում իր կարևորությամբ և առաջնահերթությամբ առանձնանում է նոր դասագրքերի ստեղծման խնդիրը: Դիպուկ է ասված՝ լավ դասագիրքը դպրոց արժե: Լավ դասագիրքը երեխային և՛ կրթվելու, և՛ դաստիարակվելու, այսինքն՝ սոցիալականացվելու հնարավորություն է տալիս: Այս գործընթացը հանգեցնում է գիտելիքների, սոցիալական վարքի ձևերի, լեզվի, հմտությունների, բարոյական և իրավական սկզբունքների, արժեքների և նորմերի յուրացմանը (Պոդոսյան 1996, Джуринский 1967):

Հայտնի է, որ դպրոցական դասագիրքը ուսուցման կարևորագույն միջոցներից մեկն է, որը համագործակցում է ինչպես “կենդանի ուսուցման”, այնպես էլ ուսուցման մի շարք այլ

միջոցների հետ: Դրանով իսկ այն կոչված է կատարելու մի շարք տարբեր գործառնություններ: Ուստի նպատակահարմար է դասագիրքը գնահատել այդ գործառնությունների կատարման տեսանկյունից: Նման գնահատումը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝ կատարում է, արդյոք, տվյալ դասագիրքը նախանշված մանկավարժական գործառնությունները, ի՞նչ չափով է դրանք կատարում, դասագրքի ո՞ր հատկություններն են նպաստում իր առջև դրված խնդիրների կատարմանը:

Այդ հարցերի պատասխանները թույլ են տալիս կարծիք կազմել դասագրքի արդյունավետության մասին, ինչը և նրա դիդակտիկ ստուգման գլխավոր նպատակն է: Արդյունավետության չափանիշը դասագրքի կողմից իր հիմնական գործառնությունների կատարման մակարդակն է: Որո՞նք են այդ գործառնությունները և դասագրքի ո՞ր հատկություններն են նպաստում դրանց իրականացմանը:

Մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ (Պողոսյան 2005, Бейлисон 1985, 1983, Ясвин 2004) առավել հաճախ առանձնացվում են դասագրքի հետևյալ գործառնությունները՝ տեղեկատվական, փոխակերպական, հետազոտական, ինքնակրթական, ինչպես նաև ստուգիչ-գնահատող կամ ինքնաստուգիչ: Ըստ այդմ հատուկ ուշադրություն է դարձվում հետազոտական և լայն իմաստով հասկացվող ինքնակրթական գործառնությունների վրա, որոնց գերադասելի զարգացումը նպաստում է ժամանակակից դիդակտիկայի ընդհանուր նորագույն միտումներին: Նշված գործառնությունից բացի առավել հաճախ առաջարկվում է հաշվի առնել նաև դասագրքի մոտիվացիոն և վարժեցնող գործառնությունները:

Տեղեկատվական գործառնությի առավել ամփոփ իրականացումն այն է, որ դասագիրքն ընդգրկում է տեղեկատվություն ներկայացվող գիտելիքների բնագավառից: Ի տարբերություն ուսուցման մյուս միջոցների՝ դասագիրքն այդ տեղեկատվությունը տրամադրում է տրամաբանական, առարկայական և հոգեբանական տեսանկյուններից՝ համապատասխանաբար կանոնակարգված տեսքով:

Դասագրքի խնդիրն է ոչ միայն աշակերտին նախապատրաստել իրականության ճանաչմանը, այլև դրա վերափոխմանը, որը կատարվում է **փոխակերպական գործառնությի** շնորհիվ: Դասագրքի այդ գործառնությի սերտորեն կապված է նրա **վարժեցնող գործառնությի** հետ, որը նպատակաուղղված է աշակերտի մոտ անհրաժեշտ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը և միաժամանակ կապ է ստեղծում **հետազոտական գործառնությի** հետ: Դասագրքում այն դրսևորվում է կամ իմացության ուղիների և մեթոդների նկարագրության, կամ աշակերտների ինքնուրույն գործունեությունը կազմակերպող հարցերի և առաջադրանքների ձևով: Հետազոտական գործառնությի մշակումը նախատեսում է աշակերտների կողմից իրենց համար մատչելի գործողությունների, հետազոտական բնությի գործառնությունների կատարում և դրանց շնորհիվ յուրաքանչյուր առարկայից նվազագույն մեթոդոլոգիական տեղեկությունների ձեռքբերում:

Դասագրքի **ինքնակրթական գործառնությի** իրականացումը նպատակաուղղված է աշակերտի կողմից տեղեկատվության տարբեր աղբյուրների ինքնուրույն օգտագործման պայմանների ստեղծմանը: Դասագրքի նյութերը պետք է խթանեն տեղեկատվության նոր միջոցների որոնումը, ձևավորեն դրական վերաբերմունք ուսման հանդեպ: Դրան կարելի է հասնել ուսումնական նյութի այնպիսի շարադրմամբ, որը կխթանի հետաքրքրությունը դասերի հանդեպ և կձևավորի մտավոր աշխատանքի կարողություններ:

Դասագրքի **մոտիվացիոն գործառնությի** իրականացումը խթանում և զարգացնում է աշակերտի հուզական-մոտիվացիոն հատկությունները: Խոսքն առաջին հերթին տվյալ առարկայի ուսումնասիրման և ուսումնական գործընթացի հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորման մասին է:

Մյուս գործառնությունների հետ սերտորեն կապված է դասագրքի **ստուգիչ գործառնությի**: Դրա իրականացման համար դասագիրքը պետք է կառուցվի այնպես, որպեսզի աշակերտը կարողանա ինքնուրույն վերահսկել ոչ միայն բուն դասագրքից, այլև տեղեկատվության այլ

աղբյուրներից ձեռք բերած գիտելիքների յուրացումը: Գիտելիքների ստուգումը պետք է հասկանալ լայն իմաստով. դա և՛ ինքնաստուգում է, և՛ ինքնավերահսկողություն, որոնք ամբողջական հետադարձ կապ են ապահովում աշակերտի և դասագրքի միջև:

Անհրաժեշտ է, արդյոք, որ մի դասագիրքը կատարի նշված բոլոր գործառնությունները և, հետևաբար, անհրաժեշտ է, արդյոք, այն գնահատել այդ տեսանկյունից: Այդ հարցին միանշանակ պատասխանել հնարավոր չէ, քանզի անհրաժեշտ է նկատի ունենալ դասագրքերի գոյության տարատեսակ ձևերը: Վ. Օկոնի դասակարգմամբ (1983) այդ տարատեսակներն են՝ համապիտանի դասագիրք, համակարգված դասագիրք, գործնական վարժությունների դասագիրք և ծրագրավորված դասագիրք: Դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր հատկություններ: Նշված բոլոր գործառնությունները կարող է իրականացնել միայն համապիտանի դասագիրքը, սակայն ամեն մի դասագիրք չէ, որ պիտի այդպիսին լինի: Հնարավոր է, որ դասագիրքը իրականացնի միայն որոշ գործառնություններ, օրինակ՝ գլխավորապես տեղեկատվական և հետազոտական, կամ գործառնությունների մի այլ խումբ: Դա պայմանավորված է դպրոցի կոնկրետ պահանջներով և դրանց հետ փոխկապակցված հեղինակային հայեցակարգերով:

Դասագրքի հիմնական գործառնությունների իրականացումը կախված է (բացի դպրոցական պրակտիկայում նրա մեթոդապես գրագետ օգտագործումից) մեծ թվով տարբեր գործոններից՝ տեսական, մեթոդական, լեզվաբանական, տնտեսագիտական և պոլիգրաֆիական:

Դասագրքի արդյունավետության հետազոտությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ տեսական (վերլուծական) և էմպիրիկական (փորձնական): Դրանք անխզելի կապի մեջ են գտնվում միմյանց հետ և եթե տեսական ստուգումը թույլ է տալիս դասագիրքը գնահատել նրա միայն որոշ հատկությունների տեսանկյունից, ապա դասագրքի իրական պիտանիության մասին կարող են վկայել միայն դպրոցում կատարված էմպիրիկական ստուգումների արդյունքները:

Ինչպես նշեցինք, դասագրքի գնահատման դիդակտիկական չափանիշներ պետք է համարել նրա հիմնական գործառնությունները: Ու՞նի, արդյոք, դասագիրքն այն հատկությունները, որոնք ապահովում են նշված գործառնությունների կատարումը: Այդ հարցին կարելի է պատասխանել միայն նրա մանրակրկիտ վերլուծությունից հետո: Դրա համար անհրաժեշտ է որոշել, թե դասագրքի որ հատկություններն են կապված որոշակի գործառնությունների կատարման հետ:

Որպես օրինակ դիտարկենք հատկությունների այն ցանկը, որոնք պետք է ունենա դասագիրքը **տեղեկատվական գործառնությունը** կատարելու համար:

1. Դասագրքի բովանդակությունը.

- համապատասխանությունը գիտության բովանդակության ժամանակակից վիճակին,
- դասակարգումը առարկայական, տրամաբանական և հոգեբանական պլանում (առարկայի կառուցվածքը հաշվի առնելով),
- համաձայնեցվածությունը ուսումնական ծրագրի հիմնական դրույթների հետ,
- անվանումների միասնականացումը, սահմանումների հստակությունը,
- հարակից առարկաների դասագրքերի հետ եզրույթների և անվանումների համաձայնեցվածությունը,
- տեղեկատվության մատուցման տարատեսակությունը (բառ, նկար, լուսանկար, գծապատկեր և այլն):

2. Դասագրքի կառուցվածքը.

- կառուցվածքի հստակությունը, բաղադրամասերի կրկնվողությունը (օրինակ՝ տեղեկատվական տեքստի, վարժությունների բլոկի, ստուգողական հարցերի բլոկի, եզրակացությունների և այլն),

- դասագրքի բովանդակության կառուցվածքում մտավոր գործունեության մեթոդիկայի հիմնական սկզբունքների իրագործումը՝ գլխացանկը դասագրքի սկզբում, առարկայական, անվանական և այլ ցանկերի օգտագործումը և այլն:
3. Բովանդակության մեթոդական մշակումը.
- համապատասխանությունը լեզվի բնագավառում ժամանակակից դիդակտիկայի պահանջներին (մատչելիությունը, ճիշտ կառուցվածքը, ճկունությունը),
 - համապատասխանությունը տվյալ առարկայի մեթոդական պահանջներին,
 - հեղինակի դրույթները լուսաբանող օրինակների բազմազանությունը,
 - հղումը անցած նյութին և աշակերտների փորձին,
 - հիմնական առաջադրանքների բազմազանությունը,
 - ուսումնական նյութը ըստ բարդության տարբեր մակարդակների բաժանումը,
 - հիմնախնդիրների լուծման գործընթացում աշակերտների մտածական գործընթացների կառավարումը:
4. Ձևավորումը և պոլիգրաֆիական կատարումը.
- դասագրքի օգտագործման հարմարավետությունը,
 - կազմի գործնականությունը, նրբագեղությունը և տեղեկատվողականությունը (կազմը պետք է լինի ամուր, դյուրաթեք, հիգիենիկ, հետաքրքիր և տեղեկացնի դասագրքի բովանդակության մասին),
 - թղթի որակը (թուղթը պետք է լինի լավ որակի, համապատասխան գույնի և երանգի),
 - պատկերազարդումների բազմազանությունը՝ նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ,
 - տեղեկատվության աղբյուրի կարևոր դեր կատարող գունավոր պատկերազարդումների առկայությունը, դրանց համապատասխանությունը տեքստային բովանդակությանը և հարմարեցումը աշակերտների ընկալման տարիքային հնարավորություններին,
 - պատկերազարդումների մակագրությունների համառոտությունը և հստակությունը, դրանց ձևի և ոճի համապատասխանությունը պատկերազարդումների բնույթին և գործառույթներին,
 - համապատասխան ընդգծումների (օրինակ՝ հիմնական հասկացությունների, տեղեկատվական դրույթների և այլ էլեմենտների) օգտագործումը,
 - լուսանցքների առկայությունը, որտեղ կարող են տեղադրվել հիմնական հասկացությունները, որոշակի նկարները,
 - ընթերցումը խթանող ծավալը,
 - դասագրքի հեղինակի, ինչպես նաև նկարչի, գրախոսի և խմբագրի ազգանունների հստակ ընդգծումը:

Նման կերպ կարելի է կազմել դասագրքի վերլուծության չափանիշների ցանկ նաև այլ գործառույթների իրականացման տեսանկյունից: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, դասագրքի պիտանիության մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել միայն նրա տեսական վերլուծությունը համադրելով դպրոցում դասագրքի գործնական փորձարկման հետ:

Մենք ներկայացրեցինք այն հիմնական հոգեբանական և մանկավարժական պահանջները, որոնց հիման վրա պետք է փոփոխություն կրեն դպրոցական դասագրքերը փոխակերպվող հասարակության անցումային փուլում: Մյուս կրթական միջոցներին ներկայացվող պահանջներին կանոնադառնանք հետագա հրապարակումներում:

- Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ (2004): Երևան “Անտարես”:
- Հարությունյան, Է.Ա. (2000): Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ: Երևան, ԵՊՀ-ի հրատարակչություն:
- Պողոսյան, Վ. Վ. (1996): Նոր սերնդի դասագրքերին ներկայացվող հոգեբանամանկավարժական մի քանի պահանջ: Դասագիրքը բարեփոխվող դպրոցում (գիտագործնական համաժողովի նյութեր), Երևան:
- Պողոսյան, Վ. Վ. (2005): Պատմության դասագրքաստեղծման և դասավանդման գործընթացի հոգեբանական դիտանկյունները: “Պատմություն և կրթություն”, թ.1-2:
- Бейлинсон, В.Г., Зуев Д.Д. (1985). О функциональном подходе к оценке школьных учебников. Проблемы школьного учебника, вып. 5, Москва “Просвещение”.
- Джуринский, А.Н. (1967). Развитие образования в современном мире. Москва, “Владос”, 1999.
- Оконь, В. (1983). Очерк общей дидактики. Варшава,. Проблемы школьного учебника. Круглый стол. “Вопросы психологии”, N6,.
- Ясвин, В.А. (2004). Образовательная среда. Москва “Смысл”.

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԿԱՄՈ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գիտա-հետազոտական
կենտրոնի տնօրեն, դոցենտ

ԱՌԻՏՈՂԵՍՏՐՈՒԿՏԻՎ ՀԱԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻԶ

Հոդվածում քննարկվում է հեղինակի կողմից ուսումնասիրված աուտոդեստրուկտիվ դեպքերի հոգեբանական առանձնահատկությունները: Հետազոտությունները կատարվել են 2000-2005 թթ.-ին ՀՀ ԶՈՒ տեղի ունեցած ինքնասպանության, ինքնասպանության փորձերի և ինքնախեղման դեպքերի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազությունում և կայազորների զինվորական դատախազություններում առկա փաստերի հիման վրա: Պարզվում է, որ երբ բացակայում են հոգեբանական ադապտացիայի համար անհրաժեշտ պայմանները, ապա սահմանային հոգեվիճակները կարող են նպաստել ոչ միայն հակառակորդական գործողությունների, այլ նաև բազմաբնույթ հոգեֆիզիոլոգիական խախտումների ու հոգեմարմնական վնասվածքների առաջացման, ինչպես նաև սուիցիդների դրսևուման, իբրև փակուղային իրավիճակից դուրս գալու վարքային յուրահատուկ ձև:

Հետազոտության արդյունքում առաջարկվում է կանխարգելիչ միջոցառումների մեխանիզմներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ աուտոագրեսիա, սուիցիդ, սիմուլյատիվ ինքնավնասում:

Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ տեղի են ունենում սոցիալ-քաղաքական ու սոցիալ-մշակութային բնույթի աննախադեպ իրադարձություններ ու խոշորամասշտաբ փոփոխություններ, համաշխարհայնացման գործընթացներ, ճգնաժամեր, երբ քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային վերակառուցումների հետևանքով կազմալուծվում են նախկինում կայուն հասարակական կառուցվածքներն ու դրանց տարրերը, սոցիալական խմբերն ու անհատները հայտնվում են սահմանային իրավիճակներում, ինչն անմիջականորեն ազդում է հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի, մարդկանց տրամադրության, ինքնազգացողության, հոգեվիճակների, գնահատականների, դիրքորոշումների ու վարքի վրա: Նման պայմաններում մարդիկ հաճախ են ապրում հոգեկան խռովք, տարաբնույթ կոնֆլիկտներ, ֆրոստրացիաներ ու սթրեսներ, ներկայի ու ապագայի հանդեպ տագնապներ:

Սուիցիդն /ինքնսպանության երևույթն/ իր բնույթով, աճի տենդենցով և տարածվածությամբ անտիկ ժամանակներից ի վեր դարձել է ուշադրության և ուսումնասիրության առարկա: Այդ խորհրդավոր երևույթը փորձել են մեկնաբանել տարբեր բնագավառների գիտնականներ և մասնագետներ: Այստեղից էլ բխում է սուիցիդի վերաբերյալ ուսմունքի՝ սուիցիդոլոգիայի բարդ, գլոբալ և բազմաշերտային բնույթը:

Աշխարհում տարեկան ինքնասպանություն են կատարում 1.000.000 մարդ, իսկ ինքնասպանության փորձերի թիվը տասնյակ անգամ ավելի մեծ է (Վարդանյան 2008: 13): Համաշխարհային առողջապահական կազմակերպության կանխատեսումներով 2020թ.-ին մոտ 1.53 միլիոն մարդ ինքնասպան կլինեն, իսկ 10-20 անգամ ավել մարդիկ կիրականացնեն ինքնասպանության փորձ: Ստացվում է, որ միջին հաշվով, յուրաքանչյուր 20 րոպեն մեկ ինքնասպան կլինի 1 մարդ և յուրաքանչյուր 1-2 վրկ. հետո կկատարվի մեկ սուիցիդալ փորձ (Վարդանյան 2008: 21): Պարզվում է, որ սկսած 19-րդ դարից բոլոր երկրներում դիտվում է ինքնասպանությունների մշտական և հավասարաչափ աճ:

Հիմնախնդիրն այժմ ձեռք է բերել համաշխարհային հնչեղություն, քանի որ այն վաղ տարիքի անձանց լայն շերտերն ընդգրկելու հակվածություն է դրսևորում, այսինքն՝ երևույթը ձեռք է բերել երիտասարդանալու միտում: Այս առումով հիմնախնդրի ուսումնասիրության

արդիականությունը և հրատապությունը կասկած չեն հարուցում: Այն բխում է առաջին հերթին հասարակության կենսական պահանջներից, նրա զարգացման տենդենցներից և առողջ գործելակերպի ապահովումից:

Ինքնասպանության մակարդակը հաշվարկվում է յուրաքանչյուր 100.000 բնակչին ընկնող ցուցանիշով: Եթե այդ ցուցանիշը երկրում կազմում է 10 ավարտված սուիցիդներ, ապա ենթադրվում է, որ հասարակության մեջ առկա է հոգեբանական, սոցիալական բարեհարմարություն, եթե 10-20, ապա հասարակության մեջ առկա է որոշակի լարվածություն և եթե այդ ցուցանիշը գերազանցում է 20-ը, ապա ինքնասպանության մակարդակը համարվում է բարձր՝ ճգնաժամային:

Մեր կողմից նախկին մի շարք աշխատություններում (Վարդանյան 2007) և հողվածներում (Վարդանյան 2009) քննարկվել է ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի քանակական դրսևորումները ինչպես համաշխարհային մակարդակով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բնակչության առումով: Սույն հողվածում փորձ է արվելու գիտական վերլուծության ենթարկել ՀՀ զինված ուժերում առկա ինքնասպանության և ինքնասպանության փորձերի դրսևորումները: Հետազոտությունները կատարվել են 2000-2005 թթ.-ում ՀՀ ԶՈՒ-ում տեղի ունեցած ինքնասպանության և ինքնասպանության փորձերի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազությունում և կայազորների զինվորական դատախազություններում առկա 55 դեպքերի հիման վրա:

Ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարած 55 անձինք եղել են զինծառայողներ, որոնցից 3-ը՝ սպաներ, 52-ը՝ ժամկետային զինծառայողներ, ընդ որում ժամկետային զինծառայողները եղել են 18-23 տարեկան, իսկ պայմանագրային հիմունքներով ծառայողները՝ 30, 37 և 42 տարեկան: Նշված անձանցից ոչ ոք նախկինում հոգեկան հիվանդությամբ չի տառապել, հաշվառման մեջ չի գտնվել և նման հիվանդություններից չի բուժվել: Արձանագրված ինքնասպանություններից 23-ը և դրանց փորձերից 4-ը կատարվել են հրազենով, 25-ը կախվելու միջոցով, 17 փորձերից մեկական ինքնասպանություն կատարվել է ինքնաթուռավորման, բարձրությունից վայր ընկնելու միջոցով և սուր կտրող գործիքով բազկի շրջանում երակները կտրելու եղանակով: Փաստորեն ինքնասպանության ձևը պայմանավորված է ինքնասպանության միջոցի հասանելիությամբ:

Ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարած 55 զինծառայողներից 12-ը ինքնասպանության, իսկ 4-ը՝ ինքնասպանության փորձ են կատարել համաժառանգության կողմից դրսևորած ոչ կանոնադրային փոխհարաբերությունների հետևանքով, 5-ը՝ հոգեկան ընկճված և դեզադապտացիոն վիճակներում հայտնվելու պատճառով, 9-ը՝ ընտանեկան կամ այլ անձնական դրդապատճառներից ելնելով, 6-ը ինքնասպանություն կատարելու պահին գտնվել են աֆեկտի մեջ և հաշիվ չեն տվել իրենց գործողությունների համար, 3-ը ինքնասպանություն են կատարել ծառայել չցանկանալու պատճառով, 2-ը՝ ծանր սոցիալական վիճակի պատճառով, մեկը թմրամոլության հետևանքով և մեկը՝ գիշերամիզությամբ տառապելու պատճառով: Չորս դեպքերով ինքնասպանություն կատարելու դրդապատճառները չեն պարզվել:

Սրանք պաշտոնական հաղորդագրություններ են, սուիցիդալ ցուցանիշներ, որոնք պարունակում են ավարտված կյանքի մեծ ողբերգություններ, որոնք երևույթի կանխարգելման նպատակով պահանջում են մասնագիտական խոր վերլուծություն:

Սովորաբար ինքնասպանությունը սահմանվում է որպես հոգեբանական դեզադապտացիայի արդյունք, երբ անձը հոգեկանի ախտաբանական կամ սահմանային վիճակում ինքնակամ (ներքին կամ արտաքին ազդակներից դրդված) դիմում է լետալ ավարտով աուտոդեստրուկտիվ գործողությունների: Ինչպես նկատում ենք ցանկացած սուիցիդալ գործողություն ենթադրում է դեզադապտացիա և բոլոր սուիցիդենտների մոտ նախասուիցիդալ շրջանում դրսևորվել է առաջնային և երկրորդային դեզադապտացիա իր ֆունկցիոնալ և օրգանական, սոմատիկ հետևանքներով:

Զինակոչիկը, ընդգրկվելով զինվորական ծառայության, կախված նրա դաստիարակությունից և յուրացրած սոցիալական արժեքներից, չի կարողացել հարմարվել կանոնակարգային փոխհարաբերություններին, որտեղ իրենց ամբողջ սպեկտրով սկսում են գործել դեգադապտացիոն գործընթացները: Համապատասխան առիթի դեպքում սուիցիդալ որոշումը, որը ձևավորվել էր նախասուիցիդալ շրջանում, ի կատար է ածվում:

Զմոռանանք, քանի որ վերը նշված գործընթացի հիմքում ընկած են սուիցիդալ պատճառները, որոնք ամենատարբեր բնույթի կարող են լինել: Օրինակ՝ N զորամասում ծառայող Վ. Գ.-ն զորակոչվելուց անմիջապես առաջ դժբախտ պատահարից կորցրել էր եղբայրներին: Զորակոչվելով բանակ՝ շրջապատի կողմից նրա նկատմամբ դրսևորվել է ոչ կանոնադրային փոխհարաբերություններ: Վ. Գ.-ն դարձել էր չշփվող, անտրամադիր, մեկուսացված, ապագայի նկատմամբ անտարբեր, իսկ երբ դասակի հրամանատարը իրեն հանիրավի մեղադրել է գողություն կատարելու մեջ, նույն պահին հրամանատարական դիտակետում Վ. Գ.-ն ինքնաձիգով գլխի շրջանում կրակելու միջոցով ինքնասպանություն է կատարել: Տվյալ դեպքում ինքնասպանությանը նպաստել են իրադրային և անձնային գործոնների գուգակցումը (կամուլյատիվ աֆեկտ): Երբեմն ինքնասպանության պատճառը կարող է թաքնված լինել դեռևս անձի քաղաքացիական կյանքում: Անձը, հայտնվելով իրեն համար ոչ սովորական պայմաններում և չարժանանալով սպաների, զինծառայողների ուշադրությանը և օգնությանը, ապրելով հուզական ծանր վիճակներ՝ տանից ստացված դեստրուկտիվ լուրը առիթ կարող է հանդիսանալ սուիցիդալ փորձի համար: Օր.՝ նախաքննությամբ հիմնավորվել է, որ N զորամասի ժամկետային զինծառայող Կ. Մ.-ն զորամասի պահակակետի տարածքում իրեն ամրագրված ինքնաձիգով գլխի շրջանում կրակելու միջոցով ինքնասպանություն է կատարել: Պարզվել է, որ Կ. Մ.-ն ինքնասպանությունը կատարել է մոր անբարոյական վարքագծի մասին ստացած տեղեկատվության առիթով:

Բանակում կատարվող ինքնասպանությունների գերակշիռ մասը կատարվում է զինվորական ծառայության նկատմամբ կանխակալ բացասական դիրքորոշման հիման վրա: Եթե առաջ բանակում ծառայելը տղամարդու պարտադիր վարքագծային դրսևորում էր, հասարակությունը բարձր էր գնահատում նման վարքագիծը, մինչև անգամ առկա էր որոշակի ավանդույթներ (չծառայածին աղջիկ չէին տալիս), ապա ներկայումս այդպիսի դիրքորոշումը արժեզրկվել է և զորակոչիկը մեկնում է բանակ ծառայության նկատմամբ, սեփական անձի նկատմամբ բացասական դիրքորոշմամբ, որը հարմար առիթի դեպքում կարող է նպաստել սուիցիդալ վարքագծի դրսևորմանը:

Հետազոտվող Ա.Գ.-ն մեծ ցանկություն ուներ սովորելու բժշկական համալսարանում: Փոքր տարիքից սկսած ծնողները նրան ներարկել էին, որ բանակ չգնալու համար անպայման պետք է ընդունվել ԲՈՒՀ: Եվ որ բանակ են գնում միայն «թույլերը»: Սակայն չընդունվելով ԲՈՒՀ՝ Ա.Գ.-ն զորակոչվում է: Նա մշտապես տխուր էր, ագրեսիվ տրամադրված բոլորի նկատմամբ, ուներ հավակնությունների բարձր մակարդակ: Միշտ շեշտում էր, որ բանակը իր տեղը չի և իր ապագան խորտակվել է:

Ինչպես նկատում ենք Ա.Գ.-ի մոտ առկա էր ֆրուստրացված հոգեվիճակ: Նման դեպքում, համապատասխան առիթի պայմաններում հետերոագրեսիան կարող է վերաճել աուտոագրեսիայի: Միշտ պետք է հիշել, որ ինքնասպանությունը վերջին քայլն է, որին հանգեցնում են բազմաթիվ պատճառներ և յուրաքանչյուր պատճառ իր հերթին հանդիսանում է հետևանք անթիվ այլ պատճառների: Համաշխարհային առողջապահական կազմակերպությունը հաշվարկում է այդպիսի 800 պատճառներ, որոնցից՝ 41 % անհայտ է, 19 % վախն է պատժվելուց, 18% հոգեկան հիվանդությունները, 18% ընտանեկան հուսալքվածությունը, 6% -ը կիրքը, 3%-ը նյութական կորուստը, 1,4%-ը կյանքից հիասթափվածությունը, 1,2% -ը ֆիզիկական հիվանդությունը:

Ինքնասպանության երևույթը մուլտիդիսցիպլինար, բազմաօրբիտալային հիմնախնդիր է, որտեղ պատճառները խորն են, միահյուսված և երևույթը պետք է մեկնաբանվի համալիր ձևով՝

համապատասխան տարբեր մասնագետների ընդհանրացված կարծիքի հիման վրա: Այստեղից էլ բխում է ինքնասպանությունների մեկնաբանման տարատեսակ մոտեցումները: Ինքնասպանության երևույթը զինված ուժերում ունի որոշակի յուրահատկություններ:

Կանոնակարգային հարաբերությունները կանխարգելում են սուիցիդալ վարքային դրսևորումները, իսկ եթե այդպիսի հարաբերությունները ձևափոխվում են ոչ կանոնակարգային այլ ձևերով, ապա սկսում են ակտիվանալ դեգադապատացիոն գործընթացները՝ հանգեցնելով անձի դեպրեսիվ հոգեվիճակների, որն էլ համարվում է նախասուիցիդալ փուլ:

2004թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան Ռազմական ինստիտուտի կուրսանտ Վ.-ն Երևանի «Հաղթանակ» զբոսայգում ծառից պարանով կախվելու միջոցով կատարել է ինքնասպանություն: Հիմնավորվել է նաև, որ Վ.-ին ինքնասպանության են հասցրել նույն ինստիտուտի 6 կուրսանտներ՝ նրա նկատմամբ ոչ կանոնադրային փոխհարաբերություններ դրսևորելու պատճառով, ինչի համար նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ 375 հոդվածի 2-րդ մասերով և քրեական գործը 16.03.05թ. մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Զինծառայողների շրջանում առավել մեծ թիվ են կազմում ինքնախեղման դեպքերը, հատկապես սիմուլյատիվ աուտոդեստրուկցիաները, որոնց նպատակը զինված ուժերում ծառայությունից խուսափելն է: ՀՀ զլխավոր դատախազությունը ամենամյա կոլեգիայի նիստերում քննարկման առարկա է դարձնում նման փաստերը: Դրանք ամենատարբեր բնույթի են, մինչև անգամ՝ արտասովոր: Նրանք կարող են կուլ տալ օտար մարմիններ: «Օտար մարմինների» անվանացանկի մեջ նշվում է ամրաձող, գդալ, մեխ, մագնիս, կոճակ: Օրինակ՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում պատրաստվել է յուրօրինակ ցուցատախտակ, որտեղ ցուցադրված են դատապարտյալների մարմիններից վիրահատության ժամանակ հանած իրերը: Ամենազավեշտալի նման իրերի մեջ իր տեղն է զբաղեցնում նաև ջերմաչափը: Ամենավտանգավոր իրը կտրող-ծակող իրերի մեջ համարվել է նախկինում դատապարտված Արթուր Հերոյանի «չմարսած» 21,5 սմ մետաղյա ամրանը:

Մակերեսային կամ սիմվոլիկ ինքնասպանությունները, որոնք բաժանվում են կոմպուլսիվ, իրադրային և կրկնվող գործողությունների, իրենցից ներկայացնում են մարմնի տարբեր հատվածների ոչ խորը վնասվածքներ, որոնք վտանգավոր չեն կյանքի համար՝ կտրվածքներ մաշկի վրա, «պատկերներ» բառերի, նախշերի և այլ նշանների տեսքով, վերքերի բուժմանը խոչընդոտում, ոսկորների կանխամտածված վնասում, մարմնի մեջ ասեղներ մտցնելը, եղունգները կրծելը և այլն: Ինքնավնասումների այս տեսակները կարող են հանդիպել անձնավորության հակասոցիալական և սահմանային խանգարումների, հետտրավմատիկ սթրեսային և դիսոցիատիվ խանգարումների ժամանակ: Միմվոլիկ ինքնավնասումները ամենատարածվածներն են ու ավելի քիչ են արձանագրվում բժշկական ծառայությունների կողմից: Ինքնավնասումների հենց այս տեսակն են հաճախ կապվում հոգեբանական դժվարությունների ապրման և աուտոագրեսիայի նկատմամբ հոգեբանական նախատրամադրվածության առկայության հետ (Վարդանյան 2007: 97):

Ի մի բերելով կատարված հետազոտությունները՝ գտնում ենք, որ բանակում ինքնասպանությունների թվաքանակը կարելի է նվազեցնել՝ ձեռնարկելով կանխարգելիչ որոշակի միջոցառումներ.

- զինակոչիկին նախապատրաստել զինվորական ծառայության մինչև բանակում ծառայության գործընթացը՝ սկսած դպրոցական շրջանից,
- հայ զինվորի նկատմամբ հասարակության մեջ դրական դիրքորոշման ստեղծում: Զինվորական ծառայությունը ամեն մի հայ երիտասարդի համար պետք է լինի պարտադիր: Ծառայած անձանց համար պետք է սահմանվեն որոշակի արտոնություններ,

- գորակոչիկի հոգեբանական ոլորտի նախնական խորը վերլուծություն և ռեաբիլիտացիոն ծրագրի կազմում,
- բանակում միայն կանոնակարգային հարաբերությունների հաստատում, օրվա ռեժիմի խստագույն պահպանում,
- հոգեբանների ինստիտուտի ներմուծումը զինված ուժեր:

Առավել արդյունավետ է հոգեբանական աշխատանքները ուղղված սուիցիդի կանխարգելմանը: Այդ նպատակով գորամասի հոգեբանը յուրաքանչյուր զինվորի համար պետք է ունենա հատուկ մատյան, որտեղ գրառի զինծառայողի անամնեզը, զարգացման առանձնահատկությունների մասին տվյալներ, ինչպես նաև հոգեբանական երևույթները նկարագրող փաստեր՝ հատկապես հաշվի առնելով սուիցիդալ իրադրությունները, որոնք կապված են որոշակի կոնֆլիկտների հետ.

- կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են զինվորական գործունեությամբ և զինծառայողների միջանձնային հարաբերություններով,
- կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են զինծառայողի անձնային, ընտանեկան փոխհարաբերություններով,
- կոնֆլիկտներ, որոնք կապված են զինծառայողների սուիցիդալ վարքի հետ,
- կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են զինծառայողի առողջական վիճակով:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել ռիսկի խմբում գտնվող զինծառայողի ընտանեկան դաստիարակության վրա, հատկապես.

1. վաղ տարիքում հոր բացակայություն,
2. ընտանիքում հոգեկան հիվանդների առկայություն,
3. ընտանիքում «մայրիշխանության» ուժի փոխհարաբերություններ,
4. ընտանիքում հաճախակի դրսևորվող կոնֆլիկտներ,
5. անսահման խնամակալություն, դաստիարակություն «ընտանիքի կուռք» սկզբունքով,
6. ծնողների առկայության պայմաններում դաստիարակություն մանկատանը,
7. նախկինում ընտանիքում ինքնասպանության կամ ինքնասպանության փորձերի

առկայություն,

8. մոտ ընկերների կողմից ինքնասպանության կամ ինքնասպանության փորձերի դրսևորում,

9. տվյալ զինծառայողի կողմից սուիցիդալ փորձեր կամ աուտոդեստրուկտիվ այլ գործողությունների կիրառում:

Որքան նմանատիպ հարցերի պատասխաններում «այո»-ները շատ են, այնքան սուիցիդալ ռիսկը առավել մեծ է:

Սուիցիդալ վարքի դրսևորման հավանականությունը մեծանում է.

- ծառայության սկզբնական շրջանում,
- ռազմական հերթապահության ժամանակ գենքի առկայության պայմաններում,
- եթե ստորաբաժանման մեջ առկա է անբարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Սուիցիդենտներին բնորոշ է անձնային հետևյալ առանձնահատկությունները.

- անվստահություն,
- ցածր ինքնագնահատականի մակարդակ,
- ինքնաիրացման մեծ պահանջմունք,
- նրանց համար շատ կարևոր է զգացմունքայնությունը, փոխհարաբերությունների անկեղծությունը, ապրումակցման առկայությունը, ձգտումը միջավայրի կողմից հասկացվել,
- որոշում կայացնելու ժամանակ կամային դժվարություններ,
- լավատեսության և ակտիվության մակարդակի իջեցում, դժվարացում,
- հակվածություն ինքնամեղադրման, սեփական մեղքի չափազանցման,

- ինքնուրույնության բացակայություն,
- անձի ինֆանտիլություն, ոչ բավարար սոցիալականացում:

Զինճառայողների ինքնասպանությանը նպաստող պատճառներից և պայմաններից են՝

1. Զինվորական ծառայության դժվարությունները, ծառայողական տհաճությունները:

2. Զինվորական կոլեկտիվներում ոչ նպաստավոր բարոյահոգեբանական մթնոլորտը, կոնֆլիկտները զինճառայողների միջև:

3. Զինվորական կոլեկտիվներում օրինականության և սոցիալական արդարության բացակայությունը:

4. Ընտանեկան անախորժություններ, ամուսնալուծություններ, խանդ:

5. Բժշկական սպասարկման ոչ բարձր որակը:

6. Զինվորների ազատ ժամանցի միօրինակությունը և չհամապատասխանությունը նրանց հետաքրքրություններին և պահանջմունքներին:

Շատ կարևոր հանգամանք է անչափահաս զինակոչիկի անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

«Անչափահաս» տերմինը ինտեգրալ հասկացություն է, որն իր մեջ ներառում է դեռահասությունը /11-14, 15տ./ և պատանեկությունը /15-18տ./: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինքնասպանությունների մեծ քանակը բաժին է ընկնում հենց այս տարիքին: Այս շրջանում տեղի են ունենում բարոյական նորմերի յուրացում, արժեքների ձեռքբերում: Այս երևույթը կախված է ինչպես դեռահասի իմացական զարգացվածության մակարդակից, այնպես էլ դաստիարակությունից և օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ պայմաններից, ինչպես օրինակ՝ շրջապատող միջավայրի ազդեցություն, զանգվածային լրատվամիջոցներ և, ամենակարևորը, ընտանիքի ազդեցություն, որը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Այս ազդեցությունները համապատասխանաբար ձևավորում են անչափահասի բարոյական արժեքները: Անբարենպաստ սոցիալական միջավայրը հանգեցնում է տագնապայնության, գրգռվողականության, անզսպվածության, օտարվածության: Ամենից հաճախ հանդիպում են հետևյալ 7 հոգեվիճակները՝ չարացածություն, անբավարարվածություն, թշնամանք, վախ, անվստահություն, միայնակություն, անտարբերություն, որոնցից յուրաքանչյուրը, միավորվելով անբարենպաստ ներքին նախադրյալների /բարձր գրգռվողականություն, մտավոր զարգացման և կամքի թերություններ/, ստեղծում են այն հիմքը, որը հեշտացնում է բացասական արտաքին ազդեցությունների մուտքն անչափահասի հոգեկան աշխարհ:

Անչափահասին բնորոշ է ոչ բավարար կենսափորձը, դրա հետ կապված ինքնաքննադատության ցածր մակարդակը, կյանքի հանգամանքների բազմակողմանի գնահատման անկարողությունը, շարժողական և վերբալ բարձր ակտիվությունը, նմանակելու հակումը, անկախության սրացված զգացումը, իր համար ռեֆերենտային խմբում հեղինակության ձգտումը, նեգատիվիզմը, գրգռման և արգելակման անհավասարակշռությունը, որոնք սոցիալական անառողջ մթնոլորտի, հանցածին միջավայրի առկայության, համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի բացակայության դեպքում կարող է ձեռք բերել բացասական ուղղվածություն: Վերոնշյալ երևույթները նպաստում են նրան, որ անչափահասները հեշտությամբ ընկնեն դեպրեսիայի մեջ, որն արտաքին և ներքին լարվածության նկատմամբ անձի հակազդումն է: Ինչպես հայտնի է, դեպրեսիան դրսևորվում է անձի նախասուիցիդալ շրջանում: Հատկապես այս տարիքի անձանց մոտ առկա է դեստրուկտիվ հակումներ:

Այսպիսով՝ անչափահասությունը մարդու կյանքի այն սենզիտիվ փուլն է, որի ընթացքում մարդը հավասարապես ընկալունակ է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունների նկատմամբ: Եթե զինվորը գտնվում է անբարենպաստ գործոնների ազդեցության տակ, ապա վերջիններս, միավորվելով այս տարիքին բնորոշ առանձնահատկությունների հետ, առաջացնում են հակազդում, որը կարող է ամենատարբեր

ձևեր ունենալ: Արդյունքը կարող են հանդիսանալ շեղվող վարքի տարատեսակ դրսևորումները, որոնք կամ ձեռք կբերեն սոցիալական վտանգավորության աստիճան, այսինքն՝ կկատարվի հակաիրավական արարք, կամ էլ, չկարողանալով դուրս գալ ստեղծված կոնֆլիկտային իրավիճակից, անձը կդիմի ինքնասպանության: Սուիցիդալ վարքը «փախուստի ձև է», որը հանդիսանում է սոցիալական իրականությունը գիտակցաբար կամ անգիտակցաբար չընդունելու, այդ իրականությունը՝ հասարակության մեջ ընդունված եղանակներով հակազդելու անկարողության կամ ցանկության բացակայության արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Վարդանյան, Կ. Ե. (2004). Սուիցիդը՝ որպես շեղվող վարքի դրսևորման յուրահատուկ ձև, «Հոգեբանությունը և կյանքը», N1-2, Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2004). Ինքնասպանությունը շեղվող վարքի կոմպլեքսում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական տեղեկագիր, N1, Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2007). Ինքնասպանության վիճակագրական մեկնաբանումը, Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, ԵՊՀ-ի Միջբուհական գիտական հոգվածների ժողովածու, Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2008). Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շղթայում/մենագրություն/, «Դավիթ թագավոր», Երևան:
- Վարդանյան, Կ. Ե. (2009). Հայաստանի Հանրապետությունում ինքնասպանության վիճակագրական վերլուծությունը, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները» միջբուհական կոնսորցիումի գիտական պարբերական 3 (6), Երևան:
- Vardanyan, K. E (2010). Unfavorable Social Environment As The Key Suicidogen Reason. 21- րդ դարի մարտահրավերները և մարդկային զարգացման ասպեկտները, Միջազգային գիտական կոնֆերանսի հոգվածների ժողովածու, Երևան: